ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում
և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող
հասարակական Դիտորդների խումբ

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական
հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն
իրականացնող հասարակական դիտորդական խմբի 2014-2015
թվականների գործունեության

# Հաշվետվություն



Հայաստան 2016

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ԽՈՒՄԲ

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խմբի 2014-2015 թվականների գործունեության

# Հաշվետվություն

**Հայաստան 2016**

Բաց Հասարակության Հիմնադրամներ Հայաստան

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում եվ մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդների խումբ

Սույն հաշվետվությունում տեղ գտած տեսակետների և վերլուծությունների հեղինակը ՀՀ Արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարական դիտորդական խումբն է, և նյութի բովանդակության համար պատասխանատու է միայն Դիտորդական խումբը: Դրանք արտահայտում են հեղինակների կարծիքը և հաստատված չեն Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի (ԲՀՀ-Հայաստան) կամ խորհրդի կողմից, հետևաբար չեն ներկայացնում ԲՀՀ-Հայաստանի դիրքորոշումներն ու տեսակետները: Սույն հաշվետվության բովանդակությունը կարող է չհամընկնել ԲՀՀ-Հայաստանի տեսակետներին:

Սույն հաշվետվության թողարկումը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի ֆինանսական օժանդակության շնորհիվ՝ «Իրավունք և քրեական արդարադատություն» ծրագրի շրջանակում:

# Բովանդակություն

Ամփոփում ........ 5

Ներածություն ........ 9

2014-2015 թվականների հրատապ հաշվետվությունները և բարձրացված խնդիրները ...... 11

Բնակեցման պայմանները ՀՀ քրեակատարողական հիմնարկներում 2014-2015 թվականներին ........ 15

Բնակեցման պայմանները ........ 22

Սննդի և անձնական հիգիենայի պարագաների հասանելիությունը և որակը ........ 28

Սննդի կազմակերպում ........ 28

Սննդի որակը ........ 31

Սննդամթերքի առկայությունը և պահեստավորման պայմանները ........ 38

Դիետիկ սնունդ ........ 43

Հիգիենա ........ 44

Անձնական հիգիենայի և անկողնային պարագաներ ........ 46

Քրեակատարողական հիմնարկներում խոցելի խմբերի իրավունքների մասին ........ 50

Պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատում. 2014-2015թթ. իրավիճակի ներկայացում ........ 56

Արգելված իրերի հայտնաբերման արդյունքում կիրառված միջոցների և կոռուպցիոն ռիսկերի գնահատում ........ 61

Հավելված 1. ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԱՌԿԱ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԻՍԿԵՐԻ ՎԵՐԱՀԱՆՈՒՄ ........ 64

Հավելված 2. Բուժսպասարկում ........ 87

Մեկնաբանություններ. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի 2014-2015 թվականների գործունեության տարեկան հաշվետվության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության մեկնաբանություններ ........ 102

# Հապավումների ցանկ

**Խումբ/Դիտորդական խումբ** Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խումբ

**ԲՀՀ-Հայաստան** Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան

**ՀՀ ԱՆ** Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն

**ՀՀ ԱՆ ՔԿՎ** ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչություն

**ՔԿՀ** քրեակատարողական հիմնարկ

**ՁՊՎ** ձերբակալված անձանց պահելու վայր

**ՄԻԵԴ** Մարդու իրավունքների եվրոպական դատարան

**ԽԿԿ** Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտե (Խոշտանգումների կանխարգելման կոմիտե)

**ՄԱԿ** Միացյալ ազգերի կազմակերպություն

**ԵԽ** Եվրոպայի խորհուրդ

**ԱՀԿ** Առողջապահության համաշխարհային կազմակերպություն

**ՄԱԿ** Միավորված ազգերի կազմակերպություն

**ԱԴ հիմնադրամ** «Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամ

**ՄԻԱՎ** մարդու իմունային անբավարարության վիրուս

**ՁԻԱՀ** ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշ

**ԹՆՕ** թմրամիջոցների ներերակային օգտագործող

## Ամփոփում

Ամփոփելով Հայաստանի Հանրապետության (ՀՀ) արդարադատության նախարարության (ԱՆ) քրեակատարողական հիմնարկներում (ՔԿՀ) և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի (այսուհետ՝ Խումբ) ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում 2014-2015 թվականներին իրականացրած դիտարկումներն, ընդհանուր առմամբ, կարող ենք արձանագրել, որ համակարգում շարունակում են լուրջ խնդիր մնալ հետխորհրդային տարիներին ձևավորված քրեական ենթամշակույթը, բուժսպասարկման հասանելիությունը և որակը, տրամադրվող սննդի որակը և օգտակարությունը, պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովների (Անկախ հանձնաժողովի) գործունեության անարդյունավետությունը, ինչպես նաև՝ ոլորտը կանոնակարգող օրենսդրական ակտերի անկատարությունը:

Վերջին երկու տարիների ընթացքում (2014-2015թթ.) ազատությունից զրկված անձանց իրավունքների ապահովման ոլորտում նկատելի էին պետական քաղաքականության մակարդակով ձեռնարկված ջանքերը: Չնայած այդ հանգամանքին՝ քաղաքականության իրագործման մակարդակում ՔԿՀ-ներում 2015թ. ավարտին վերը նշված խնդրահարույց ոլորտներում ցայտուն փոփոխություններ դեռևս տեղի չեն ունեցել: Դա պայմանավորված է նրանով, որ այս ոլորտը խորհրդային համակարգի փլուզումից ի վեր չի ենթարկվել լուրջ և համակարգված փոփոխությունների:

Անդրադառնալով ոլորտային քաղաքականություն մշակողների (ՀՀ ԱՆ) մակարդակով տեղի ունեցած փոփոխություններին՝ նշենք, որ փոփոխություններ սկսեցին տեղի ունենալ 2014թ երկրորդ կիսամյակից: ՀՀ ԱՆ-ն սկսեց աշխատել ավելի թափանցիկ և բաց քննադատությունների ու առաջարկությունների համար: Խումբը սկսեց պարբերաբար հանդիպել ՀՀ ԱՆ, ՀՀ ԱՆ Քրեակատարողական վարչության (ՔԿՎ) ներկայացուցիչների հետ՝ համակարգում բացահայտված խնդիրների քննարկման և հնարավոր լուծումներ գտնելու նպատակով: ՀՀ ԱՆ-ի գործելաոճի փոփոխության արդյունքում բարելավվեց ազատությունից զրկված առանձին անձանց իրավունքների ապահովման մակարդակը. 2014-2015թթ.-ին լուծում ստացան ազատությունից զրկված մի քանի անձանց իրավունքների հետ կապված խնդիրներ, որոնք կարող են նախադեպային լինել և հանգեցնել համակարգում դրական փոփոխությունների:

2014-2015թթ. դիտարկումների արդյունքում վերհանված խնդիրներն են՝

- պահման պայմանները,
- ՔԿՀ-ների գերբեռնվածությունը,
- բուժսպասարկման մատչելիությունը և որակը,

- սննդի որակը և օգտակարությունը,
- Անկախ հանձնաժողովի գործելաոճը,
- օրենքների և ենթաօրենսդրական ակտերի բացերը, հակասությունները և թերի կարգավորումները,
- խորհրդային տարիներին բնորոշ գործելաոճը և քրեական ենթամշակույթը,
- կոռուպցիայի դրսևորումները:

Վերը նշված խնդիրներն ավելի խոցելի են դարձնում ազատությունից զրկված անձանց՝ ինչպես ՔԿՀ-ներում, այնպես էլ պատիժը կրելուց հետո՝ դժվարացնելով այդ անձանց վերաինտեգրումը հասարակության մեջ: Արդյունքում մեծանում է կրկնահանցագործության ռիսկը և վատթարանում է ազատազրկման ձևով պատիժ կրող անձանց առողջական վիճակը:

Շարունակում է լուրջ խնդիր հանդիսանալ այն, որ դեռևս չեն գործում պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի հետ անհամատեղելի հիվանդությունների հիմքերով պատժի հետագա կրումից ազատելու, ինչպես նաև՝ մի ուղղիչ հիմնարկից մեկուսացվածության առավել ցածր աստիճան ունեցող մեկ այլ ուղղիչ հիմնարկ տեղափոխելու ինստիտուտները:

Անկախ հանձնաժողովի աշխատանքում որևէ դրական փոփոխություն չի նկատվում, ավելին՝ դիտարկելով վիճակագրությունը, պարզ է դառնում, որ այս ինստիտուտը ավելի անմատչելի է դառնում հասարակ ազատազրկված[1] անձանց համար և պայմանական վաղաժամկետ ազատվող դատապարտյալների թիվը գնալով էլ ավելի է փոքրանում:

Պատժի կրման հետ անհամատեղելի հիվանդությունների հիմքով պատժի կրումից ազատման ոլորտում տեղի են ունեցել նախադեպային տեղաշարժեր: Դրական տեղաշարժն ընդունված պրակտիկայի վերածելու համար անհրաժեշտ է տվյալ ոլորտի իրավական ակտերի հստակեցում:

Բուժսպասարկման մատչելիությունը և որակը նույնպես շարունակում են խնդրահարույց մնալ ազատազրկված անձանց համար: Դրա պատճառներից են որակյալ մասնագետների պակասը (այդպիսի մասնագետների համար այս ոլորտը հրապուրիչ չի համարվում), որոշումներ կայացնելիս ՔԿՀ-ների բուժանձնակազմի կախվածությունը հիմնարկի ադմինիստրացիայից, դեղամիջոցների ոչ ճիշտ բաշխումը, բժշկական ենթակառույցների նյութատեխնիկական ոչ բավարար հագեցվածությունը, բժշկական աջակցության տրամադրելու վերաբերյալ որոշումների կայացման հապաղումը բուժանձնակազմի և հիմնարկի այլ ստորաբաժանումների կողմից: 2014թ. երկրորդ կեսից սկսած՝ այս խնդիրների լուծման ուղղությամբ նույնպես ձեռնարկվեցին որոշ քայլեր:

Ազատազրկման վայրերում շարունակում է լուրջ խնդիր մնալ խորհրդային տարիներից մնացած՝ «ոչ ֆորմալ» օրենքների կիրառման պրակտիկան և

[1] «Հասարակ ազատազրկված անձ» ասելով՝ ի նկատի ունենք այն ազատազրկված անձանց, որոնք չունեն ֆինասական կարողություններ և/կամ բարձր պաշտոնյաների հովանավորություն:

հանցավոր հիերարխիկ/միջանձնային համակարգի պահպանման մշակույթը: Դրանք, որոշ դեպքերում, ՔԿՀ-ների գործառնության համար կարող են ավելի որոշիչ դեր ունենալ, քան ՀՀ իրավական ակտերը և միջազգային փաստաթղթերը: Այս ամենը հաճախ սպառնալիք է դառնում ազատազրկված անձանց կյանքի և առողջության համար, ինչպես նաև նսեմացնում է ՔԿՀ-ների հիմնական գործառույթներից մեկի՝ դատապարտված անձանց ուղղման դերը: 2015թ.-ին գրանցվեց մի դեպք, երբ քրեական ենթամշակույթի արդյունքում ձևավորված միջանձնային հիերարխիկ համակարգը կիրառվեց ճնշում գործադրելու ՔԿՀ-ում գտնվող մի անձի վրա, ով հասարակության մի մասի կարծիքով, անազատության մեջ էր հայտնվել «քաղաքական» հետապնդումների արդյունքում[2]: Թեև Խումբը գնահատում է վերոնշյալ անձի և խոցելի վիճակում հայտնված այլ ազատազրկված անձանց նկատմամբ ճնշումների կանխարգելմանն ու նվազեցմանն, անվտանգության ապահովմանն ուղղված՝ ՀՀ ԱՆ և ՔԿՎ կողմից ձեռնարկված քայլերը, սակայն կարծում է, որ անհրաժեշտ է բացառել ճնշումների պրակտիկան, ավելի հստակ կերպով և նախօրոք գնահատել հնարավոր ռիսկերը՝ կանխարգելելով անձի կյանքի և առողջության համար վտանգավոր, ռիսկային իրավիճակները:

ՔԿՀ-ներում առկա խնդիրների շարքում դեռևս պահպանվում է նաև կոռուպցիայի արատավոր պրակտիկան: Հաշվետու ժամանակաշրջանում իրականացրած դիտարկումները ցույց են տվել, որ 2013թ.-ին Խմբի կողմից արձանագրած՝ տարատեսակ արտոնությունների համար կատարվող ոչ ֆորմալ վճարումների գնացուցակում տեղի է ունեցել գնաճ:

Կոռուպցիոն ռիսկերը դրսևորվում են ոչ միայն միկրո, այլ նաև՝ մակրո մակարդակում: 2014թ. ընթացքում կատարված դիտարկումները հայտնաբերեցին, որ մեծ կոռուպցիոն ռիսկեր է պարունակում ՔԿՎ կողմից իրականացվող գնումների գործընթացը և նյութատեխնիկական միջոցների բաշխումն ու կառավարումը:

Ազատազրկման վայրերում առավել վատ վիճակում շարունակում են մնալ տարբեր խոցելի խմբերի ներկայացուցիչները: Հաշմանդամություն ունեցող ազատազրկված անձանց համար չկան համապատասխան շենքային պայմաններ, ժամանակին չեն իրականացվում թմրամիջոցներից կախում ունեցող անձանց մոտ զրկանքի համախտանիշի պատճառով առաջացած առողջական վիճակի բարելավմանն ուղղված քայլերը, ամենուրեք շահագործվում են ոչ ֆորմալ կանոններ/նորմեր խախտած անձինք և նույնասեռականները: Վերջին երկու խմբերի նկատմամբ առկա է նաև մեկուսացման (սեգրեգացիայի) դրսևորում:

2014-2015թթ.-ին շարունակում է վիճելի մնալ ՔԿՀ-ներում իրականացվող ծառայողական քննությունների արդյունավետության և թափանցիկության խնդիրը: Ոչ բոլոր դեպքերում են ՔԿՀ-ների կարգազանց աշխատակիցները պատասխանատվության ենթարկվում, որի պատճառով չեն կանխարգելվում

[2] Խնդիրը լուծվեց Դիտորդական խմբի, ԱՆ-ի, ԱՆ ՔԿՎ-ի և ՔԿՀ-ի համատեղ ջանքերով:

ապօրինությունները: Եթե համեմատում ենք ՔԿՀ-ներում ազատազրկված անձանց մոտից հայտնաբերված արգելված իրերի քանակը կամ այդ իրերը պահելու համար ազատազրկված անձանց նշանակված տույժերի քանակը) և արգելված իրեր հիմնարկներ բերելու համար պատասխանատվության ենթարկված ՔԿՀ-ների աշխատակիցների թիվը, ապա հայտնաբերված արգելված իրերի թիվը շատ ավելին է: Այդ ակնհայտ տարբերությունն էլ հենց փաստում է խախտում թույլ տված աշխատակիցներին ոչ բոլոր դեպքերում պատասխանատվության ենթարկելու խնդրի մասին:

Ազատությունից զրկված անձանց համար շարունակում է լուրջ խնդիր մնալ ՔԿՀ-ների գերբնակեցումը: Օրինակ՝ դիտարկումների ընթացքում եղել են դեպքեր, երբ 6 հոգու համար նախատեսված խցերում (1 անձի համար 4 քմ հաշվարկով) պահվել է 14 և ավելի ազատազրկված անձ: Ավելին, թեև ՀՀ օրենսդրությամբ նախատեսված է 1 խցում բնակեցնել առավելագույնը մինչև 6 ազատազրկված անձ՝ կախված ուղղիչ հիմնարկի տիպից, սակայն պրակտիկայում շարունակում են շահագործվել ՔԿՀ-ներ, որտեղ մեկ սենյակում բնակվում է մինչև 45 դատապարտյալ: Խցային համակարգ ունեցող, համեմատաբար նոր ՔԿՀ-ներում նույնպես ոչ բոլոր դեպքերում են ապահովվում ՀՀ օրենսդրությամբ և միջազգային նորմերով նախատեսված չափանիշները: Այս ամենը ազատությունից զրկված անձանց ֆիզիկական և հոգեկան առողջության վատթարացման, ազատությունից զրկված անձանց միջև հարաբերությունների լարման, ՔԿՀ-ների աշխատակիցների գերծանրաբեռնվածության և իրենց գործառույթները ոչ պատշաճ իրականացնելու պատճառ է դառնում:

Նշենք, որ գերբնակեցման խնդրի հիմնական պատճառը դատարանների կողմից ավանդական դարձած՝ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու պրակտիկան և քննչական վարույթ իրականացնող մարմինների իներտությունն է:

ՀՀ ԱՆ կողմից 2014թ.-ին նոր հիմնարկի՝ «Արմավիր» ՔԿՀ-ի բացումը, ինչպես նաև՝ այլընտրանքային պատիժների կիրառման խթանմանն ուղղված նախաձեռնությունը՝ Պրոբացիայի ծառայության ներդրման նախագիծը և նոր Քրեական օրենսգրքի մշակման գործընթացը դրական քայլեր են՝ գերբնակեցման խնդրի լուծման ուղղությամբ: Նշենք նաև, որ այս փոփոխությունները պահանջում են համապատասխան փոփոխություններ նաև այլ համակարգերում:

Այսպիսով՝ վերը թվարկված և մի շարք այլ խնդիրների լուծման համար անհրաժեշտ է համակարգված գործողությունների շարունակական իրականացում և կամք: Դրանք չիրագործելու և/կամ ոչ համալիր մոտեցում ցուցաբերելու դեպքում ազատությունից զրկված անձանց իրավունքների պաշտպանությունը չի կարող լինել արդյունավետ: Այս ամենի հետ մեկտեղ, Խումբը խիստ կարևորում է ՀՀ ԱՆ և ՀՀ ԱՆ ՔԿՎ կողմից որդեգրված թափանցիկ, հաշվետվողական, համագործակցային և նախաձեռնողական աշխատաոճի ամրապնդումն ու խորացումը: Այդ պարագայում միայն պետությունը կարող է ապահովել իր կողմից ստանձնած՝ ազատությունից զրկված անձանց իրավունքների և, դրանցից բխող, ամբողջ հանրության շահերի ապահովումը:

# Ներածություն

2014-2015թթ. ընթացքում Խումբը բազմաթիվ այցելություններ է կատարել ՀՀ ԱՆ բոլոր ՔԿՀ-ներ: Այցելությունների գերակշռող մասը կատարվել է ստացված ահազանգերի հիման վրա, որոնց հիմնական մասը եղել է բուժսպասարկման, վաղաժամկետ ազատման, վերաբերմունքի, քրեական գործերի և արդարադատության իրականացման վերաբերյալ դժգոհությունների պատճառով ինքնավնասումների և հացադուլների հետ կապված: Հաշվետու ժամանակահատվածում Խումբը ստացել է 326 ահազանգ, (2014թ.՝ 190 ահազանգ, 2015թ.՝ 136 ահազանգ): Նույն ժամանակահատվածում տարբեր հիմնարկներին և մարմիններին ուղղվել է 143 գրություն (2014թ.՝ 68 գրություն, 2015թ.՝ 75 գրություն), որոնք վերաբերել են քրեակատարողական հիմնարկների իրավիճակին, կալանավորված անձանց և դատապարտյալների իրավունքների խախտումներին և այլ խնդիրներին: Ուղարկվել է 23 հրատապ (2014թ.՝ 11, 2015թ.՝ 12) և 25 ընթացիկ (2014թ.՝ 8, 2015թ.՝ 17) հաշվետվություն: Հաշվետվությունները վերաբերել են քրեակատարողական հիմնարկներում գտնվող անձանց իրավունքների այնպիսի խախտումներին, որոնք կարիք են ունեցել հրատապ արձագանքման, ինչպես նաև՝ Խմբի աշխատանքները խոչընդոտելուն:

2014-2015թթ. ընթացքում Խումբն իրականացրել է իրազեկման տարբեր գործողություններ՝ ազատազրկված անձանց և նրանց ազգականների հետ անհատական հանդիպումների և խորհրդատվության տրամադրման, հեռուստահաղորդումների, մամուլի ասուլիսների, թեմատիկ կլոր սեղանների մասնակցելու միջոցով, ինչպես նաև՝ մամուլում և Խմբի կայքում արված հրապարակումներով: Իրազեկումը հիմնականում վերաբերել է ՔԿՀ-ներում առկա խնդիրներին, դրանց հնարավոր լուծումներին, ազատությունից զրկված անձանց իրավունքներին:

ՀՀ ԱՆ-ի գործելաոճի փոփոխությունից հետո՝ 2014թ. երկրորդ կիսամյակում Խումբը սկսել է պարբերաբար հանդիպել ՀՀ ԱՆ և ՀՀ ԱՆ ՔԿՎ աշխատակիցների հետ՝ արձանագրված խնդիրների լուծման և հետագայում նմանատիպ խնդիրների կանխարգելման նպատակով: Արդյունքում՝ հնարավոր դարձավ ավելի արագ արձագանքել ՔԿՀ-ներում բացահայտված խնդիրներին և լուծում տալ դրանց: Բացի այդ, ՀՀ ԱՆ-ն սկսեց ավելի աչալուրջ և հետևողական լինել Խմբի կողմից բարձրացված ցանկացած հարցի նկատմամբ:

Աշխատանքային հանդիպումների ընթացքում քննարկվել են այնպիսի հարցեր, ինչպիսիք են ազատությունից զրկված անձանց անվտանգությունը,

բուժսպասարկումը, հիմնարկների տնտեսական խնդիրները և այլն, որոնց շուտափույթ լուծման հնարավոր ուղիներ են նախանշվել:
Ազատությունից զրկված անձանց իրավունքների ապահովման որակի բարձրացման նպատակով Խումբը 2014-2015թթ. ընթացքում սկսել է ավելի սերտ համագործակցել ՀՀ ոստիկանության ձերբակալված անձանց պահելու վայրերում (ՁՊՎ) վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խմբի հետ, որի արդյունքում հնարավոր է եղել բացահայտել որոշ իրավախախտումներ: Դրանցից են՝ ՁՊՎ-ներում ձերբակալված անձանց վնասվածքները չարձանագրելը (այդ վնասվածքները բացահայտվել և արձանագրվել են ՔԿՀ տեղափոխվելուց հետո զննման արդյունքում), անազատության մեջ գտնվելու առավելագույն՝ 72 ժամը խախտելու, ՁՊՎ աշխատակազմի, քննիչների կողմից կատարված իրավախախտումներ:

Բացի այդ, Խումբը շարունակել է համագործակցել փաստաբանների և հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև՝ մասնագիտական, միջազգային կազմակերպությունների և դիվանագիտական ներկայացուցչությունների հետ: Համագործակցությունն ուղղված է եղել ՔԿՀ-ներում պահվող անձանց անհատական և ոլորտի համակարգային խնդիրների լուծմանը:

2014-2015թթ. ընթացքում Խումբն ուսումնասիրություններ է կատարել, մասնավորապես, ՔԿՀ-ներում բուժսպասարկման որակի և մատչելիության, գնումների քաղաքականության և դրանից բխող կոռուպցիոն հնարավոր ռիսկերի կառավարման, առկա ռեսուրսների արդյունավետ համակարգման, հատուկ միջոցների և տույժերի կիրառման, սանիտարահիգիենիկ պայմանների, գերբնակեցման, սննդի հասանելիության և որակի և այլ խնդիրների վերաբերյալ: Այդ ուսումնասիրությունների արդյունքները ներկայացված են ստորև:

Սույն հաշվետվությանը կից առանձին հավելվածներով ներկայացված են 2014 թվականին իրականացված՝ «Քրեակատարողական հիմնարկներում առկա կոռուպցիոն ռիսկերի վերհանում» և «Բուժսպասարկում» ուսումնասիրությունները (Հավելված 1 և Հավելված 2):

## 2014-2015 թվականների հրատապ հաշվետվությունները և բարձրացված խնդիրները

Դիտորդական խմբի Կարգի[3] համաձայն՝ վերահսկողությունն իրականացվում է քրեակատարողական հիմնարկներ և մարմիններ այցելություններ կատարելու և կատարված այցելությունների հիման վրա ՀՀ արդարադատության նախարարին և հասարակությանը հաշվետվություններ ներկայացնելու ձևով: Ներկայացվում են երեք տեսակ հաշվետվություններ՝ *ընթացիկ, տարեկան և հրատապ,* որոնց կապակցությամբ ՀՀ ԱՆ-ն տալիս է իր մեկնաբանությունները: Հրատապ հաշվետվություններում ներկայացվում են քրեակատարողական ծառայությունում բացահայտված մարդու իրավունքների կոպիտ խախտումների մասին փաստեր, եզրակացություններ, որոնք պահանջում են հրատապ լուծումներ: Հրատապ հաշվետվության կապակցությամբ մեկնաբանությունները տրվում են երեք օրվա ընթացքում:

2014-2015թթ. ընթացքում Խումբը ներկայացրել է, համապատասխանաբար, 11 և 12 հրատապ հաշվետվություն: 2014թ.-ին Խմբի ներկայացրած հրատապ հաշվետվություններից 5-ը վերաբերել է ազատությունից զրկված անձանց առողջական վիճակին, 2-ը՝ անձանց անվտանգությունն ապահովելուն և 1-ական հաշվետվություն եղել է պատժի հետ անհամատեղելի հիվանդության հիմքով ազատելու, նամակագրության գաղտնիության խախտման, անձին քրեակատարողական հիմնարկում պահելու օրինականության և հացադուլ հայտարարած անձին մեկուսացնելու վերաբերյալ:

2015թ.-ին ներկայացված հրատապ հաշվետվություններից 6-ը վերաբերել է ազատությունից զրկված անձանց առողջական վիճակին, 2-ը՝ անձանց անվտանգությունն ապահովելուն և 1-ական հաշվետվություն եղել է պատժի հետ անհամատեղելի հիվանդության հիմքով ազատելու, անձին պատժախցում անհիմն պահելու, ազատությունից զրկված անձանց նկատմամբ ենթադրյալ բռնությունների և հացադուլ հայտարարած անձին մեկուսացնելու վերաբերյալ:

----------

Այսպես, ուշադրության են արժանի ստորև ներկայացվող հաշվետվությունները:

Խումբը 12.06.2014թ. N14-27 հրատապ հաշվետվությամբ դիմել էր ՀՀ ԱՆ՝ նշելով, որ դատապարտյալ Ա.Գ.-ի հիվանդությունը համապատասխանում է ՀՀ կառավարության 26.05.2006թ. թիվ 825-Ն որոշման հավելված 2-ով հաստատված՝ պատիժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդությունների ցանկի 6-րդ կետին: Վերոգրյալի հիման վրա Խումբը խնդրել էր անհապաղ ընթացք տալ ծանր հիվանդության հիմքով դատապարտյալ Ա.Գ.-ին պատժի հետագա կրումից ազատելու գործընթացին, ինչպես նաև իրավական

[3] ՀՀ արդարադատության նախարարի հրաման թիվ ՔՀ-66-Ն, 18 նոյեմբերի, 2005 թ., ք. Երևան

գնահատական տալ ՔԿՎ բժշկական սպասարկման բաժնի պետի կողմից իր լիազորությունների սահմանազանցման դեպքին:

Նշված հրատապ հաշվետվությանն ի պատասխան՝ ՀՀ ԱՆ-ից տեղեկացրել են, որ հանձնարարվել է դատապարտյալ Ա.Գ.-ին տեղափոխել ՀՀ առողջապահության նախարարության ուռուցքաբանության ազգային կենտրոն՝ ախտորոշումը ճշտելու և նեղ մասնագիտական եզրակացություն ստանալու համար: Հետագայում Ա.Գ.-ն Կառավարության թիվ 825-Ն որոշմամբ հաստատված ծանր հիվանդության հիմքով ազատվել էր պատժի կրումից:

----------

Խումբը 16.12.2014թ. N14-60 հրատապ հաշվետվությամբ դիմել էր ՀՀ ԱՆ՝ հայտնելով, որ դատապարտյալ Ա.Շ.-ի դիմումի համաձայն՝ ՔԿՀ աշխատակիցը սպառնացել է իրեն և առաջարկել ՀՀ հատուկ քննչական ծառայությունից հետ վերցնել իր կողմից ներկայացված՝ հանցագործության մասին հաղորդումը, այլապես իր նկատմամբ գործ կհարուցեն: Խումբը մտահոգություն էր հայտնել, որ տվյալ գործողություններով փորձ է արվել ազատազրկման մեջ գտնվող անձին ստիպել հրաժարվել իր իրավունքների իրականացումից և խոչընդոտել գործի արդյունավետ քննությանը: Խումբը դիմել էր միջադեպի վերաբերյալ քննություն իրականացնելու և մեղավորներին պատժելու պահանջով՝ հետագայում նմանատիպ դեպքերի կրկնությունը բացառելու համար:

Այդ հաշվետվությանն ի պատասխան՝ ՀՀ ԱՆ-ից տեղեկացրել են, որ իրենց կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքները հիմք են տալիս եզրակացնելու, որ դատապարտյալ Ա.Շ.-ի հայտարարությունները հիմնավոր չեն և չեն համապատասխանում իրականությանը, որով վերջինս նպատակ է հետապնդել մտացածին պատճառաբանություններով շեղելու հետաքննության ընթացքը:

Նշված հաշվետվության վերաբերյալ ՀՀ ԱՆ մեկնաբանությունը Խումբը համարում է անհիմն և, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՔԿՀ-ներում գտնվող անձինք ավելի անպաշտպան են, գտնում է, որ դատապարտյալ Ա.Շ.-ի դիմումում բարձրաձայնված հարցերն արժանահավատ են:

----------

Խումբը 25.12.2014թ. N14-61 հրատապ հաշվետվության մեջ նշել էր, որ դատապարտյալ Կ.Ս.-ի բժշկական փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզվել է, որ դրանցում առկա է քաղաքային հիվանդանոցից հրավիրած բժիշկների երկու գրառում, ըստ որոնց՝ անհրաժեշտ է վիրահատություն կատարել, ինչպես նաև առկա է «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ հրավիրված բժիշկների կողմից կատարված գրառում, ըստ որի՝ վիրահատության անհրաժեշտություն չկա: Կ.Ս.-ին «ԴՀ» տեղափոխելու մասին ՔԿՀ դիմումը ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչությունը մերժել էր: Խումբը խնդրել էր միջոցներ ձեռնարկել Կ.Ս.-ին անհրաժեշտ վիրահատությունը կազմակերպելու ուղղությամբ:

Նշված հաշվետվությանն ի պատասխան՝ ՀՀ ԱՆ-ից տեղեկացրել են, որ դատապարտյալ Գ.Ս.-ն առաջիկա էտապով կտեղափոխվի ՀՀ արդարադատության նախարարության «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ՝ վիրահատության նպատակով:

----------

Խումբը 26.02.2015թ. N15-10 հրատապ հաշվետվությամբ դիմել էր ՀՀ ԱՆ՝ հայտնելով, որ դատապարտյալ Ա.Հ.-ն 2014թ.-ին վիրահատվել է: 2014թ. հոկտեմբերին նա տեղափոխվել էր «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ, 2014թ. դեկտեմբերի 23-ին դուրս էր գրվել և տեղափոխվել այլ ՔԿՀ: Խումբն արձանագրել էր, որ դատապարտյալ Ա.Հ.-ն ունի լուրջ առողջական խնդիրներ, սակայն ՔԿՀ-ում ամբուլատոր բուժում չի ստանում և չի գտնվում բժշկի հսկողության տակ: Խումբը դիմել էր Ա.Հ.-ի հետագա բուժումը շարունակելու համար նրան «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ տեղափոխելու պահանջով:

Այդ հաշվետվությանն ի պատասխան՝ ՀՀ ԱՆ-ից տեղեկացրել են, որ Առողջապահության նախարարությունից ստացվել է ուղեգիր անհրաժեշտ հետազոտությունները պետական պատվերի շրջանակներում կատարելու համար և ՔԿՎ-ն կազմակերպչական աշխատանքներ է իրականացնում այդ ուղղությամբ:

----------

Խումբը 27.08.2015թ. N15-47 հրատապ հաշվետվության մեջ նշել էր, որ դատապարտյալ Ս.Ք.-ի հիվանդության ախտորոշումը համապատասխանում է 26.05.2006թ. ՀՀ կառավարության թիվ 825-Ն որոշման 2-րդ հավելվածով սահմանված՝ պատիժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդությունների ցանկի 28-րդ կետի 4-րդ ենթակետով, 29-րդ կետի 2-րդ ենթակետով և 31-րդ կետով նախատեսված հիվանդություններին: Վերոգրյալի հիման վրա Խումբը միջնորդել էր սկսել պատիժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդության հիմքով պատժից ազատման գործընթաց:

Հրատապ հաշվետվությանն ի պատասխան՝ ՀՀ ԱՆ-ից տեղեկացրել են, որ հարցը կքննարկվի «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնում բուժում ստանալուց և վերջնական ախտորոշումը պարզելուց հետո՝ օրենսդրությամբ սահմանված կարգով: Հետագայում Ս.Ք.-ն Կառավարության թիվ 825-Ն որոշմամբ հաստատված ծանր հիվանդության հիմքով ազատվել էր պատժի կրումից:

----------

Խումբը 24.09.2015թ. N15-50 հրատապ հաշվետվության մեջ նշել էր, որ դատապարտյալ Է.Ա.-ն ունի քաղցկեղ, դեռևս 2015թ. մայիսին ենթարկվել է վիրահատության, նրան նշանակվել է բուժում՝ քիմիաթերապիա, սակայն մինչ օրս բժշկի ցուցումը չի իրականացվել՝ պետպատվերի շրջանակներում այն իրականացնելու անհնարինության պատճառով, իսկ անձնական միջոցներով նա ի վիճակի չէ հոգալ բուժման ծախսերը: Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խումբը խնդրել էր դատապարտյալին ապահովել բժշկական օգնությամբ:

Նշված հաշվետվությանն ի պատասխան՝ ՀՀ ԱՆ-ից տեղեկացրել են, որ Է.Ա.-ն թույլտվություն ունի տեղափոխվելու ՀՀ առողջապահության նախարարության Վ.Ա.Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն՝ պետական պատվերի շրջանակներում հետազոտվելու և ստացիոնար բուժում ստանալու համար:

----------

Խումբը 28.09.2015թ. N15-51 հրատապ հաշվետվության մեջ նշել էր, որ դատապարտյալ Ա.Շ.-ի խուց են մտել այլ դատապարտյալներ և ճնշումներ կիրառել նրա նկատմամբ: Խումբը մտահոգություն էր հայտնել, որ դատապարտյալի կյանքը և առողջությունը ուղղակի սպառնալիքի տակ են: Դիմելով ՀՀ ԱՆ-ին՝ Խումբը խնդրել էր քննություն իրականացնել նշված հանգամանքները ստուգելու, իրավախախտում թույլ տված անձանց պատասխանատվության ենթարկելու և դատապարտյալի անվտանգությունը ապահովելու համար:

Հաշվետվությանն ի պատասխան՝ ՀՀ ԱՆ-ից տեղեկացրել են, որ իրականացվել է ծառայողական քննություն, որի արդյունքում ծառայողական պարտականությունները ոչ պատշաճ կատարելու համար կարգապահական տույժերի են ենթարկվել տվյալ ՔԿՀ անվտանգության ապահովման բաժնի պետը, պատասխանատու հերթապահի պարտականությունները կատարող հերթապահ խմբի գլխավոր մասնագետը, հերթապահ խմբի 3-րդ կարգի մասնագետը և պահպանության ապահովման բաժնի կրտսեր մասնագետը:

----------

Խումբը 25.11.2015թ. N15-61 հրատապ հաշվետվության մեջ նշել էր, որ դատապարտյալ Ա.Պ.-ն գտնվում է ինքնամեկուսացման մեջ, քանի որ խնդիրներ ունի քրեական հեղինակությունների հետ, և ընդհանուր խցում գտնվելը վտանգավոր է նրա կյանքի և առողջության համար: Հաշվի առնելով վերոնշյալը՝ Խումբը խնդրել էր միջոցներ ձեռնարկել Ա.Պ.-ի անվտանգությունն ապահովելու ուղղությամբ և նրան տեղափոխել այլ ՔԿՀ:

Հաշվետվությանն ի պատասխան՝ ՀՀ ԱՆ-ից հայտնել են, որ տեղաբաշխում է եղել, և Ա.Պ.-ն առաջիկայում կտեղափոխվի այլ ՔԿՀ պատժի հետագա մասը կրելու համար:

# Բնակեցման պայմանները ՀՀ քրեակատարողական հիմնարկներում 2014-2015 թվականներին

## Գերբնակեցում

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) դատական պրակտիկայի համաձայն՝ գերբնակեցման պայմաններում պատիժ կրելը կամ մինչդատական կալանքում գտնվելը ինքնին կարող է որակվել որպես անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունք, եթե անգամ պատկան մարմինները նման նպատակ չեն հետապնդել[4]:

Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեն (ԽԿԿ) 2013թ. ապրիլի 4-10-ը Հայաստան կատարած այցի վերաբերյալ իր զեկույցում մեկ անգամ ևս նշել է, որ կալանավորված/դատապարտված անձի համար նվազագույնը 4քմ բնակելի տարածքը պետք է վերաբերի միայն այն խցերին, որոնք նախատեսված են մեկից ավելի անձանց պահելու համար: Բացի դրանից, այս հաշվարկի մեջ չպետք է ներառվի զուգարանի համար նախատեսված տարածքը: Ընդամենը 6քմ մակերես ունեցող խցերը չեն կարող ծառայել որպես կալանավորված/դատապարտված անձի համար երկարաժամկետ բնակության վայր[5]:

«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ձերբակալված և կալանավորված անձանց համար ստեղծվում են սանիտարահիգիենիկ և հրդեհային անվտանգության պահանջներին համապատասխանող նյութակենցաղային պայմաններ:

Ձերբակալված և կալանավորված անձանց հատկացված բնակելի տարածքը պետք է համապատասխանի ընդհանուր բնակելի տարածքների համար սահմանված

---

[4] Խիստ գերբնակեցումն ինքնին կարող է վերածվել Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 3–րդ հոդվածով կարգավորվող խնդրի (տե՛ս, օրինակ՝ Վելինն ընդդեմ Ռուսաստանի 2010թ. հունիսի 24–ի գործը):

[5] Report to the Armenian Government on the visit to Armenia carried out by the European Committee for the Prevention of Torture and Inhuman or Degrading reatment or Punishment (CPT) from 4 to 10 April 2013. (§72) http://www.cpt.coe.int/documents/arm/2015-08-inf-eng.pdf

շինարարական և սանիտարահիգիենիկ նորմերին: Ձերբակալված և կալանավորված անձանց հատկացված բնակելի տարածության չափը չի կարող պակաս լինել չորս քառակուսի մետրից՝ յուրաքանչյուր անձի համար (Հոդված 20):

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի համաձայն՝ կիսաբաց ուղղիչ հիմնարկում դատապարտյալը պահվում է մինչև վեց մարդու համար նախատեսված բնակելի կացարանում (Հոդված 104), կիսափակ ուղղիչ հիմնարկում դատապարտյալը պահվում է մինչև վեց մարդու համար նախատեսված մեկուսացված խցում (Հոդված 105), փակ ուղղիչ հիմնարկում դատապարտյալը պահվում է մինչև չորս մարդու համար նախատեսված մեկուսացված խցում: Հիմնարկի պետի պատճառաբանված որոշմամբ դատապարտյալը կարող է խցում պահվել միայնակ (Հոդված 106):

Դիտորդական խումբը իր հրատապ և տարեկան հաշվետվություններում[6] մշտապես անդրադարձել է ՔԿՀ-ների գերբնակեցման խնդրին՝ ոչ միայն արձանագրելով առկա խնդիրները, այլև ներկայացնելով դրանց լուծմանն ուղղված առաջարկություններ: Հարկ է նշել, որ 2014թ.-ին գերբնակեցման խնդիրը շարունակել է արդիական մնալ ՀՀ ՔԿՀ-ներում: Չնայած գերբնակեցման վերացմանն ուղղված՝ ՀՀ կառավարության կողմից միջազգային կազմակերպությունների առջև ստանձնած մի շարք պարտավորություններին, 2014թ.-ին էական փոփոխություններ այս խնդրի առնչությամբ չեն գրանցվել:

Պլանային այցելությունների ժամանակ Խմբի կողմից արձանագրվել են ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 104-րդ, 105-րդ հոդվածների խախտման բազմաթիվ դեպքեր: Օրինակ՝ «Սևան», «Կոշ» և «Արթիկ» ՔԿՀ-ներում կիսաբաց և կիսափակ ռեժիմի կացարաններից յուրաքանչյուրում պահվում է մի քանի տասնյակ, ընդհուպ մինչև 45 դատապարտյալ: Սակայն գերբնակեցման խնդիրն արդիական է նաև այլ՝ խցային տիպի ՔԿՀ-ներում: Օրինակ, Խումբը «Նուբարաշեն» ՔԿՀ կատարած այցելություններից մեկի ժամանակ արձանագրել է դեպք, երբ խցում, որտեղ տեղադրված էր 8 մահճակալ և 1 բազմոց, պահվում էր 15 կալանավորված անձ:

2014թ. նոյեմբերի 29-ին շահագործման է հանձնվել «Արմավիր» նորակառույց ՔԿՀ առաջին մասնաշենքը, որը նախատեսված է 400 դատապարտյալի համար, իսկ 2015թ. դեկտեմբերի 15-ին շահագործման է հանձնվել 800 դատապարտյալի համար

[6] Տե՛ս Խմբի 2008 թ., 2009-2010թթ., 2011-2012թթ. հաշվետվությունները - http://pmg.am/?cat=31

նախատեսված ևս 4 մասնաշենք: 2015թ. հունիսի 1-ի դրությամբ «Արմավիր» ՔԿՀ-ում պահվող անձանց փաստացի թիվը կազմել է 196, իսկ 2016թ. հունվարի 1-ի դրությամբ՝ 364 անձ:

ՀՀ արդարադատության նախարարությունը նախատեսում է, որ հիմնարկի լիարժեք շահագործմամբ կբարելավվեն դատապարտյալների կենցաղային պայմանները, որոշակիորեն կլուծվի ՔԿՀ-ների գերբնակեցման խնդիրը:

Հարկ ենք համարում նշել, որ միայն նոր քրեակատարողական հիմնարկ կառուցելը խնդրի լուծում չէ. հարկավոր են համակարգային փոփոխություններ՝ ուղղված ինչպես օրենսդրության, այնպես էլ իրավակիրառ պրակտիկայի բարելավմանը, այդ թվում՝ ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների և խափանման միջոցների կիրառման խթանմանը, հնարավոր այլընտրանքային պատժատեսակների ընդլայնմանը, ինչպես նաև՝ որոշ հանցագործությունների ապաքրեականացմանը:

Խոշտանգումների կանխարգելման եվրոպական կոմիտեն 2010թ. հրապարակված իր զեկույցում[7] անդրադառնալով ՀՀ ՔԿՀ-ներում գերբնակեցման խնդրին նշել է. *«…ավելի շատ քրեակատարողական հիմնարկներ կառուցելը հարցի միակ լուծումը չէ: Դա ենթադրում է, որ, առաջին հերթին, շեշտը պետք է դրվի՝ նախքան պատիժ նշանակելն ազատությունից զրկելու հետ չկապված խափանման միջոցների վրա, երկրորդ՝ արդյունավետ միջոցներ ընդունելու վրա, որոնք կխեշտացնեն ազատությունից զրկված անձանց վերաինտեգրումը հասարակություն…»:*

ՀՀ ՔԿՀ-ներում պահվող անձանց ընդհանուր լրակազմը ՀՀ արդարադատության նախարարի 2012 թվականի փետրվարի 28-ի N30-Ն հրամանի (խմբ., փոփ., լրաց.՝ 31.01.14թ. N22-Ն, խմբ., փոփ., լրաց.՝ 02.12.14թ. N420-Ն, փոփ., լրաց.՝ 11.05.15թ. N203-Ն, փոփ.՝ 24.03.15թ. N125Ն) համաձայն՝ 2014թ.-ին եղել է 4395, իսկ 2015թ.-ին՝ 4384:

Խմբի կողմից արված հարցումներին տրված պաշտոնական պատասխանների համաձայն՝ ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում պահվող անձանց փաստացի թվաքանակը 2014թ. հունվարի 1-ի դրությամբ եղել է 3923 մարդ, հոկտեմբերի 13-ի դրությամբ՝ 3947 մարդ,

---

[7] Տե՛ս Հայաստանի կառավարությանը Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի (CPT) 2010թ. մայիսի 10-21-ը Հայաստան կատարած այցելության վերաբերյալ զեկույցի 61-րդ պարագրաֆը - http://www.gov.am/u_files/file/kron/CPT_arm_final.pdf

2015թ. հունվարի 1-ին՝ 3882 մարդ, հունիսի 1-ին՝ 3913, իսկ 2016թ.-ի հունվարի 1-ի դրությամբ՝ 3873 մարդ:

Եթե դիտարկենք բացարձակ թվերով, թեև քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց փաստացի ընդհանուր թվաքանակը 2014-2015 թվականներին չի գերազանցել ՔԿՀ-ների ընդհանուր լրակազմը, սակայն որոշ քրեակատարողական հիմնարկներ մշտապես կամ ժամանակ առ ժամանակ գերբնակեցված են եղել:

Մասնավորապես, 2014 թվականին գերբնակեցված են եղել «Նուբարաշեն», «Կոշ», «Սևան», «Արթիկ», «Հրազդան», «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկները, ընդ որում «Նուբարաշեն», «Արթիկ» և «Վարդաշեն» ՔԿՀ-ներում տարվա ընթացքում գրանցվել է գերբնակեցման դինամիկ աճ:

2015 թվականին գերբնակեցված են եղել «Նուբարաշեն», «Կոշ», «Արթիկ» և «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկները, որոնցից «Նուբարաշեն» և «Վարդաշեն» ՔԿՀ-ներում տարվա ընթացքում գրանցվել է գերբնակեցման դինամիկ աճ:

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց թույլատրելի և փաստացի թվաքանակը 2014-2015թթ.-ին ըստ հիմնարկների ներկայացված է Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1.

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց թույլատրելի և փաստացի թվաքանակը 2014-2015թթ.-ին

| | 2014թ. | | | | 2015թ. | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Քրեակատարողական հիմնարկ | Թույլատրելի քանակն ըստ ՀՀ արդարադատության նախարարի 2012 թվականի փետրվարի 28-ի N30-Ն հրամանի[8] | Քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց փաստացի թվաքանակը 01. 01. 2014թ. դրությամբ | Քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց փաստացի թվաքանակը 13. 10. 2014թ. դրությամբ | Քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց փաստացի թվաքանակը 01. 01. 2015թ. դրությամբ | Թույլատրելի քանակն ըստ ՀՀ արդարադատության նախարարի 2012 թվականի փետրվարի 28-ի N 30-Ն հրամանի[9] | Քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց փաստացի թվաքանակը 01.06.2015թ. դրությամբ | Քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց փաստացի թվաքանակը 01.01.2016թ. դրությամբ |
| «Նուբարաշեն» | 840 | 961 | 993 | 1055 | 820 | 994 | 942 |
| «Կոշ» | 640 | 666 | 759 | 730 | 640 | 682 | 595 |
| «Սևան» | 548 | 493 | 556 | 519 | 548 | 536 | 499 |
| «Արթիկ» | 373 | 358 | 381 | 402 | 373 | 403 | 378 |
| «Հրազդան» | 215 | 195 | 247 | 244 | 215 | 207 | 186 |

[8] Խմբ., փոփ., լրաց.՝ 31.01.14 N22-Ն

[9] Խմբ., փոփ., լրաց.՝ 02.12.14 N420-Ն, փոփ. լրաց.՝ 11.05.15 N203-Ն, փոփ.՝ 24.03.15 N125-Ն

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| «Վարդաշեն» | 154 | 216 | 238 | 248 | 154 | 266 | 261 |
| «Վանաձոր» | 245 | 224 | 224 | 216 | 245 | 206 | 202 |
| «Դատապարտյալների հիվանդանոց» | 464 | 202 | 222 | 182 | 464 | 142 | 145 |
| «Աբովյան» | 250 | 217 | 207 | 196 | 250 | 180 | 182 |
| «Գորիս» | 215 | 73 | 82 | 54 | 215 | 61 | 72 |
| «Երևան-Կենտրոն» | 60 | 47 | 38 | 36 | 60 | 40 | 47 |
| «Էրեբունի» | 391 | 271 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| «Արմավիր» | 0 | 0 | 0 | 0 | 400 | 196 | 364 |
| **Քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց փաստացի թվաքանակը ԸՆԴԱՄԵՆԸ** | | **3923** | **3947** | **3882** | | **3913** | **3873** |
| **Քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց թույլատրելի թվաքանակը ԸՆԴԱՄԵՆԸ** | | **4395** | | | **4384** | | |

Հարկ է նշել, որ գերբնակեցված ՔԿՀ-ներում առկա է նաև անհավասարաչափ տեղաբաշխում խցերում, որը պայմանավորված չէ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված որոշ տեսակի դատապարտյալների կամ կալանավորված անձանց անջատ պահելու սկզբունքներով, այլ՝ առկա հիերարխիկ հարաբերություններով: Օրինակ՝ «Նուբարաշեն» ՔԿՀ-ում միևնույն մակերեսն ունեցող խցերից մեկում կարող է պահվել 18 անձ, մյուսում՝ ընդամենը 5:

Խումբը բազմիցս անդրադարձել է նաև գերբնակեցման պատճառներին, մասնավորապես, ուշադրություն հրավիրելով հետևյալ խնդիրների վրա՝

1. Դատարանի կողմից կալանավորումը՝ որպես խափանման միջոց, իսկ ազատազրկումը՝ որպես պատժի տեսակ հաճախակի կիրառելու պրակտիկան.
2. Պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատ արձակման մեխանիզմի ոչ արդյունավետ կիրառումը:

Գերբնակեցումը լրացուցիչ լարվածություն է ստեղծում դատապարտյալների միջև՝ մեծացնելով միմյանց նկատմամբ վատ վերաբերմունքի ռիսկերը: Խումբն այս խնդրին ևս անդրադարձել է իր նախկին զեկույցներում:

ՀՀ ՔԿՀ-ներում գերբնակեցման խնդրին անդրադարձել է նաև ԽԿԿ-ն իր 2010թ. հրապարակած զեկույցում, մասնավորապես նշելով, որ Հայաստանի բանտերի հագեցվածությունը (բանտարկյալների թիվը) աճի միտում է գրանցել վերջին չորս տարիների ընթացքում: ԽԿԿ-ն նշել է նաև, որ այցելած բոլոր հիմնարկների համար գերբնակեցումը ընդհանուր հատկանիշ էր:

ՀՀ Կառավարությունը ԽԿԿ-ի վերոնշյալ զեկույցին տրված պաշտոնական պատասխանում նշել է, որ գերբնակեցումը կրճատելու ուղղությամբ նախատեսվում է իրականացնել մի շարք հրատապ միջոցառումներ: Մասնավորապես՝

- պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտի կիրառման արդյունավետության բարձրացում,

- բաց տեսակի ուղղիչ հիմնարկում պատիժը կրելու չափանիշների վերանայում, որով էականորեն կավելանա բաց տեսակում պատիժ կրող դատապարտյալների թիվը,
- ազատազրկման այլընտրանք հանդիսացող պատժատեսակների թվի ավելացում և կիրառման պրակտիկայի արմատավորում,
- կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու դեպքերի կրճատման ուղղությամբ միջոցառումների իրականացում:

Խումբը ԽԿԿ-ի վերոնշյալ զեկույցի վերաբերյալ Հայաստանի Կառավարության պատասխաններին անդրադարձել է իր 2013թ. գործունեության հաշվետվության մեջ: Հարկ ենք համարում նշել, որ թե՛ Խմբի, թե՛ ԽԿԿ-ի կողմից տարիներ շարունակ բարձրաձայնվող խնդիրներն այսօր էլ արդիական են, և ՀՀ կառավարության կողմից դրանց լուծման ուղղությամբ էական  քայլեր չեն ձեռնարկվել:

## Բնակեցման պայմանները

2014-2015թթ.-ին Խմբի կողմից իրականացված պլանային այցելությունների ժամանակ ուսումնասիրվել են ՔԿՀ-ներում բնակեցման պայմանները, մասնավորապես, դիտարկվել են խցերը և կացարանները, սանհանգույցները: Ուսումնասիրությունն իրականացվել է դիտարկման մեթոդով, լրացվել են դիտարկման քարտեր:

Դիտարկման առարկա են հանդիսացել խցի մակերեսը, խցի բարվոքության աստիճանը, դիտարկման պահին խցում առկա մահճակալների թիվը, խցում փաստացի պահվող անձանց թիվը, բնական լույսի ներթափանցման հնարավորությունը, բնական լուսավորության մակարդակը, էլեկտրական լուսավորության առկայությունը, էլեկտրական լուսավորության մակարդակը, աշխատող էլեկտրական վարդակների թիվը, էլեկտրական սարքավորումների առկայությունը, դիտարկման պահին խցի ջերմաստիճանը և ջեռուցման եղանակը: Դիտարկվել է անկողնային պարագաների առկայությունը և դրանց վիճակը, խցերում խավարասերների և այլ միջատների ու կրծողների առկայությունը: Ստուգվել է նաև, թե ինչպես է ապահովվում խցի օդափոխությունը և որքանով է այն բավարար՝ ըստ խցում գտնվող անձանց, զուգարանը խցի ներսում է, թե՝ ոչ և ինչպես է այն առանձնացված բնակելի տարածքից, ջրի ծորակի

առկայությունը, ջրամատակարարումը, խցում լողանալու հնարավորությունը և, ընդհանուր առմամբ, խցի սանիտարահիգիենիկ վիճակը:

Պլանային այցերի ժամանակ ՀՀ ողջ տարածքում գտնվող բոլոր ՔԿՀ-ներում դիտարկվել է ընդամենը 103 խուց և/կամ կացարան, որոնց բարվոքության վիճակը դիտորդների կողմից գնահատվել է 12.6%-ի դեպքում՝ գերազանց, 33.0%-ի դեպքում բարվոք, 46.6%-ի դեպքում՝ միջին, 5.8%-ի դեպքում՝ ոչ բարվոք, իսկ 1.9%-ի դեպքում՝ վթարային:

Խցերի/կացարանների սանիտարահիգիենիկ վիճակը տվյալ խցերում պահվող անձանց կողմից 38.8%-ի դեպքում գնահատվել է ընդհանուր առմամբ լավ, 45.6%-ի դեպքում՝ ընդհանուր առմամբ բավարար, 13.6%-ի դեպքում՝ ընդհանուր առմամբ ոչ բավարար՝ և 1.9%-ի դեպքում՝ վատ:

Դիտարկումները ցույց են տվել, որ գերազանց կամ բարվոք վիճակում գտնվել են հիմնականում այն խցերը, որոնք վերանորոգվել են դատապարտյալների կողմից իրենց միջոցներով, իսկ այն խցերը կամ կացարանները, որտեղ բնակվող դատապարտյալները չեն ունեցել համապատասխան ֆինանսական միջոցներ, որպես կանոն, գտնվել են ոչ բարվոք վիճակում:

2015թ. սկզբին «Կոշ» ՔԿՀ-ում առկա էր ջրամատակարարման խնդիր. ջուրը մատակարարվում էր գրաֆիկով, հավաքվում հատուկ տարաներում (բաքերում) և գրաֆիկով բաշխվում հանրակացարանների միջև: Զուգարանները գտնվում են հանրակացարաններից դուրս, ինչը մեծ խնդիր է՝ հատկապես ձմռանը տարեց անձանց համար:

«Կոշ» ՔԿՀ-ում կիսաբաց ուղղիչ հիմնարկում պահվող անձանց համար հասանելի զուգարանների սանիտարահիգիենիկ վիճակը Խմբի կողմից գնահատվել է ոչ բավարար կամ վատ, որն ըստ դատապարտյալների՝ աղիքային ինֆեկցիաների տարածման պատճառ է հանդիսանում, հատկապես ամռանը:

Դիտարկված խցերի 14.1%-ի դեպքում խցերում/կացարաններում հայտնաբերվել են խավարասերներ, այլ միջատներ և կրծողներ: Մասնավորապես, խավարասերներ և կրծողներ են նկատվել «Երևան-Կենտրոն», «Նուբարաշեն», «Վարդաշեն», «Աբովյան», «Հրազդան», «Գորիս-Նռնաձոր» ՔԿՀ-ներում:

Դիտարկված խցերի և կացարանների պատուհանների 97.1%-ը բացվող են, 2.9%-ը՝ ոչ: Բացվող պատուհանների 86.9%-ը բացվում են ամբողջությամբ, իսկ 13.1%-ի դեպքում՝ միայն վերնի օդանցքը: Դիտարկված բոլոր խցերում բոլոր պատուհանների ապակիները թափանցիկ են: Պատուհանների 76.7%-ին ամրացված են վանդակաճաղեր, իսկ 23.3%-ին՝ ամրացված չեն՝ պայմանավորված ուղղիչ հիմնարկի տիպով: Խցերում և կացարաններում բնական լուսավորության մակարդակը 76.2%-ում գնահատվել է բավարար, այսինքն՝ կարելի է կարդալ առանց էլեկտրական լուսավորության, իսկ 23.8%-ի դեպքում՝ թույլ, այսինքն՝ հնարավոր չէ կարդալ առանց էլ. լուսավորության:

Էլեկտրական լուսավորության մակարդակը, դիտարկման պահին խցերում և կացարաններում ներկա գտնված դատապարտյալների և կալանավորների գնահատմամբ, 96.1%-ում գնահատվել է բավարար (հնարավոր է կարդալ), իսկ 3.9%-ի դեպքում՝ անբավարար (հնարավոր չէ կարդալ):

Էլեկտրական լուսավորության մակարդակը անբավարար է գնահատվել «Գորիս» ՔԿՀ-ում դիտարկված 6 խցերից երկուսում, «Աբովյան» ՔԿՀ-ում դիտարկված 8 խցերից մեկում, «Սևան» ՔԿՀ-ում դիտարկված 11 խցերից մեկում: Լույսի անջատիչը 76.2%-ի դեպքում գտնվել է խցի ներսում, 23.8%-ի դեպքում՝ դրսում:

Դիտարկված խցերի 48.5%-ը ապահովված էին կենտրոնացված ջեռուցման համակարգով, 47.6%-ը տաքացվում էին էլեկտրական սարքերով, 1%-ը՝ փայտի վառարանով, իսկ 2.9%-ը չէին ջեռուցվում:

«Վարդաշեն» ՔԿՀ-ում ջեռուցումը կենտրոնացված չէ և դիտարկված 9 խցերից 3-ը չէին ջեռուցվում: Չջեռուցվող խցերի մակերեսը փոքր է և, ըստ խցի բնակիչների, ջեռուցման կարիք չկա: Հարկ է նշել, որ այդ նույն խցերում պատուհանները չեն բացվում և խցերը չեն օդափոխվում:

Դիտարկված խցերի/կացարանների 7.6%-ում օդափոխությունն ապահովվում է կենտրոնացված օդափոխության համակարգով, 11.4%-ի դեպքում՝ էլեկտրական օդափոխիչով, 78.1%-ի դեպքում՝ պատուհաններով, իսկ 2.9%-ը չի օդափոխվում:

Գնահատվել է խցերում/կացարաններում օդափոխության մակարդակն ըստ խցերում/կացարաններում գտնվող անձանց:

Դիտարկված խցերի/կացարանների 22.9%-ի դեպքում օդափոխության մակարդակը գնահատվել է որպես «չօդափոխված սենյակին բնորոշ ծանր օդ ունեցող», 63.85%-ի դեպքում՝ նորմալ, 13.3%-ի դեպքում՝ գերազանց, այսինքն՝ շատ թեթև, մաքուր օդ ունեցող:

Հարկ է ընդգծել, որ թեև «Արմավիր» ՔԿՀ-ն նորակառույց հիմնարկ է, սակայն այնտեղ բացակայում է օդափոխության համակարգը, ինչը հատկապես ամռանը լուրջ խնդիր է հանդիսանում թե՛ ազատազրկված անձանց, թե՛ աշխատակազմի համար:

Դիտարկված խցերի/կացարանների 78.1%-ի դեպքում զուգարանները գտնվում են խցերի ներսում, 21.9%-ի դեպքում՝ դրսում: «Կոշ» ՔԿՀ-ում զուգարանները գտնվում են կացարաններից դուրս, նշված ՔԿՀ-ի կացարանները չեն համապատասխանում ՀՀ օրենսդրության չափանիշներին: Դիտարկված խցերում զուգարանների 86.1%-ը առանձնացված է պատով, 5.1%-ը՝ կիսապատով, 6.3%-ը՝ այլ միջոցներով, 2.5%-ն ընդհանրապես առանձնացված չէ:

Խցերի/կացարանների 81.9%-ում առկա է ջրի ծորակ, սակայն դրանցից 7.1%-ի դեպքում է ծորակն ապահովում է նաև տաք ջուր, այն էլ՝ դատապարտյալների միջոցներով տեղադրված տաքացուցիչներով: Խնդրահարույց է այն, որ ծորակը գտնվում է զուգարանում, որովհետև խցում պահվող անձինք սնվում են հենց այնտեղ և ստիպված են մթերքը և սպասքը լվանալ զուգարանում:

Խցերի/կացարանների 18.1%-ը ապահոված չէ ջրամատակարարմամբ: 77.9%-ի դեպքում խցում լողանալու հնարավորություն չկա, դատապարտյալները լողանում են ընդհանուր բաղնիքում՝ լողանալու համար նախատեսված օրերին, իսկ 22.1%-ի դեպքում դատապարտյալների կողմից ստեղծվել է լողանալու հնարավորություն:

Դիտարկվել է նաև խցում կալանավորների/դատապարտյալների իրավունքների վերաբերյալ տեղեկատվության առկայությունը: Խցերի/կացարանների 38.0%-ում փակցված է տեղեկատվություն կալանավորների և դատապարտյալների իրավունքների վերաբերյալ, իսկ 62.0%-ի դեպքում այդ տեղեկատվությունը բացակայում է: Կալանավորների և դատապարտյալների պարտականությունների վերաբերյալ տեղեկատվությունը առկա է եղել դիտարկված խցերի/կացարանների 36.4%-ում: Դիտարկված խցերից միայն 14.7%-ում է փակցված եղել տեղեկատվություն թույլատրված իրերի ցուցակի վերաբերյալ: Հատկանշական է, որ այս առումով ակնհայտ տարբերություն

կա կանանց և տղամարդկանց համար նախատեսված ՔԿՀ-ներում. վերը նշված տեղեկատվությունը փակցված է եղել հիմնականում միայն «Աբովյան» ՔԿՀ-ում, որտեղ կանայք են պահվում:

Խումբը իր 2013թ. գործունեության տարեկան հաշվետվությունում[10] անդրադարձել է «Նուբարաշեն» ՔԿՀ-ում հացադուլավորների պահման պայմաններին: Չնայած, որ նրանց համար նախատեսված խուցը վերանորոգվել է, սակայն դեռևս առկա է օդափոխության խնդիր:

«Երևան-Կենտրոն» ՔԿՀ-ում ցմահ ազատազրկման ձևով պատիժ կրող Հ. եղբայրների պահման պայմանների հետ կապված դրական փոփոխություններ ևս նկատելի չեն: Նրանք շարունակվում են պահվել մեկուսացված ռեժիմում:

**Առաջարկություններ**

**ՀՀ արդարադատության նախարարությանը**

- Բարձրացնել պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտի կիրառման արդյունավետությունը,
- Վերանայել բաց տեսակի ուղղիչ հիմնարկում պատիժը կրելու չափանիշները և ավելացնել բաց ուղղիչ հիմնարկների լրակազմը,
- Ավելացնել ազատազրկմանն այլընտրանք հանդիսացող պատժատեսակների թիվը:
- Բոլոր ՔԿՀ-ները համապատասխանեցնել ՀՀ օրենսդրության պահանջներին՝ ազատությունից զրկված անձանց պահել միայն խցային տիպի սենյակներում՝ ըստ ուղղիչ հիմնարկի տիպերի՝ ապահովելով նվազագույն բնակելի տարածքով,
- Բոլոր ՔԿՀ-ներում նախատեսել խցեր՝ չծխող ազատությունից զրկված անձանց համար,
- ՔԿՀ-ներում ներդնել կենտրոնական օդափոխության համակարգ,
- «Նուբարաշեն» ՔԿՀ-ի առաջին հարկում ազատությունից զրկված անձ չպահել:

**ՀՀ դատարաններին**

[10] http://pmg.am/images/PMG_report_2013.pdf

- Նվազեցնել կալանավորումը որպես խափանման միջոց կիրառման դեպքերը, այսինքն՝ նվազեցնել ազատազրկման ձևով պատիժների թիվը՝ կիրառելով ազատազրկմանն այլընտրանք հանդիսացող պատժատեսակներ:

## Սննդի և անձնական հիգիենայի պարագաների հասանելիությունը և որակը

### Սննդի կազմակերպում

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 12-րդ հոդվածի համաձայն՝ ազատությունից զրկված անձն իրավունք ունի առողջության պահպանման, այդ թվում՝ բավարար սնունդ ստանալու: Նույն օրենսգրքի 76-րդ հոդվածի համաձայն՝ դատապարտյալը պատիժը կրելու ընթացքում ապահովվում է օրգանիզմի կանոնավոր կենսագործունեության համար անհրաժեշտ սննդով, որի օրական միջին չափաբաժինները սահմանում է ՀՀ կառավարությունը:

Միացյալ ազգերի կազմակերպության (ՄԱԿ) կողմից ընդունված Վերանայված «Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնների» Կանոն 22-ի համաձայն՝ բանտարկյալը պետք է ապահովվի իր առողջությունն ու ուժերը պահպանելու համար բավարար չափի սննդարար, լավորակ, լավ պատրաստված ու մատուցված սննդով[11]:

Ազատությունից զրկված անձանց պատշաճ որակ, քանակ և սննդարարություն ունեցող սնունդ տրամադրելը, որը չի հանգեցնի նրանց առողջական վիճակի վատթարացմանը, թերսնուցմանը, այս ոլորտում պետության հիմնական պարտավորություններից մեկն է: Ըստ Եվրոպայի խորհրդի (ԵԽ) Խոշտանգումների կանխարգելման կոմիտեի (ԽԿԿ)՝ սննդակարգը հիվանդությունների կանխարգելման էական նախապայմաններից է: Սակայն սնունդը կարող է նաև բազմաթիվ հիվանդությունների պատճառ հանդիսանալ: ՔԿՀ-ում սնունդն անմիջականորեն ազդում է ազատությունից զրկված անձանց առողջության վրա: Սննդի որակն ազդում է մարդկանց ոչ միայն ֆիզիկական, այլ նաև՝ հոգեկան առողջության վրա և կարող է հանգեցնել ագրեսիայի դրսևորումների[12]:

ՀՀ ՔԿՀ-ներում տրամադրվող սննդի որակը խիստ մտահոգիչ է արդեն տարիներ շարունակ: Մասնավորապես, 2014-2015թթ.-ին խնդրահարույց էին սննդի որակը, սննդամթերքի ոչ արդյունավետ օգտագործումը, մթերքի պահման պայմանները և այլն: Հարկ է նշել, որ 2015թ.-ին ոլորտի պատասխանատուները մի շարք քայլեր են նախաձեռնել իրավիճակը բարելավելու ուղղությամբ, որոնք առավել մանրամասն կներկայացվեն ստորև:

---

[11] Տե՛ս Վերանայված «Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոններ» (Մանդելայի կանոնները), 2015թ., E/CN.15/2015/L.6/Rev.1, հասանելի է՝ https://www.unodc.org/documents/commissions/CCPCJ/CCPCJ_Sessions/CCPCJ_24/resolutions/L6_Rev1/ECN152015_L6Rev1_e_V1503585.pdf

[12] Տե՛ս http://www.euro.who.int/__data/assets/pdf_file/0004/293665/Food-systems-correctional-settings-literature-review-case-study-ru.pdf?ua=1

ԵԽ Նախարարների կոմիտեի կողմից ընդունված Եվրոպական բանտային կանոնները հաստատելու մասին Rec(2006)2 հանձնարարականի համաձայն՝ ազատությունից զրկված անձանց սննդակարգը պետք է համապատասխանի իրենց տարիքին, առողջական վիճակին, կրոնին, մշակույթին և աշխատանքի բնույթին[13]: Հանձնարարականում նաև ամրագրված է, որ սննդի նվազագույն էներգետիկ արժեքը և պրոտեինների բաղադրությունը պետք է սահմանվեն ներպետական օրենքներով:

Նշենք, որ ըստ ընդունված չափանիշների, չափահաս տղամարդուն անհրաժեշտ է օրական մոտ 2200-2500 կիլոկալորիա (կկալ), իսկ չափահաս կնոջը՝ միջինը 2000 կկալ: Էներգետիկ արժեքից բացի կարևոր է, որ տրամադրվող սնունդը բալանսավորված լինի և պարունակի օրգանիզմի համար անհրաժեշտ պրոտեիններ և այլ տարրեր: Ոչ պակաս կարևոր է, որ մթերքը պահպանվի և պատրաստվի հիգիենիկ պայմաններում:

Մինչև 2015թ. հոկտեմբերի 31-ը ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում պահվող անձանց սննդամթերքը տրամադրվում էր ՀՀ կառավարության 2003 թվականի ապրիլի 10-ի N413-Ն որոշման համաձայն, որով սահմանվել էին սննդի օրական միջին չափաբաժինները, տրամադրվող հանդերձանքի քանակը և դրանց շահագործման ժամկետները, անկողնային ու հիգիենիկ պարագաների չափաբաժինները և դրանց շահագործման ժամկետները:

Այդպես, Կառավարության որոշմամբ սահմանված նորմատիվների համաձայն, ՔԿՀ-ում գտնվող ազատությունից զրկված յուրաքանչյուր անձ ամեն օր պետք է ստանար հաց (650գ), ձավարեղեն (120գ), մակարոնեղեն (30գ), միս/մսամթերք (90գ կամ 180գ՝ ոսկորով), կաթ/կաթի փոշի (100գ/14.3գ), ձուկ՝ առանց գլխի (100գ), կարտոֆիլ (550գ), այլ բանջարեղեն (250գ), պանիր (25գ), միրգ (200գ), կենդանական յուղ/մարգարին (45գ), տոմատի մածուկ (5գ), թեյ/թեյաբույսեր (2գ), հյութեր (100գ), աղ (20գ), շաքարավազ (40գ) և դափնու տերև (0.1գ):

Այս որոշումն ուժը կորցրած ճանաչվեց Կառավարության 2015թ. հոկտեմբերի 15-ի N1182-Ն որոշմամբ: Այս որոշմամբ, 45գ կենդանական յուղից/մարգարինից բացի նախատեսված է նաև 25գ բուսական յուղ, իսկ մնացած տեսականին և դրանց չափաբաժինները թողնվել են անփոփոխ:

Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) համաձայն՝ յուղերը չպետք է կազմեն ընդունվող սննդի 30 տոկոսից ավելին, ընդ որում՝ խորհուրդ է տրվում **<u>բացառել</u>** արհեստական եղանակով ստացված տրանսյուղերը (օրինակ՝ հիդրոգենիզացված բուսական յուղը, մարգարինը): Առողջ սննդակարգը պետք է պարունակի մրգեր և բանջարեղեն (առնվազն 400գ օրական), ընդ որում՝ կարտոֆիլը չի դասվում բանջարեղենի շարքին, իսկ աղի օրական չափաբաժինը չպետք է գերազանցի 5 գրամը:

---

[13] Կետ 22.1, Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից ընդունված Եվրոպական բանտային կանոնները հաստատելու մասին **Rec(2006)2,** ընդունվել է Նախարարների կոմիտեի կողմից 2006թ. հունվարի 11-ին, հասանելի է՝ https://wcd.coe.int/ViewDoc.jsp?id=955747

Ինչպես տեսնում ենք, ՔԿՀ-ներում տրամադրվող սնունդը առնվազն մի քանի չափանիշով չի համապատասխանում ԱՀԿ կողմից սահմանված ստանդարտներին, մասնավորապես՝ հիդրոգենիզացված բուսական յուղի, մարգարինի և աղի օգտագործման մասով: Իսկ մրգի և բանջարեղենի չափաբաժնի դեպքում այն համապատասխանում է միայն ձևականորեն, քանի որ գործնականում միրգ չի տրամադրվում, որի մասին վկայում են թե՛ Խմբի դիտարկումները, թե՛ իրականացված հարցազրույցների արդյունքները:

Սակայն, ավելի կարևոր է, որ նոր որոշմամբ կարգավորվել է նաև չորս և ավելի ժամ տևողությամբ փոխադրման դեպքում կալանավորված անձին կամ դատապարտյալին տրամադրվող սննդի չափաբաժինների հարցը, որն անտեսված էր Կառավարության նախորդ որոշման մեջ: Նոր որոշմամբ՝ անձանց նշված խումբը պետք է ստանա հաց, մսի կամ ձկան պահածո, մրգահյութ և պանիր: Այս առումով, հարկ է նշել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ)՝ Մոյիսեևն ընդդեմ Լատվիայի գործը[14], որում դատարանը Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում է արձանագրել, քանի որ Մոյիսևեը չի ապահովվել անհրաժեշտ, բավարար սննդով, մասնավորապես՝ ՔԿՀ-ից դատարան տանելու օրերին նրան տրամադրվել է մեկ կտոր հաց, սոխ և մեկ կոտլետ կամ մի կտոր տապակած ձուկ: ՄԻԵԴ-ը հաստատել է, որ Լատվիայի իշխանությունները պարտավոր են ապահովել ազատությունից զրկված անձանց առողջությունը և բարեկեցությունը, դրանից բխում է, *inter alia,* նրանց համապատասխան սննդով ապահովելու պարտավորությունը[15]: Հաշվի առնելով ճաշի ժամանակ տրամադրվող սննդի ոչ բավարար քանակությունը, իսկ, որոշ դեպքերում, նաև ընթրիքի բացակայությունը (երբ Մոյիսեևը դատարանից վերադարձել է ՔԿՀ ընթրիքի ժամից ուշ)՝ ՄԻԵԴ-ը դա որակել է որպես անմարդկային վերաբերմունք:

Բացի այդ, որոշ խմբերին՝ հղի կանանց, կերակրող մայրերին, անչափահաս կամ հիվանդ կալանավորված անձանց և դատապարտյալներին, պետք է տրամադրվի հավելյալ սնունդ՝ 20գ բուսական յուղ, 25գ կարագ, 100գ կաթ կամ 14.3գ կաթի փոշի և մեկ ձու:

Հատկանշական է, որ նշված որոշումներից ոչ մեկը չի սահմանում սննդի էներգետիկ արժեքի նվազագույն շեմը: Ավելին, ՔԿՀ-ում սնունդը պատրաստվում է այդ պահին պահեստում առկա սննդամթերքներից և սննդի էներգետիկ արժեքը չի ստուգվում կամ հաշվարկվում:

Պետք է ընդգծել, որ ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում պահվող անձանց համար նախատեսված չէ նրանց առողջական վիճակին, կրոնական և այլ առանձնահատկություններին համապատասխան դիետիկ սնունդ:

Հարկ է նշել նաև սննդի պատրաստման գործընթացում ներգրավված անձանց մասնագիտական հմտությունների խնդիրը: Հաշվետու ժամանակահատվածում ՔԿՀ-ներում կիրառվել են տարբեր մոտեցումներ. խոհարարը պայմանագրային աշխատակից է,

[14] Տե՛ս Moisejevs v. Latvia, ՄԻԵԴ վճիռն առ 15.06.2006թ.

[15] Նույն տեղում, պարբ. 78; Ilaşcu and Others v. Moldova and Russia [GC], ՄԻԵԴ վճիռ, No. 48787/99, պարբ. 451.

ում օգնում են դատապարտյալներ, խոհարարը դատապարտյալ է և այլն: Սննդի պատրաստման տեսանկյունից՝ համեմատաբար ավելի լավ որակի ճաշեր պատրաստվում էին մասնագետ խոհարարների կողմից, թեև դատապարտյալների՝ սննդի պատրաստման աշխատանքներում ներգրավելը միանշանակ խրախուսելի է: Ցանկալի է հատուկ ուսուցում կազմակերպել ՔԿՀ-ում պատիժ կրող և որպես խոհարար աշխատել ցանկացող դատապարտյալների համար, իսկ լավագույն ուսանողներին ներգրավել սննդի պատրաստման աշխատանքներում: Նման մոտեցումը դրական ազդեցություն կունենա նաև դատապարտյալների՝ պատիժը կրելուց հետո վերասոցիալականացման տեսանկյունից:

## Սննդի որակը

Սննդի որակի հետ կապված խնդիրների մի քանի պատճառներ կան, որոնցից են սննդամթերքի պահման պայմանները, բաղադրատոմսերը, ճաշացանկի և օգտագործվող սննդամթերքների միանմանությունը և այլն:

Հաշվետու ժամանակաշրջանում Խմբի կողմից իրականացված ուսումնասիրությունը ցույց է տվել, որ ինչպես նախորդ տարիներին, այդպես էլ 2014-2015թթ.-ին բոլոր այն կալանավորված և դատապարտված անձինք, ովքեր հնարավորություն են ունեցել օգտվել հանձնուքների միջոցով ստացված սննդից և հիգիենայի պարագաներից, նախընտրել են այդ տարբերակը և չեն օգտվել ՔԿՀ սննդից: Նման մոտեցումը հիմնականում պայմանավորված է տրամադրվող սննդի ոչ բավարար որակով, միանման և ոչ գրավիչ ճաշացանկով, ինչպես նաև՝ ազատությունից զրկված անձանց շրջանում ընդունված վարքագծի ոչ ֆորմալ կանոններով: Իրավիճակը տարբերվել է «Արմավիր» ՔԿՀ-ում, որտեղ տրամադրվող սննդից օգտվում է դատապարտյալների մեծամասնությունը: Դա պայմանավորված է նաև «Արմավիր» ՔԿՀ-ում պայմանագրային հիմքով խոհարար ընդունելու հանգամանքով, ինչը դրական է անդրադարձել պատրաստվող սննդի որակի վրա:

Պետք է նշել, որ խոհարարը/ճաշացանկ կազմողը սահմանափակված է Կառավարության վերը նշված որոշմամբ, և նա ամեն օր սնունդ է պատրաստում միայն որոշման մեջ նշված և պահեստում այդ պահին առկա սննդամթերքներից: Պատրաստվող սննդի միատարրությունը որոշ չափով պայմանավորված է այդ փաստով:

Համեղ և ախորժելի չի կարող լինել մի ճաշատեսակ, որը պատրաստվում է այնպիսի սննդամթերքներ խառնելով, ինչպիսիք են, օրինակ, փխրվող կարտոֆիլը, մակարոնեղենը և ձավարեղենը, որին ավելացվում է մեծ քանակությամբ յուղ: ՔԿՀ-ներում շաբաթվա կտրվածքով կազմվող ճաշացանկերի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ ճաշատեսակները շաբաթը 3-4 անգամ կրկնվում են, իսկ որոշ ՔԿՀ-ներում նույնիսկ՝ ավելի հաճախ: Արդյունքում, ազատությունից զրկված անձինք գրեթե ամեն օր պետք է ուտեն նույն ճաշը՝ մի օր ճաշի ժամին, մյուս օրն՝ ընթրիքին:

Ճաշացանկը մեծամասամբ կրկնվում է, չի համապատասխանում պահանջարկին, ոչ միշտ է համեղ, ինչի հետևանքով մեծ է խոտանի տեսակարար կշիռը, ինչն էլ, իր հերթին,

նվազեցում է բյուջետային ծախսերի արդյունավետությունը, աճում են կոռուպցիոն ռիսկերը:[16]

Ստորև՝ Աղյուսակ 2-ում, ներկայացված է ՀՀ-ում փաստացի ամենամեծ լրակազմը ունեցող «Նուբարաշեն» ՔԿՀ շաբաթվա ճաշացանկի օրինակը:

| Աղյուսակ 2. ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ շաբաթվա ճաշացանկի օրինակ | | | |
|---|---|---|---|
| Օր | Սննդի ժամ | Ճաշացանկ | Ճաշացանկ |
| Երկուշաբթի | Նախաճաշ | Շոգեխաշած թթու | Կարտոֆիլով պյուրե, խտացրած կաթ, թեյ |
| | Ճաշ | Ոլոռով ապուր, մակարոնով և բրնձով փլավ | Սիսեռով և ոսպով ապուր, շոգեխաշած բանջարեղեն |
| | Ընթրիք | Հնդկաձավարով փլավ | Խաշած մակարոն, թեյ |
| Երեքշաբթի | Նախաճաշ | Ցորենաձավարով շիլա | Կարտոֆիլով պյուրե, խտացրած կաթ, թեյ |
| | Ճաշ | Պոչով ապուր, բրնձով շիլա | Բորշչ՝ թթու բանջարեղենով, խաշած մակարոն |
| | Ընթրիք | Շոգեխաշած թթու | Ոսպով շիլա, թեյ |
| Չորեքշաբթի | Նախաճաշ | Մակարոնով և բրնձով փլավ | Կարտոֆիլով պյուրե, խտացրած կաթ, թեյ |
| | Ճաշ | Սիսեռով ապուր, գարեձավարով շիլա | Մակարոնով ապուր, շոգեխաշած բանջարեղեն (թթվեցված) |
| | Ընթրիք | Շոգեխաշած թթու | Ոսպով շիլա, թեյ |
| Հինգշաբթի | Նախաճաշ | Շոգեխաշած թթու | Կարտոֆիլով պյուրե, խտացրած կաթ, թեյ |
| | Ճաշ | Ոլոռով ապուր, մակարոնով և բրնձով փլավ | Ոսպով ապուր, շոգեխաշած թթու բանջարեղեն |
| | Ընթրիք | Հնդկաձավարով շիլա | Խաշած մակարոն, թեյ |

[16] Առավել մանրամասն տե՛ս Հավելված 1-ում:

| | | | |
|---|---|---|---|
| Ուրբաթ | Նախաճաշ | Հաճարով շիլա | Կարտոֆիլով պյուրե, խտացրած կաթ, թեյ |
| | Ճաշ | Ոլոռով ապուր, ցորենաձավարով շիլա | Բորշչ՝ թթու բանջարեղենով, խաշած մակարոն |
| | Ընթրիք | Շոգեխաշած թթու | Ռսպով շիլա, թեյ |
| Շաբաթ | Նախաճաշ | Շոգեխաշած թթու | Կարտոֆիլով պյուրե, խտացրած կաթ, թեյ |
| | Ճաշ | Սիսեռով ապուր, մակարոնով և բրնձով փլավ | Մակարոնով ապուր, շոգեխաշած բանջարեղեն (թթվեցված) |
| | Ընթրիք | Հնդկաձավարով շիլա | Ռսպով շիլա, թեյ |
| Կիրակի | Նախաճաշ | Գարեձավարով շիլա | Կարտոֆիլով պյուրե, խտացրած կաթ, թեյ |
| | Ճաշ | Ոլոռով ապուր, բրնձով շիլա | Ոսպով ապուր, շոգեխաշած բանջարեղեն (թթվեցված) |
| | Ընթրիք | Շոգեխաշած թթու | Խաշած մակարոն, թեյ |

Ինչպես տեսնում ենք աղյուսակից, ճաշատեսակները հիմնականում կրկնվում են, իսկ երկրորդ ճաշացանկի գրեթե միակ բաղադրիչներն են կարտոֆիլը, մակարոնը և ոսպը: Ոսպ-մակարոն համադրությունը շաբաթը երկու անգամ փոխարինվել է թթվեցված բանջարեղենով պատրաստված բորշչով:

Սննդի միանմանությունը և ցածր որակն ավելի լուրջ հետևանքներ են ունենում երկարատև ազատազրկման դատապարտվածների, հատկապես՝ ցմահ դատապարտյալների վրա:

Պետք է նշել, որ բոլոր ՔԿՀ-ներում պատրաստվող սննդի տեսականին, թեև, ընդհանուր առմամբ, նույնն է, սակայն որակը փոքր-ինչ տարբերվում է:

Սննդի պաշարների ամբողջական չսպառման և խոտանման դեպքում դրանց շրջանառության ընթացակարգերը փաստաթղթավորված չեն[17]:

Ստորև ներկայացնում ենք պատրաստված ճաշատեսակների լուսանկարները:

[17] Առավել մանրամասն տե՛ս Հավելված 1-ում:

*«Հրազդան» ՔԿՀ, ճաշի և ընթրիքի նմուշներ*



*«Վարդաշեն» ՔԿՀ, ճաշի և նախաճաշի նմուշներ*



*«Աբովյան» ՔԿՀ, օրվա ճաշը*



*«Նուբարաշեն» ՔԿՀ-ում պատրաստվող ճաշը (բորշչ) և ճաշի/ընթրիքի նմուշները (շոգեխաշած թթու կաղամբ, ապուրներ):*







Հատկանշական է, որ եվրոպական որոշ պետություններում, օրինակ, Մեծ Բրիտանիայում հստակ սահմանված է, որ դատապարտյալներին տրամադրվող սնունդը ոչ միայն պետք է սննդարար և բավարար քանակությամբ լինի, այլ նաև՝ ողջամտորեն զանազան: Այնտեղ գործում են ճաշացանկի կազմման հստակ կանոններ: Ըստ այդմ, պարտադիր պետք է ապահովվի ճաշացանկի կրկնության նվազագույնը երկու, իսկ առավելագույնը՝ հինգ շաբաթական պարբերականությունը: Ճաշացանկը կազմելիս պետք է հաշվի առնել սնունդ ստացողի սեռը և տարիքը (չափահաս է թե անչափահաս), կրոնը և մշակութային առանձնահատկությունները, առողջական վիճակը, տարվա եղանակը և օրվա ժամը, բաղադրիչների արժեքը և կրկնությունը, սննդի տեքստուրան (կոշտ կամ փափուկ լինելը), գույնի, համի կրկնությունը, սննդարար արժեքը և մի շարք այլ նախապայմաններ:

Կարևոր պայման է նաև սնունդը տաք վիճակում մատուցելը: Օրինակ, Մեծ Բրիտանիայում սահմանված են համապատասխան չափանիշներ. սննդի պատրաստման և անձին տրամադրելու միջև ընկած ժամանակահատվածը չպետք է գերազանցի **45 րոպեն**: ՀՀ-ում ոչ բոլոր ՔԿՀ-ում է հնարավոր արագ բաժանել սնունդը՝ տարածքի և շենքի առանձնահատկություններով պայմանավորված: Այս առումով ամենախնդրահարույցը «Նուբարաշեն» ՔԿՀ-ն է: Ողջամիտ մոտեցում է ցուցաբերվել «Արմավիր» ՔԿՀ-ում. սննդի բաժանումը իրականացվում է միաժամանակ մի քանի տեղամասերում, ինչը թույլ է տալիս գործընթացն արագ կազմակերպել:

ՀՀ ՔԿՀ-ներում իրականացված դիտարկումների ժամանակ բողոքները վերաբերում էին հիմնականում սնունդ պատրաստելու համար օգտագործվող կենդանական/բուսական յուղի որակին: Հարցված դատապարտյալները նշել են, որ ՔԿՀ սննդից օգտվելուց հետո առաջանում է այրոց և այլ ստամոքսաաղիքային խնդիրներ: 2014-թ.-ին Դիտորդական խմբի անդամները փորձել են ճշտել յուղի բաղադրությունը և արտադրողի տվյալները, սակայն յուղի ներկրմամբ և ՔԿՀ-ներին մատակարարմամբ զբաղվող իրավաբանական անձը հրաժարվել է տրամադրել մանրամասներ: 2015թ.-ին ՔԿՀ-ներին մատակարարվել է նկարում պատկերված բուսական յուղը:







Արդյունքում, ինչպես արդեն նշվել է, հաշվետու ժամանակահատվածում ՔԿՀ-ում պահվող անձանց զգալի մասը հրաժարվել է պատրաստված սննդից: Դա են փաստում Դիտորդական խմբի դիտարկումները և ազատությունից զրկված անձանց ու խոհանոցի աշխատանքներում ներգրավված աշխատակիցների հետ հարցազրույցների արդյունքները:

Այդպես, 2015թ. առաջին կեսին խոհանոցի աշխատակիցների հետ իրականացրած հարցումների համաձայն՝ տարբեր ՔԿՀ-ներում սննդից հրաժարվող անձանց քանակը էականորեն տարբեր է: Օրինակ՝ «Գորիս» ՔԿՀ-ում նշել են, որ նախաճաշից և ընթրիքից ոչ ոք չի հրաժարվում, իսկ ճաշից հրաժարվում է պահվող անձանց 8 տոկոսը: Դա բացատրվել է այն հանգամանքով, որ ազատությունից զրկված անձինք քիչ հանձնուքներ են ստանում: «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ում արձանագրել են, որ տրամադրվող սննդից հրաժարվում է պահվող անձանց մոտ 80 տոկոսը: «Երևան-Կենտրոն» ՔԿՀ-ում դժվարացել են պատասխանել, թե անգամ հարցման օրը հիմնարկում պահվող անձանցից քանիսն են հրաժարվել սննդից: «Արթիկ» ՔԿՀ-ում հարցման օրվա դրությամբ գրեթե բոլորը հրաժարվում են նախաճաշից, իսկ ճաշից օգտվում է ազատությունից զրկված անձանց 10-15 տոկոսը: «Աբովյան» ՔԿՀ-ում սննդից հրաժարվում է կալանավորված և դատապարտված անձանց մինչև 35 տոկոսը: «Սևան» ՔԿՀ-ում Խմբի կողմից հարցվածները հայտնել են, որ տրամադրվող սննդից հրաժարվում է դատապարտյալների մինչև 45 տոկոսը: «Կոշ» ՔԿՀ-ում նախաճաշից հրաժարվում է պահվող անձանց մինչև 50 տոկոսը, իսկ ճաշից և ընթրիքից օգտվում է մոտ 85 տոկոսը: «Նուբարաշեն» ՔԿՀ-ում հարցված աշխատակիցների տվյալներով՝ հրաժարվողների թիվը եղել է նախաճաշից ՝ 60 տոկոս, իսկ ճաշից և ընթրիքից՝ 40 տոկոս: «Հրազդան» ՔԿՀ-ում հայտնել են, որ նախաճաշից հրաժարվել է կալանավորված և դատապարտված անձանց մոտ 50 տոկոսը, իսկ ճաշից և ընթրիքից հրաժարվողների թիվը տատանվում է՝ այդ օրը մատուցվող ճաշատեսակով պայմանավորված: «Վարդաշեն» ՔԿՀ-ում հարցման օրը նախաճաշից և ընթրիքից հրաժարվել էր 16 տոկոսը, իսկ ճաշից՝ մոտ 30 տոկոսը:

Արդյունքում ազատությունից զրկված անձին սննդով ապահովելը կրկնակի ծախսատար է. պետական բյուջեից սննդին հատկացվում է օրական միջինը 580 ՀՀ դրամ մեկ անձի հաշվարկով[18], միաժամանակ, հավելյալ գումար է տրամադրվում նաև ազատազրկված անձանց ընտանեկան բյուջեից՝ հանձնուքների տեսքով: Ընդ որում, հանձնուքները, որպես կանոն, ուղարկվում են ոչ թե 1 հոգու, այլ խցում բնակվող անձանց թվի հաշվարկով:

Պարզ հաշվարկը ցույց է տալիս, թե որքան ծախսատար է սննդի կազմակերպումը ՔԿՀ-ներում, մինչդեռ այդ սննդի զգալի մասը խոտանվում և թափվում է: Օրինակ, «Նուբարաշեն» ՔԿՀ-ում 2014թ.-ին սննդի վրա օրական ծախսվել է 611.900 ՀՀ դրամ (580 ՀՀ դրամ*1055 ազատությունից զրկված անձ), այն դեպքում, երբ, ՔԿՀ վարչակազմի հետ իրականացված հարցազրույցների արդյունքների համաձայն, նրանց միջինում 40 տոկոսը հրաժարվել է սննդից[19]:

Հարկ է նշել, որ 2015թ. երկրորդ կեսին ՀՀ ԱՆ ՔԿՎ նախաձեռնությամբ սննդի կազմակերպման ոլորտում ծախսերի արդյունավետության բարձրացմանն ուղղված նոր, փորձնական մոտեցում է կիրառվել: Առաջարկվել է ամեն օր ազատությունից զրկված անձանցից նախապես ճշտել, արդյո՞ք նրանք ցանկանում են օգտվել ՔԿՀ կողմից

---

[18] Տվյալները տրամադրել է ՀՀ ԱՆ ՔԿՎ-ն 21.04.2015թ. թիվ 10/16.2/4712-15 գրությամբ:

[19] ՀՀ ԱՆ ՔԿՎ գրության համաձայն՝ «Նուբարաշեն» ՔԿՀ-ում 01.01.2015թ. դրությամբ պահվում էր 1055 ազատությունից զրկված անձ:

տրամադրվող սննդից, թե՞ ոչ, և օրվա սնունդը պատրաստել ցանկացողների քանակին համապատասխան: 2015թ. աշնանն իրականացված դիտարկումների արդյունքների համաձայն՝ նման մոտեցումը թույլ է տվել մոտ 5%-ով խնայել սննդամթերքը և թափոնի չվերածել: Սակայն տեխնիկական, ֆորմալ պահանջների պահպանման անհրաժեշտության պատճառներով հնարավոր չի եղել ապահովել նախաձեռնության արդյունավետությունը: Մասնավորապես, սննդամթերքի հաշվարկման և հաշվապահության վարման համար նախատեսված կարգավորումներից ելնելով՝ հնարավոր չի եղել դատապարտյալների և կալանավորված անձանց ընդհանուր թվից տարանջատել նրանց, ովքեր օգտվում են միայն հացից ու շաքարավազից՝ հրաժարվելով մնացած սննդից: ՔԿՀ-ն նրանց հաշվարկում է որպես սննդից օգտվող և ներառում օրվա սննդի սպառողների ցանկում, արդյունքում գոյանում է սննդի թափոն:

Ակնհայտ է, որ նշված մոտեցումը կանոնակարգելու, զարգացնելու և տրամադրվող սննդի որակը գոյացած խնայողությունների հաշվին բարձրացնելու բավականին լայն հնարավորություններ կան:

Կալանավորված և դատապարտված անձինք հանձնուքների միջոցով իրավունք ունեն ստանալու բացառապես պատրաստի սնունդ: Սակայն հաշվետու ժամանակահատվածում Խումբը որոշ ՔԿՀ-ներում բազմաթիվ բողոքներ է ստացել այս առնչությամբ: Օրինակ՝ «Աբովյան» ՔԿՀ-ում բողոքում էին, որ հարազատների կողմից բերվող պատրաստի սնունդը զննության արդյունքում կորցնում է ապրանքային տեսքը, քանի որ զննումը իրականացվում է առանց պատշաճ սարքավորումների՝ պարզունակ գործիքների միջոցով:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 77-րդ հոդվածը նախատեսում է ազատությունից զրկված անձի կողմից սննդամթերքի ձեռք բերման հնարավորություն, որի կարգը հաստատվում է ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգով: Սակայն, ըստ ներքին կանոնակարգի, ազատությունից զրկված անձին արգելվում է սնունդ պատրաստել: Ի տարբերություն ՀՀ-ի, Եվրոպայի որոշ պետություններում ազատությունից զրկված անձինք իրավունք ունեն ինքնուրույն սնունդ պատրաստել՝ պայմանով, որ սննդամթերքը պետք է ձեռք բերվի բացառապես բանտին կից խանութից: Նման պրակտիկան խրախուսվում է՝ որպես դատապարտյալների վերասոցիալականացմանը նպաստող միջոց: ՀՀ-ում նույնպես կարելի է ներդնել նման պրակտիկա՝ սննդի որակը բարձրացնելու նպատակով:

## Սննդամթերքի առկայությունը և պահեստավորման պայմանները

Թեև ՀՀ Կառավարության N1182-Ն որոշմամբ նախատեսվում է, որ ազատությունից զրկված յուրաքանչյուր անձին օրական պետք է տրամադրվի 200 գրամ միրգ, մշտադիտարկման ժամանակ, Ամանորի նախօրեից բացի, չի արձանագրվել որևէ դեպք, երբ պահեստում կամ խոհանոցում ազատազրկված անձանց բաժանելու համար նախատեսված միրգ լինի: Հարցումների արդյունքում նույնպես հաստատվել է, որ,

բացառությամբ տոնական մի քանի օրերի, միրգ ընդհանրապես չի տրամադրվում: Միևնույն ժամանակ, ՀՀ ԱՆ ՔԿՎ տրամադրած տեղեկությունների համաձայն, 2014թ. մրցույթում հաղթող տնտեսվարող սուբյեկտը պետք է մատակարարեր 3.168.000 ՀՀ դրամին համարժեք 12.000 կգ միրգ: Ազատազրկված անձանց թվաքանակը հաշվի առնելով՝ պարզ մաթեմատիկական հաշվարկը ցույց է տալիս, որ պատվիրված և մատակարարման ենթակա մրգի չափաբաժինը էականորեն պակաս է ՀՀ կառավարության որոշմամբ նախատեսված 200գ չափաբաժինը ապահովելու համար, անգամ եթե դրան գումարենք «Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամի կողմից մատակարարված միրգը[20]:

ՀՀ ՔԿՎ տվյալների համաձայն՝ 2014թ.-ին ձեռք է բերվել 3.791.000 ՀՀ դրամի 14.353 կգ միրգ (խնձոր)՝ 264 ՀՀ դրամ 1 կգ դիմաց:

**Աղյուսակ 3. ՀՀ ԱՆ ՔԿՎ կողմից գնված և ՔԿՀ-ներին տրամադրած մրգի չափաբաժինը**

| Հիմնարկի անվանումը | «Երևան-Կենտրոն» | «Հրազդան» ՔԿՀ | «Նուբարաշեն» ՔԿՀ | «Վանաձոր» ՔԿՀ | «Վարդաշեն» ՔԿՀ | «Գորիս» ՔԿՀ | «ԴՀ» ՔԿՎ | «Էրեբունի» ՔԿՀ | «Սևան» ՔԿՀ | «Կոշ» ՔԿՀ | «Արթիկ» ՔԿՀ | «Արմավիր» ՔԿՀ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Չափի միավոր կգ | 158 | 789 | 3454 | 798 | 1140 | 271 | 936 | 368 | 1874 | 2513 | 1318 | 734 |
| Պահվող անձանց թիվը | 36 | 242 | 1055 | 216 | 248 | 54 | 182 | - | 519 | 730 | 402 | 196 |
| Տրամադրման ենթակա մրգի փաստացի տրամադրած չափաբաժինը (%-ով)[21] | 6 | 4 | 4 | 5 | 6 | 7 | 7 | - | 5 | 5 | 4 | 5 |

Խնդրահարույց է նաև պանրի տրամադրման հարցը: Թեև Կառավարության որոշմամբ նախատեսվում է յուրաքանչյուր կալանավորված/դատապարտված անձին տրամադրել օրական 25գ պանիր, սակայն 2014-2015թթ.-ին իրականացված այցելությունների ընթացքում ստուգվել է խոհանոցը և պահեստը: Ոչ մի հիմնարկում, բացի «Գորիս» և «Արմավիր» ՔԿՀ-ից, պանիր առկա չի եղել:

[20] 3880 (կամ միջինը 3900 մարդ) դատապարտյալ X 365 օր X 0,2 կգ միրգ = 283.240 կգ, այսինքն՝ օրական 776 կգ միրգ պետք է տրամադրվի ՀՀ ՔԿՀ-ներում պահվող անձանց:

[21] Հաշվարկի հիմքում ՀՀ ԱՆ ՔԿՎ կողմից տրամադրած փաստացի պահվող լրակազմի վերաբերյալ տվյալներն են՝ առ 01.01.2015թ., որպես միջինացված թիվ:

| Աղյուսակ 4. ՀՀ ԱՆ ՔԿՎ կողմից գնված և ՔԿՀ-ներին տրամադրած պանրի չափաբաժինը | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հիմնարկի անվանումը | «Երևան-Կենտրոն» | «Հրազդան» ՔԿՀ | «Նուբարաշեն» ՔԿՀ | «Վանաձոր» ՔԿՀ | «Վարդաշեն» ՔԿՀ | «Գորիս» ՔԿՀ | «ԴՀ» ՔԿՎ | «Էրեբունի» ՔԿՀ | «Սևան» ՔԿՀ | «Կոշ» ՔԿՀ | «Արթիկ» ՔԿՀ | «Աբովյան» ՔԿՀ |
| Չափի միավոր կգ | 111 | 514 | 2177 | 530 | 546 | 178 | 629 | 45 | 1247 | 1657 | 875 | 472 |
| Պահվող անձանց թիվը | 36 | 242 | 1055 | 216 | 248 | 54 | 182 | - | 519 | 730 | 402 | 196 |
| Տրամադրման ենթակա պանրի փաստացի տրամադրած չափաբաժինը (%-ով)[22] | 3 | 2 | 2 | 3 | 2 | 4 | 4 | - | 3 | 2 | 2 | 3 |

Ինչպես տեսնում ենք, անգամ փաստաթղթերի ուսումնասիրությունը հաստատում է այն հանգամանքը, որ Կառավարության որոշմամբ նախատեսված մրգի և պանրի չափաբաժինների միայն չնչին տոկոսն է տրամադրվում:

Դիտորդական խմբի կողմից ուսումնասիրվել է շոգեխաշած տավարի մսի պիտակը: Նախ, ըստ պիտակի, շոգեխաշած միսն արտադրվել է ք.Երևան, Արցախի 57 հասցեում գրանցված Ա/Ձ Հ.Հովսեփյանի կողմից, ինչը մտավախություն է առաջացնում, մասնավորապես՝ տվյալ հասցեում համապատասխան սարքավորումների առկայության մասով: Ավելին, www.e-register.am կայքի միջոցով համապատասխան տուրքի վճարումից հետո տվյալների ավելի ամբողջական ուսումնասիրությունը ցույց տվեց, որ **այս Ա/Ձ-ն 2012թ.-ից դադարեցրել է իր գործունեությունը:**




[22] Հաշվարկի հիմքում ՀՀ ԱՆ ՔԿՎ կողմից տրամադրած փաստացի պահվող լրակազմի վերաբերյալ տվյալներն են՝ առ 01.01.2015թ.:

Հարցումների արդյունքում պարզվել է, որ սննդամթերքի մատակարարման և պաշարների կառավարման գործընթացներն ամբողջովին կանոնակարգված չեն, ինչը հաճախ հանգեցնում է ծախսերի արդյունավետության նվազման: Մասնավորապես, մատակարարումների գրաֆիկի մասով առկա են էական խնդիրներ, ինչի հետևանքով, օրինակ, պաշարների ավելցուկ է ձևավորվում[23], ինչը չի նպաստում դրամական միջոցների արդյունավետ կառավարմանը[24]:

2014-2015թթ.-ին ոչ տոնական օրերին կատարված այցելությունների ընթացքում սառնարանում պահպանվող և այցելության օրը կերակուր պատրաստելու համար օգտագործվող թարմ միս առկա է եղել միայն «Հրազդան» ՔԿՀ-ում:

Որոշ ՔԿՀ-ներում խիստ խնդրահարույց են բանջարեղենի պահեստավորման պայմանները:

*«Արթիկ» ՔԿՀ բանջարեղենի պահեստը*





Հարկ է նշել, որ որոշ ՔԿՀ-ներում ստեղծված են ավելի լավ պայմաններ:

*«Արմավիր» ՔԿՀ-ի բանջարեղենի պահեստը*





[23] Օրինակ՝ շաքարավազը, կարագը, յուղը հիմնականում մատակարարվում են երկու ամիսը մեկ անգամ, սակայն պաշարների մոնիտորինգի արդյունքում արձանագրվել են դեպքեր, երբ առկա էին նշված ապրանքատեսակների՝ երկու ամսից ավել պահեստավորված պաշարներ:

[24] Առավել մանրամասն տե՛ս Հավելված 1-ում:

*«Աբովյան» ՔԿՀ բանջարեղենի պահեստը*





ՔԿՀ-ներում բանջարեղենի պիտանելիությունը երկարաձգելու նպատակով թարմ բանջարեղենը ձմռան ամիսներին թթվեցնում են և ճաշերը պատրաստում թթու բանջարեղենից: Համային խնդրից բացի, որոշ ՔԿՀ-ներում առկա է մեկ այլ խնդիր ևս. բանջարեղենը թթվեցվում և պահվում է ոչ հիգիենիկ պայմաններում: Օրինակ՝ «Գորիս» ՔԿՀ-ում օգտագործվում են մազութապատ հորեր:

*Ձախից՝ «Գորիս» և աջից՝ «Արմավիր» ՔԿՀ-ներում բանջարեղենի թթվեցման պայմանները:*





Որոշ ՔԿՀ-ներում կիրառվում են սանիտարահիգիենիկ տեսանկյունից ավելի ընդունելի/ համապատասխան տարաներ, օրինակ՝ «Աբովյան» ՔԿՀ-ում:



Որոշ հիմնարկներում, օրինակ՝ «Կոշ» ու «Սևան» ՔԿՀ-ներում, բանջարեղենի պահեստները հարմարեցված չեն երկարատև պահեստավորման համար: Խնդրահարույց է նաև ՔԿՀ-ների պահեստներում խոնավաչափի բացակայությունը, քանի որ հնարավոր չէ վերահսկել սննդի պահպանման պայմանները:

2014-2015թթ.-ին կատարված դիտարկումները ցույց են տվել, որ պահեստներում շաքարավազի մեծաքանակ մնացորդը կա. այն չի սպառվում:

## Դիետիկ սնունդ

ԵԽ ԽԿԿ-ն ընդգծել է առողջական խնդիրներ ունեցող անձանց հատուկ՝ առողջական վիճակով պայմանավորված սննդակարգ տրամադրելու պարտավորությունը և այդ հատուկ սննդակարգի նշանակման հարցում բուժանձնակազմի դերը:

ԵԽ Նախարարների կոմիտեի կողմից ընդունված Եվրոպական բանտային կանոնները հաստատելու մասին Rec(2006)2 հանձնարարականի կետ 22.6-ում ուղղակիորեն սահմանվում է, որ բժշկական անձնակազմը պետք է նշանակի դատապարտյալի սննդակարգի փոփոխություն՝ առողջապահական նկատառումներից ելնելով: Իսկ նույն փաստաթղթի 22.1 կետում հստակորեն նշվում է, որ ազատությունից զրկված անձանց սննդակարգը, ի թիվս այլ գործոնների, պետք է համապատասխանի իրենց առողջական վիճակին, կրոնին և մշակույթին: Սակայն, ինչպես նշեցինք, ՀՀ-ում առողջական կամ կրոնական նկատառումներից ելնելով՝ հատուկ սննդակարգ չի նախատեսվում, իսկ հիվանդներին տրամադրվում է ընդամենը հավելյալ սնունդ՝ առանց հաշվի առնելու նրանց հիվանդության առանձնահատկությունները և այդ հիվանդության դեպքում ցուցված սննդակարգը:

Թեև ՔԿՀ-ներում պահվող անձանց մի մասը տառապում է այնպիսի հիվանդություններով, որոնք պահանջում են հատուկ սննդակարգ (օրինակ՝ շաքարախտի դեպքում), սակայն նրանց համապատասխան դիետիկ սնունդ չի տրամադրվում: Արդյունքում, հիվանդություն ունեցող կալանավորները/դատապարտյալներն իրենց ցուցված

անհրաժեշտ սննդամթերքը ստանում են կա՛մ հանձնուքների միջոցով, կա՛մ սնվում են ընդհանուրի հետ, ինչի արդյունքում նրանց առողջական վիճակը վատթարանում է: Մի խումբ դատապարտյալների մոտ արձանագրվել է հեմոգլոբինի բավականին ցածր մակարդակ՝ սննդակարգով պայմանավորված:

Տարբեր պետություններում, որտեղ հիվանդ դատապարտյալների համար նախատեսված է հատուկ սննդակարգ, տարբերակված մոտեցում է ցուցաբերվում շաքարախտով, սիրտ-անոթային հիվանդություններով, հիպերտենզիայով, երիկամների հետ կապված հիվանդություններով, որոշ տեսակի քաղցկեղով տառապող անձանց համար, քանի որ նշված հիվանդությունների տարբեր դրսևորումներ հնարավոր է կանխարգելել հատուկ սննդակարգի միջոցով: Սխալ սննդակարգը նպաստում է ազատությունից զրկված անձի առողջական վիճակի վատթարացմանը, և պետության վրա դրվում է լրացուցիչ բեռ՝ ապահովել համապատասխան բուժում և դեղորայք:

Պետք է նշել, որ ՀՀ ՔԿՀ-ներում չի ապահովվում կրոնական առանձնահատկություններով պայմանավորված սննդակարգ: Գործնականում թեև խլամ դավանող անձանց խնդիրը մասամբ լուծվում է տավարի մսի պահածոյի օգտագործմամբ, սակայն բուսակեր և կրոնական համոզմունքների պատճառով տավարի միս չօգտագործող անձանց հատուկ սննդակարգը դե ֆակտո ապահովվում է միայն այն օրերին, երբ պահեստում առկա չէ միս կամ մսի պահածո:

Այս առումով ուշագրավ է Յակուբսկին ընդդեմ Լեհաստանի[25] գործով ՄԻԵԴ-ի վճիռը, ըստ որի, Լեհաստանն, ի դեմս լեհական քրեակատարողական հիմնարկի, խախտել է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 9-րդ հոդվածը՝ կրոնի ազատության իրավունքը, քանի որ, չնայած դատապարտյալի բազմաթիվ դիմումների, հրաժարվել է բուդդայականություն դավանող դատապարտյալին տրամադրել միս/մսամթերք չպարունակող սնունդ, այդ թվում՝ պատճառաբանելով, որ մեկ դատապարտյալի համար առանձին՝ միս չպարունակող սնունդ պատրաստելն անհիմն ծախսատար կլինի և անտեղի լրացուցիչ բեռ կհանդիսանա խոհանոցի անձնակազմի համար: Լեհական ՔԿՀ-ն նրան տրամադրել է միայն խոզի միս չպարունակող սնունդ: ՄԻԵԴ-ն ընդգծել է վերը նշված Եվրոպական բանտային կանոնների կարևորությունը ԵԽ անդամ-պետությունների համար:

## Հիգիենա

Հիգիենայի հարցը դիտարկվել է տարբեր, այդ թվում՝ սննդի պատրաստման, սննդի ընդունման, ինչպես նաև, սպասքը լվանալու պայմանների ապահովման տեսանկյուններից: Այս առումով, ԽԿԿ-ն Մեծ Բրիտանիայի վերաբերյալ զեկույցում նշել է, որ սպասքի լվանալու տեղը չպետք է զուգարանում լինի:

Թեև ՔԿՀ-ների խոհանոցներում փորձում են ապահովել սանիտարական նորմալ վիճակ, սակայն որոշ հիմնարկներում արձանագրվել են խնդիրներ: Օրինակ՝ «Նուբարաշեն» ՔԿՀ-ում խոհանոցում և խոհանոցին կից տարածքներում շատ ուժեղ գարշահոտ է՝

[25] Տե՛ս Յակուբսկին ընդդեմ Լեհաստանի (Jakóbski v. Poland), ՄԻԵԴ վճիռը, 2010թ., No. 18429/06, պարբ. 48.

պայմանավորված շենքի առանձնահատկություններով: Բացի այդ, չնայած ձեռնարկվող միջոցներին, խցերում և միջանցքներում միջատներ կան:

Նորաբաց «Արմավիր» ՔԿՀ-ում խոհանոցի և պահեստի պայմանները անհամեմատ լավն են և՛ շենքային պայմանների, և՛ սարքավորումների առկայության առումով:

*«Արմավիր» ՔԿՀ խոհանոցը*



«Աբովյան» ՔԿՀ խոհանոցը և ճաշարանն ավելի համեստ հնարավորություններ ունեն:



## ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Վերանայել ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում պահվող անձանց տրամադրվող սննդի օրական միջին չափաբաժինները, հանդերձանքի քանակը և դրանց շահագործման ժամկետները, անկողնային ու հիգիենիկ պարագաների քանակը և դրանց շահագործման ժամկետները սահմանող՝ ՀՀ կառավարության N1182-Ն որոշումը՝ դրանք համապատասխանեցնելու ընդունված չափանիշներին, մասնավորապես, սննդի էներգետիկ արժեքի և ողջամիտ զանազանության ապահովման նպատակով:

- Մշակել ճաշացանկեր՝ ապահովելով պատրաստվող ճաշերի սննդային արժեքը, երաշխավորելով ճաշացանկի ողջամիտ զանազանությունը և բացառել պատրաստվող ճաշերի կրկնությունն առնվազն մեկ շաբաթվա ընթացքում:

- Նախատեսել հիվանդությունների դեպքում, կրոնական կամ մշակութային առանձնահատկություններով պայմանավորված հատուկ սննդակարգ սահմանելու հնարավորություն և ընթացակարգ: Մասնավորապես, սիրտ-անոթային հիվանդություններ ունեցող և շաքարախտով տառապող անձանց տրամադրվող սննդում նատրիումի, յուղի, խոլեսթերինի և շաքարի մասնաբաժինը պետք է ցածր լինի:

- Վերանայել հիդրոլիզացված բուսական յուղի օգտագործման պրակտիկան և չափաբաժինը:

- Փաստացի տրամադրել ազատությունից զրկված անձանց թարմ մրգի՝ ՀՀ կառավարության N1182-Ն որոշմամբ սահմանված օրական չափաբաժինը:

- Առավել մեծ ուշադրություն դարձնել ցմահ ազատազրկում կրող դատապարտյալների սննդի որակի վրա՝ հաշվի առնելով թերսնման երկարաժամկետ բացասական ազդեցությունն առողջության վրա:

- Ապահովել ՔԿՀ-ներում սննդամթերքի պահեստավորման պատշաճ պայմաններ:

- Բացառել ոչ հիգիենիկ պայմաններում բանջարեղենի պահեստավորման և թթվեցման պրակտիկան:

- Պարբերաբար կազմակերպել դասընթացներ/վերապատրաստումներ սննդի պատրաստման աշխատանքներում ներգրավված անձանց համար, օրինակ՝ խոհարարի մասնագիտական ուսուցման դասընթաց դատապարտյալների համար: Նման ուսուցումը թույլ կտա ապահովել զբաղվածությունը ոչ միայն պատիժը կրելու ընթացքում, այլ նաև ազատվելուց հետո՝ նպաստելով անձի վերասոցիալականացմանը:

## Անձնական հիգիենայի և անկողնային պարագաներ

ՔԿՎ տրամադրած տվյալների համաձայն՝ մեկ կալանավորված կամ դատապարտված անձին տրամադրվող անկողնային և անձնական հիգիենայի պարագաների համար նախատեսված է ծախսել ամսական միջին հաշվարկով 1350 ՀՀ դրամ (օրական՝ 45 դրամ) անկողնային և 1050 ՀՀ դրամ (օրական՝ 35 դրամ) անձնական հիգիենայի պարագաների համար[26]:

Կառավարության հիշատակված որոշումների համաձայն՝ ազատությունից զրկված յուրաքանչյուր անձ մեկ տարվա ընթացքում պետք է ստանա 4 սավան, 2 բարձի երես, 4 երեսսրբիչ և 2 հիգիենիկ սրբիչ, իսկ երկու տարին մեկ պետք է ստանա մեկական ծածկոց, ներքնակ և բարձ:

[26] ՀՀ ԱՆ ՔԿՎ 21.04.2015թ. գրություն թիվ 10/16.2/4712-15:

Ստորև ներկայացնում ենք 2014թ.-ի ընթացքում ձեռք բերված անկողնային պարագաներն՝ ըստ ՔԿՀ-ների (տվյալները տրամադրել է ՀՀ ԱՆ ՔԿՎ-ն).

«Սևան» ՔԿՀ - 400 ծածկոց/2544 հազար, 1700 սավան/2516 հազար, 800 բարձի երես/480 հազար և 1700 երեսսրբիչ/850 հազար ՀՀ դրամ,

«Կոշ» ՔԿՀ - 300 ծածկոց/1908 հազար, 2150 սավան/3182 հազար, 1050 բարձի երես/630 հազար և 1900 երեսսրբիչ/950 հազար ՀՀ դրամ,

«Արթիկ» ՔԿՀ - 120 ծածկոց/763 հազար, 950 սավան/1406 հազար, 450 բարձի երես/270 հազար և 850 երեսսրբիչ/425 հազար ՀՀ դրամ,

«Նուբարաշեն» ՔԿՀ - 550 ծածկոց/3497 հազար, 3000 սավան/4440 հազար, 1620 բարձի երես/972 հազար ՀՀ դրամ և 2600 երեսսրբիչ /1300 հազար ՀՀ դրամ,

«Վանաձոր» ՔԿՀ - 100 ծածկոց/636 հազար, 650 սավան/962 հազար, 300 բարձի երես/180 հազար և 600 երեսսրբիչ/300 հազար ՀՀ դրամ,

«Վարդաշեն» ՔԿՀ - 60 ծածկոց/382 հազար, 550 սավան/814 հազար, 350 բարձի երես/210 հազար և 400 երեսսրբիչ/200 հազար ՀՀ դրամ,

«Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ -60 ծածկոց/382 հազար, 600 սավան/888 հազար, 250 բարձի երես/150 հազար և 600 երեսսրբիչ/300 հազար ՀՀ դրամ,

«Աբովյան» ՔԿՀ - 60 ծածկոց/382 հազար, 550 սավան/814 հազար, 270 բարձի երես/162 հազար և 500 երեսսրբիչ/250 հազար ՀՀ դրամ,

«Երևան-Կենտրոն» ՔԿՀ - 50 ծածկոց/318 հազար, 150 սավան/222 հազար, 60 բարձի երես/36 հազար և 50 երեսսրբիչ/25 հազար ՀՀ դրամ,

«Հրազդան» ՔԿՀ - 100 ծածկոց/636 հազար, 700 սավան/1036 հազար, 350 բարձի երես/210 հազար և 800 երեսսրբիչ/400 հազար ՀՀ դրամ,

«Արմավիր» ՔԿՀ - 400 ծածկոց/2544 հազար ՀՀ դրամ,

«**<u>Գորիս» ՔԿՀ-ում այդ տեսակի ապրանք ձեռք չի բերվել</u>**:

Ընդհանուր առմամբ, ծածկոցներ գնելու համար ծախսվել է 13.992.000, սավաններ գնելու համար՝ 16.280.000, բարձի երեսներ գնելու համար՝ 3.300.000 և երեսսրբիչներ գնելու համար՝ 5.000.000 ՀՀ դրամ:

Մշտադիտարկման արդյունքների համաձայն՝ ՔԿՀ-ներում պահվող հարցված անձանց մեծ մասը նախընտրում է թույլտվության դեպքում օգտվել իր անձնական, սեփական միջոցներով ձեռք բերված անկողնային պարագաներից կամ օգտվում են և՛ ՔԿՀ-ի, և՛ սեփական անկողնային պարագաներից: Միևնույն ժամանակ, մշտադիտարկման արդյունքում Խմբի անդամներն արձանագրել են, որ ՔԿՀ-ներում պահվող անձանց մեծամասնությունն անկողնային պարագաները սեփական միջոցներով են ձեռք բերել:

Միայն «Գորիս» ՔԿՀ-ում դատապարտյալները հայտնեցին, որ օգտվում են բացառապես ՔԿՀ տրամադրած անկողնային պարագաներից, թեև արձանագրվել է, որ մի շարք կալանավորված անձինք ընդհանրապես չէին օգտագործում սավաններ և բարձի երեսներ:

Անդրադառնալով անկողնային պարագաներից չօգտվելու հիմնական պատճառներին՝ որպես այդպիսին, նշվել է դրանց սպիտակ/շուտ կեղտոտվող, շուտ մաշվող և անորակ լինելը: Բոլոր ՔԿՀ-ներում հարցված ազատությունից զրկված անձինք օգտագործում են բացառապես անձնական երեսսրբիչներ:

Ինչ վերաբերում է անձնական հիգիենայի պարագաներին, դիտարկված խցերում և կացարաններում պահվող դատապարտյալների ճնշող մեծամասնությունն այս դեպքում ևս օգտվում էր սեփական միջոցներով ձեռք բերված օճառից, ածելիներից, ատամի մածուկից և խոզանակից:

Մինչդեռ, այս պարագաների գնման համար պետական բյուջեից միջոցներ են հատկացվում: ՔԿՀ կողմից տրամադրված ատամի մածուկը և հիգիենայի այլ պարագաները ցածրորակ են: Ստորև պատկերված է տրամադրվող ատամի մածուկի տուփը՝ «Angola», որի արժեքն է 15-30 ԱՄՆ ցենտ՝ մոտ 60-120 ՀՀ դրամ[27]: Այս առումով, պետք է ընդգծել, որ գնումների այսպիսի քաղաքականությունը՝ նախապատվություն տալ ամենաէժանին և հաշվի չառնել որակը, տվյալ դեպքում՝ ատամի մածուկ գնելիս, ոչ միայն պետական միջոցների ոչ արդյունավետ ծախս է, այլ նաև հանգեցնում է օգտագործողների ատամների և բերանի խոռոչի առողջական խնդիրների առաջացմանը կամ զարգացմանը: Ատամի մածուկի տուփի վրա բացակայում է հայերեն լեզվով մակնշումը:




Ավելին, դիտարկված պահեստներում առկա ածելիների արտադրող ընկերությունն անհայտ է, ինչպես նաև՝ տուփի վրա բացակայում է հայերեն լեզվով մակնշումը:

[27] Տե՛ս, օրինակ, http://www.alibaba.com/product-detail/Angola-Toothpaste_459019894.html?spm=a2700.7724857.29.64.44CYXV




Հաշվետու ժամանակահատվածում անդրադարձ է կատարվել նաև իրենց մոտ մինչև երեք տարեկան երեխա ունեցող անձանց համար հիգիենիկ պարագաներ տրամադրելու խնդրին: ՀՀ օրենսդրությունը թույլատրում է կին դատապարտյալներին մինչև երեք տարեկան երեխայի հետ համատեղ բնակություն (ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, հոդված 82, մաս 1): Հատկանշական է, որ մինչ 2015թ. հոկտեմբերի 31-ը ուժի մեջ գտնվող ՀՀ կառավարության 2003 թվականի ապրիլի 10-ի N413-Ն որոշումն այս հարցին չէր անդրադառնում և չէր նախատեսում մանկական սնունդ և երեխայի խնամքի համար անհրաժեշտ հագուստ, կոշկեղեն ու այլ պարագաներ տրամադրելու չափաբաժիններ: Միևնույն ժամանակ, ՔԿՀ ներքին կանոնակարգի 45-րդ կետով նախատեսվում է, որ «իր մոտ մինչև երեք տարեկան երեխա ունեցող կալանավորված անձը կամ դատապարտյալը ստանում է երեխայի խնամքի համար անհրաժեշտ պարագաներ և իրեր»[28]: Ինչպես տեսնում ենք, առկա է հակասություն ոլորտը կարգավորող ենթաօրենսդրական ակտերի միջև: Արդյունքում հիմնականում ՔԿՀ անձնակազմը և այլ դատապարտյալներն են աջակցում երեխա ունեցող կին դատապարտյալներին:

Այս բացթողումը շտկվել է ՀՀ կառավարության N1182-Ն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ 2015թ. հոկտեմբերի 31-ին, սակայն գործնականում մինչև 2015թ. վերջը երեխային խնամելու համար անհրաժեշտ սնունդ և պարագաներ չէին տրամադրվում: Կառավարության որոշման համաձայն՝ երեխա ունեցող կալանավորված կամ դատապարտված անձանց պետք է տրամադրվի ամսական 200 գ մանկական օճառ, 1 կգ լվացքի փոշի, 2 հատ մանկական հիգիենիկ խոնավ անձեռոցիկ, օրական 4 հատ մանկական տակդիր, վեց ամսվա ընթացքում 2 հատ մանկական կերակրաշիշ, մեկ տարվա ընթացքում 2 հատ ծծակ և մեկ հատ մանկական տաշտ 3 տարի օգտագործելու համար:

[28] ՀՀ կառավարության 2006թ. օգոստոսի 3-ի N1543-Ն որոշման հավելված, ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների Ներքին կանոնակարգ:

## Քրեակատարողական հիմնարկներում խոցելի խմբերի իրավունքների մասին

ՔԿՀ-ներում պահվող ազատազրկված անձինք հանդիսանում են հասարակության մի մասնիկ և, կրելով նույն կարծրատիպերը, առաջնորդվելով գրեթե նույն նորմերով (չգրված օրենքներով), դրսևորում են նույն վերաբերմունքը որոշ սոցիալական խմբերի հանդեպ: Այդ կարծրատիպերը, նորմերը, խորհրդային տարիներից մինչ օրս գրեթե չեն ենթարկվել լուրջ փոփոխությունների: Ավելին՝ նշենք, որ ՔԿՀ-ներում այդ դրսևորումները առավել ցայտուն են երևում, քան բաց հասարակությունում: Այդ իսկ պատճառով մինչ օրս լուրջ, արդիական խնդիր է հանդիսանում խոցելի խմբերի[29] իրավունքների ոտնահարման դրսևորումները ՔԿՀ-ներում, որտեղ առավել խոցելի են հետևյալ խմբերի ներկայացուցիչները.

- որոշակի առողջական խնդիրներ ունեցող անձինք,
- հանցագործ կանոններ և/կամ նորմեր խախտած, և/կամ այդ կանոններով չառաջնորդվող անձինք,
- որոշակի հանցագործություններ կատարած անձինք,
- թմրամիջոցներից կախվածություն ունեցող և մեթադոնային փոխարինող բուժում ստացող անձինք,
- նույնասեռականները:

Հարկ է նշել այն փաստը, որ գրեթե բոլոր ազատազրկված անձինք կարող են համարվել խոցելի խումբ, քանի որ ազատազրկումից հետո (և/կամ պատիժը կրելուց հետո) նրանք խնդիրներ են ունենում վերաինտեգրվելու հասարակության մեջ զուտ այն պատճառով, որ ազատազրկվածի կարգավիճակ են ունեցել:

Այնուամենայնիվ, 2014-2015թթ.-ին և նախորդ տարիների ընթացքում Դիտորդական խմբի կողմից արձանագրվել են այս խմբերի ներկայացուցիչների հանդեպ խտրական վերաբերմունքի և/կամ վատ վերաբերմունքի, խոշտանգումների դրսևորման դեպքեր: Վերոնշյալ իրավիճակը որևէ կերպ չի փոփոխվել այս տարիների ընթացքում:

**Որոշակի առողջական խնդիրներ ունեցող անձինք**

Այս խումբն իր մեջ ներառում է այն ազատազրկվածներին, որոնք ունեն հոգեկան առողջության հետ կապված խնդիրներ, հենաշարժողական խնդիրներ, հատուկ կամ հավելյալ սննդի (դիետիկ սննդի) կարիք, հիվանդ են տուբերկուլյոզով, ունեն ՄԻԱՎ: Հոգեկան առողջության հետ կապված խնդիրներ ունեցող անձինք հիմնականում պահվում

[29] Խոցելի խումբ՝ հասարակության որոշակի խումբ է կամ հասարակության մի հատված է, որը, այլ խմբերի կամ մնացած հասարակության հետ համեմատած, առավել մեծ ռիսկ ունի ենթարկվելու խտրականության բնորոշ գործողությունների՝ բռնությունների, բնական և/կամ տեխնածին աղետների, կամ տնտեսական ճգնաժամերի զոհ դառնալու:

են նույնանման առողջական խնդիրներ ունեցող անձանց հետ, այդ խցերը հիմնականում տարբերվում են տվյալ հիմնարկի այլ ազատազրկվածների խցերից իրենց անշուքությամբ և սանիտարահիգիենիկ վատ պայմաններով: Մտահոգիչ է այն հանգամանքը, որ այդ անձինք ժամանակին չեն տեղափոխվում համապատասխան բուժհաստատություններ: Բուժհաստատություն չտեղափոխելու, բուժում չնշանակելու մասին հարցադրումներին ՔԿՀ աշխատակիցները խուսափում են պատասխանել և/կամ տալիս են ոչ լիարժեք պատասխաններ:

Ինչ վերաբերում է հենաշարժողական խնդիրներ ունեցող ազատազրկված անձանց, ապա ՔԿՀ-ները չունեն համապատասխան շենքային պայմաններ այդպիսի խնդիրներ ունեցող ազատազրկվածներին պահելու համար: Որոշ ՔԿՀ-ներում («Հրազդան» և «Դատապարտյալների հիվանդանոց»[30]) փորձեր են արվել շենքային պայմանները հարմարեցնել նման առողջական խնդիրներ ունեցող անձանց համար, սակայն, դրանք հանդիսացել են մասնակի լուծման փորձեր և ոչ միշտ են խնդրին ամբողջական լուծում տվել: 11 ՔԿՀ-ներից միայն «Արմավիր» ՔԿՀ-ն է, որ ունի հենաշարժական առողջական խնդիրներ ունեցող ազատազրկված անձանց պահման համար հարմարեցված[31] շենքային պայմաններ:

Հատուկ կամ հավելյալ սննդի կարիք ունեցող անձինք զրկված են հատուկ սննդակարգ ստանալու հնարավորությունից: Հիմնական պատճառաբանությունն այն է, որ դա կարգավորված չէ օրենքով և/կամ իրավական այլ ակտերով: Քանի դեռ իրավական թերությունները (*օրենսդրական բացերը)* չեն շտկվել, այդպիսի առողջական խնդիրներ ունեցող անձինք շարունակելու են տանել **ֆիզիկական/առողջական և հոգեբանական տառապանքներ**:

### Հանցագործ կանոններ և/կամ նորմեր խախտած և/կամ այդ կանոններով չառաջնորդվող անձինք

Այս խմբի ներկայացուցիչներ են հանդիսանում հիմնականում այն ազատազրկվածները, ովքեր խախտել են «հանցագործ աշխարհի» կողմից ընդունված չգրված կանոնները («գողական օրենքները») կամ չեն առաջնորդվել դրանցով: Այս խմբի ներկայացուցիչները պահվում են առանձին խցերում, նույնանման կարգավիճակում հայտնված անձանց հետ: Այդ խցերը կոչվում են «թռածների և արվամոլների» խցեր և թե՛ ՔԿՀ-ների աշխատակիցների, թե՛ այլ ազատազրկվածների կողմից բնորոշվում են տարբեր բացասական և նվաստացնող անվանարկումներով: Ինքնին այս փաստն արդեն խոսում է նշված անձանց վրա հոգեբանական ճնշումների առկայության մասին: Հատկանշական է, որ վերջիններիս ներգրավում են այնպիսի աշխատանքներում, որոնք այլ

[30] Խմբին հայտնի է այդ երկու ՔԿՀ-ի մասին:

[31] «Արմավիր» ՔԿՀ-ն նոր է շահագործման հանձնվել (2014թ.) և կառուցվել է ԵՄ ֆինանսական աջակցությամբ և անմիջական վերահսկողությամբ:

ազատազրկվածների կողմից համարվում են նվաստացնող, օրինակ՝ կոյուղու և տարածքի մաքրման աշխատանքները:

**Որոշակի հանցագործություններ կատարած անձինք**

Հիմնականում այս խմբի մեջ մտնում են այն ազատազրկվածները, որոնք մեղադրվում են կամ ազատազրկվել են սեռական բնույթի հանցագործություններ կատարելու համար: Հիմնականում այդ անձինք դիմում են «ներկայացնում», այսպես կոչված՝ «թռածների և արվամոլների» խուց տեղափոխվելու համար: Սակայն այս խմբի ոչ բոլոր ներկայացուցիչներն են միանգամից դիմում «ներկայացնում»: Լինում են դեպքեր, երբ այդ անձինք, նախապես հայտնվելով այլ ազատազրկվածների հետ միևնույն խցում, արժանանում են նվաստացուցիչ վերաբերմունքի (ըստ ազատազրկվածների խոսքերի՝ «փչացվում են») այլ խցակիցների կողմից, որից հետո «ներկայացնում» են վերոնշյալ դիմումը՝ հետևելով այլոց խորհուրդներին: Այս խմբի ներկայացուցիչները նույնպես ենթարկվում են հոգեբանական ճնշումների և ֆիզիկական բռնության, որոշ դեպքերում նաև՝ սեռական բռնությունների, ոտնձգությունների այլ ազատազրկված անձանց կողմից:

**Թմրամիջոցներից կախվածություն ունեցող և մեթադոնային փոխարինող բուժում ստացող անձինք**

Այս խմբի մեջ են մտնում թմրամիջոցներից կախվածություն ունեցող և մեթադոնային փոխարինող բուժում ստացող անձինք: 2014թ. ընթացքում Խումբը բազմիցս ահազանգեր է ստացել այս խմբի ներկայացուցիչների և վերջիններիս փաստաբանների կողմից, որոնք հիմնականում վերաբերում էին ազատազրկվածներին մեթադոնային փոխարինող բուժման ծրագրի մեջ չընդգրկելու խնդրին:

Եղել են դեպքեր, երբ ազատազրկված անձինք շարունակում էին թմրամիջոց օգտագործել՝ գտնվելով ՔԿՀ-ում, քանի որ նրանք չէին կարողանում ընդգրկվել մեթադոնային փոխարինող բուժման ծրագրի մեջ: Բնական է, որ թմրամիջոցի հայթայթումը և օգտագործումը իրականացվում է անօրինական ճանապարհներով, ինչն, իր հերթին, առկա կոռուպցիոն ռիսկերի ցուցիչ է: Եղել են դեպքեր, երբ թմրամիջոցային կախում ունեցող ազատազրկված անձանց գտել են զրկանքի վիճակում, և բժշկական անձնակազմը ոչ մի պատշաճ աջակցություն չի ցուցաբերել: Այսպիսի կախումը որոշ դեպքերում բերում է նրան, որ վերոնշյալ խմբի ներկայացուցիչները ստիպված են լինում ՔԿՀ-ի աշխատակիցների հրահանգներով կատարել որոշակի գործողություններ, որպեսզի կարողանան ստանալ անհրաժեշտ թմրամիջոցը և/կամ դուրս չմնալ մեթադոնային բուժման ծրագրից: Այս խմբի ներկայացուցիչները պահվում են այլ ազատազրկված անձանց հետ համատեղ: Նրանց մասին առավել մանրամասն ներկայացված է սույն զեկույցի՝ «Բուժսպասարկում» բաժնի՝ «Թմրամիջոցներից կախվածություն և մեթադոնային փոխարինող բուժում» ենթաբաժնում:

**Նույնասեռականներ**

ՔԿՀ-ում առավել խոցելի կարգավիճակում են գտնվում նաև նույնասեռական համարվող անձինք: Բոլոր այս խմբի ներկայացուցիչները պահվում են իրենց համար նախատեսված խցերում, որոնք հիմնականում տարբերվում են նույն ՔԿՀ-ի այլ խցերից իրենց անշուքությամբ և ոչ բարվոք վիճակով: Հարկ է նշել, որ իրականում նույն խցում և կարգավիճակում գտնվողներից ոչ բոլորն են նույնասեռական եղել մինչ ազատազրկումը[32]: Ըստ ՔԿՀ-ի աշխատակիցների՝ նույնասեռական անձանց տեղափոխում են նույնասեռականների համար նախատեսված խցեր՝ իրենց գրավոր դիմումի հիման վրա (թեև, ինչպես արդեն նշեցինք, միշտ չէ, որ այդ անձինք նույնասեռական են լինում մինչև ազատազրկումը), որոնց մեջ որպես հիմք նրանք նշում են իրենց սեռական կողմնորոշվածությունը և պատիժը այլոց հետ նույն խցում կրելու անհնար լինելու փաստը: Եվ ըստ նույն աշխատակիցների՝ դա արվում է նրանց անվտանգությունը ապահովելու նպատակներից ելնելով, մասնավորապես՝ նրանց զերծ պահելու սեռական և այլ տիպի բռնությունից, շահագործումից, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից և այլն:

> Առաջին և ամենատեսանելի խտրական վերաբերմունքը ի հայտ է գալիս նույնասեռական անձանց խոցելի խմբերի համար նախատեսված խցերում պահելու փաստով, որոնք գրեթե բոլոր ՔԿՀ-ներում գտնվում են անբարենպաստ պայմաններում, այն է՝
>
> - կոտրված ապակիներով պատուհաններ (օրինակ՝ «Նուբարաշեն» ՔԿՀ),
> - անսարք վարդակներ,
> - անկայուն սենյակային ջերմաստիճան,
> - ոչ հիգիենիկ վիճակ,
> - կոտրված մահճակալներ,
> - ամբողջովին չվերանորոգված խցեր:

Այս խումբը, ինչպես նաև որոշակի հանցագործություններ կատարած, հանցագործ կանոններ և/կամ նորմեր խախտած, և/կամ այդ կանոններով չառաջնորդվող անձանց խմբերը նույնպես ենթարկվում են հոգեբանական ճնշումների և, որոշ դեպքերում, սեռական բռնությունների, ոտնձգությունների և շահագործման՝ այլ ազատազրկված անձանց կողմից: Նույնասեռական անձինք նույնպես՝ թե՛ ՔԿՀ-ի աշխատակիցների, թե՛ այլ ազատազրկվածների կողմից բնորոշվում են տարբեր բացասական և նվաստացնող բնութագրություններով և ներգրավվում են նվաստացնող աշխատանքներում[33] (ՔԿՀ-ներում որոշ աշխատանքներ այդպես են բնութագրվում այլ ազատազրկված անձանց կողմից): Ըստ ՔԿՀ-ների աշխատակիցների՝ այս տիպի աշխատանքներում խոցելի խմբերը և, հատկապես, նույնասեռականներն իրենց դիմումների համաձայն են ընդգրկվում,

[32] Հարկ ենք համարում նշել, որ «քրեական» չգրված օրենքների համաձայն՝ նույնասեռական անձի հետ սեռական հարաբերություն ունեցող հետերոսեքսուալ տղամարդը, որը սեռական ակտի ժամանակ հանդես է եկել «տղամարդու» դերում, չի դիտարկվում որպես SUS/նույնասեռական անձ:

[33] ՔԿՀ-ների տարածքի մաքրում, խցերի մաքրում, աղբահանում, սանհանգույցի, զուգարանների մաքրում և այլն: ՀՀ կառավարության 03.08.2006թ. թիվ 1543-Ն որոշման համաձայն՝ յուրաքանչյուր կալանավորված կամ դատապարտյալ անձ պետք է պահի իր անձնական հիգիենայի կանոնները, սակայն նույնասեռական անձանց հանձնարարվում և պարտադրվում է կատարել զուգարանի և լողասենյակի մաքրություն, աղբահանություն, տարածքի մաքրություն:

մինչդեռ նման իրավիճակը ՀՀ գրեթե բոլոր ՔԿՀ-ներում համատարած բնույթ է կրում (բացառությամբ «Վարդաշեն» ՔԿՀ-ի), ինչը հիմք է տալիս կարծելու, որ այդ դիմումները սեփական նախաձեռնությամբ չեն ներկայացվում:

Չնայած ՔԿՀ-ների աշխատակիցները բազմիցս զգուշացվել են, որ նույնասեռական և այլ խոցելի խմբերի անձանց պիտակավորումը համարվում է վիրավորանք, արժանապատվությունը նսեմացնող փաստ և ատելության խոսք, այնուամենայնիվ, դիտորդների կողմից պարբերաբար արձանագրվում է այն փաստը, որ ՔԿՀ աշխատակիցները շարունակում են տարբեր բացասական և նվաստացնող բնութագրումներ տալ նրանց:

Ըստ ՔԿՀ-ների աշխատակիցների՝ դատապարտյալներն ու կալանավորները ցանկություն չունեն **«նման»** մարդկանց հետ շփվել և օգտվել նույն սպասքից: Բանտային չգրված օրենքների համաձայն, եթե հետերոսեքսուալ անձը շփվում է նույնասեռական անձի հետ, ապա նա **«կոտրվում»** է և զրկվում է **«նորմալ մարդ»** կարգավիճակից: Այս հանգամանքները առավել խոցելի են դարձնում տվյալ խմբի ներկայացուցիչներին և հետագայում կարող են բերել հասարակություն վերաինտեգրման բարդությունների:

Այսպիսով՝ խոցելի խմբերը ակամայից կրկնակի պատիժ են կրում ՔԿՀ-ներում՝ ի տարբերություն այլ ազատազրկվածների: Այս կամ այլ խոցելի խմբի ներկայացուցիչ լինելը հանգեցնում է այդ անձանց նվաստացմանը, խոշտանգմանը, հոգեբանական ճնշմանը, շահագործմանը և առողջությանը վնաս հասցնելուն:

Այսպիսի վերաբերմունքը հակասում է **Ջոկյարտյան 9–րդ սկզբունքին,** որի համաձայն՝ պետությունները հնարավորինս ապահովում են բոլոր դատապարտյալների մասնակցությունն իրենց պահման մասին որոշումների կայացմանը, որը կհամապատասխանի իրենց սեռական կողմնորոշմանն ու գենդերային ինքնությանը, ապահովում են պաշտպանության միջոցներ բոլոր դատապարտյալների համար, ովքեր կարող են խոցելի լինել բռնության կամ անթույլատրելի վերաբերմունքի դրսևորման տեսանկյունից սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության շարժառիթով, ինչպես նաև ողջամիտ սահմաններում ապահովում են, որպեսզի այդ պաշտպանության միջոցները չուղեկցվեն ավելի շատ սահմանափակումներով, քան դրանք սովորաբար կիրառվում են այլ ազատազրկվածների նկատմամբ:
Այդուհանդերձ, Հայաստանի Հանրապետությունը պետք է ջանքեր ներդնի թե՛ ՔԿՀ-ների աշխատակիցների, թե՛ դատապարտյալների/կալանավորների գիտելիքների մակարդակը նույնասեռական անձանց և այլ խոցելի խմբերի վերաբերյալ բարձրացնելու ուղղությամբ և, միևնույն ժամանակ, պետք է միջոցներ ձեռնարկվեն, որոնք ուղղված կլինեն խտրականության մերժմանը:

Անհանդուրժող վերաբերմունքի, ատելության խոսքի, խարանի ու խտրականության առկայությունը թե՛ կալանավորների/դատապարտյալների, թե՛ ՔԿՀ աշխատակիցների կողմից հանգեցնում է **ԽՏՐԱԿԱՆ** վերաբերմունքի՝ նույնասեռական անձանց և այլ խոցելի խմբերի ներկայացուցիչների նկատմամբ, ինչը պայմանավորված է վերջիններիս մասին կարծրատիպային և կանխակալ, հանցավոր աշխարհի կողմից որպես «նորմ» ընդունված

չգրված օրենքներով, ինչպես նաև՝ **ՀՀ-ում խտրականությունն արգելող օրենքի բացակայությամբ**:

## Պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատում. 2014-2015թթ. իրավիճակի ներկայացում

Վերջին տարիներին Դիտորդական խմբի կողմից բարձրացված խնդիրների թվում որպես կենտրոնական և հրատապ լուծում պահանջող հիմնախնդիր ներկայացվել է պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատման հարցը։ Վերջինս, սակայն, չնայած իր կարևորությանը, մինչ օրս կարգավորում չի ստացել և Խմբի կողմից բազմիցս բարձրացված օրենսդրական և պրակտիկ խնդիրները շարունակում են արդիական մնալ։

Ելնելով հարցի կարևորությունից՝ Խմբի կողմից նախորդ տարվա ընթացքում իրականացվել է այս ինստիտուտին վերաբերող ներպետական օրենսդրության և միջազգային պրակտիկայի վերլուծություն, որը փոփոխությունների առաջարկություններով ներկայացվել են Արդարադատության նախարարությանն ու Ազգային ժողովին։ Միևնույն ժամանակ, պարբերաբար անց են կացվել քննարկումներ ու մամուլի ասուլիսներ։ Այնուհանդերձ, խնդիրը դեռևս շարունակում է չլուծված մնալ։

Պետք է նշել, որ պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատման համակարգը, որպես ազատազրկված անձի իրավական կարգավիճակի բաղկացուցիչ մաս, դատապարտյալների կողմից բնութագրվել է որպես ավելի կարևոր հարց, քան նյութատեխնիկական այն պայմաններն ու դրանց հետ կապված խնդիրները, որոնց նրանք առնչվում են պատիժը կրելու ընթացքում։ Պատահական չէ, որ այդ խնդրին Խմբի անդամները հանդիպել են ՔԿՀ-ներ կատարած յուրաքանչյուր այցի ժամանակ, քանի որ ազատությունից զրկված անձանց անհանգստացնող հիմնական հարցը հանդիսանում է պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատումը։

Խումբը բացահայտել է, որ հիմնական խնդիրները, որոնք ազդում են պայմանական վաղաժամկետ ազատման համակարգի վրա, հետևյալներն են․

- ինստիտուցիոնալ խնդիրներ
- օրենսդրական խնդիրներ
- պրակտիկայի խնդիրներ

Ինչպես գիտենք, գործող համակարգը ինստիտուցիոնալ առումով ներկայումս եռաստիճան է. համապատասխան ժամկետը լրանալուց հետո դատապարտյալը գրավոր դիմում է քրեակատարողական հիմնարկի վարչակազմին, վերջինս քննարկում է և որոշում է՝ արդյո՞ք տվյալ դատապարտյալի պայմանական ազատման հարցը ներկայացնել Անկախ հանձնաժողովին թե՝ չներկայացնել։ Ներկայացնելու դեպքում Անկախ հանձնաժողովը քննարկում է և որոշում կա՛մ մերժել, կա՛մ միջնորդություն

ներկայացնել դատարանին: Պայմանական ազատման վերջնական որոշումը կայացնում է դատարանը: Գործընթացը բավականին բարդեցված է, հետևաբար որոշումների կայացումը ընթանում է պրակտիկ խնդիրներով ու վերջնական արդյունքում գնահատվում անարդյունավետ:

Օրենսդրական խնդիրների առումով հատկանշական է այն հանգամանքը, որ բացակայում են օրենքով սահմանված չափանիշները, որոնց հիման վրա վերոնշյալ մարմինները կկարողանան որոշում կայացնել: Այս պատճառով էլ պրակտիկայում ընդունված որոշումները մնում են չհիմնավորված, իսկ մերժումները՝ դատապարտյալների համար անհասկանալի: Մինչդեռ այս ինստիտուտը նպատակ է հետապնդում կոնկրետ չափանիշների գնահատման հիման վրա, որոշակի պայմաններով անձին հնարավորություն տալ ազատության մեջ ինտեգրվելու հասարակությանը: Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վաղաժամկետ ազատման համար անհրաժեշտ չափանիշները պետք է այնպիսին լինեն, որ հնարավորություն տան ճիշտ գնահատել դատապարտյալի վարքագիծն ու նոր հանցանք գործելու հավանականությունը: Գնահատումն, ըստ էության, ներառում է կոնկրետ գործի պարբերական և մանրակրկիտ քննություն, դատապարտյալի հետ կապված դրական գործոնների, ռիսկի գործոնի, դատապարտյալի կարիքների ու դրանց միջամտելու անհրաժեշտության, ինչպես նաև՝ համապատասխան միջամտության վերաբերյալ դատապարտյալի արձագանքի գնահատում: Ընդհանուր առմամբ, գնահատման որոշումը պետք է ներառի՝ դատապարտյալի ուղղման առաջխաղացումը, սոցիալական և քրեական պատմությունը, ռիսկի գնահատման արդյունքները, անհրաժեշտության դեպքում՝ ռիսկի հատուկ գնահատումը, դատապարտյալի հիմնական պահանջմունքներն ու հանրության կողմից դրանց ընկալման հավանականությունը: Դիտորդական խումբը վաղաժամկետ ազատման դիմումների մերժման դեպքում նման գնահատման և գնահատման հիման վրա տրված պատճառաբանված որոշման երբևէ չի հանդիպել:

Անդրադառնալով պրակտիկայի խնդիրներին՝ Խումբն այն կարծիքին է, որ ամենախնդրահարույց հարցը շարունակում է մնալ օրենքով չսահմանված, սակայն պրակտիկայում ձևավորված՝ հանցագործությունների արգելված հոդվածների ցանկը, որոնց կապակցությամբ պայմանական վաղաժամկետ ազատում ուղղակի չի կիրառվում: Դա հանգեցնում է ինչպես դատապարտյալների նկատմամբ խտրականության, այնպես էլ՝ կամայական որոշումների կայացման:

Պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատման հարցի լուծումը և դրա արդյունավետության բարձրացումը ներկայումս կապվում է հանրապետությունում արդեն իսկ ներդրված պրոբացիոն ծառայության և տեղի ունեցող քրեական ու քրեական դատավարության օրենսգրքի փոփոխությունների հետ: Մասնավորապես, նշվում է, որ փուլային կարգով պրոբացիոն ծառայությունը ներդնելու և դրանում պենիտենցիար փուլը ներառելու պարագայում հիմք կստեղծվի պայմանական վաղաժամկետ ազատումը պրակտիկայում կիրառելու համար: Քրեական օրենսգրքի ընթացող փոփոխություններով այլընտրանքային պատժատեսակների ցանկի լրացումը նույնպես դրական ազդեցություն

կարող է ունենալ քննարկվող հարցի լուծման վրա: Պրոբացիոն ծառայության հայեցակարգով նախատեսված է, որ հատկապես պենիտենցիար և հետպենիտենցիար փուլերում ծառայության գործառույթներն են լինելու դատարանի կողմից պատժից ազատված անձանց վարքագծի նկատմամբ վերահսկողությունը՝ վերաինտեգրման համապատասխան ծրագրերի իրականացմամբ, ազատությունից զրկելու հետ չկապված պատժի դատապարտված անձի սոցիալական, հոգեբանական և իրավական օժանդակությունը և աջակցությունը, պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում անձի վարքագծի և ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված կարգով անձի վրա դրված որոշակի պարտականությունների կատարման նկատմամբ վերահսկողությունը, պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատված անձանց վարքագծի և դատարանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով համապատասխան անձի վրա դրված որոշակի պարտականությունների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացումը, և սոցիալական, հոգեբանական և իրավական օժանդակություն և աջակցություն իրականացնելը, ինչպես նաև դաստիարակչական բնույթի և բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կատարման նկատմամբ վերահսկողությունը:

Ամփոփելով, պետք է փաստել, որ չնայած պրոբացիոն ծառայության հայեցակարգը հաստատվել է ՀՀ կառավարության կողմից, մշակվել են օրենսդրական հիմքեր և գործարկվել են ծառայության պիլոտային գրասենյակներ, այնուհանդերձ, Խումբը վստահություն չունի, որ ներկայիս պայմաններում և կիրառման նման տեմպերով պրոբացիոն ծառայությունը կարող է դրական ազդեցություն ունենալ պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտի վրա: Միևնույն ժամանակ, ակնհայտ է, որ վաղաժամկետ ազատման համակարգի բարելավմանն ուղղակիորեն ուղղված փոփոխություններ դեռևս նկատելի չեն՝ ո՛չ ինստիտուցիոնալ, ո՛չ էլ օրենսդրական առումով: Իսկ քննարկվող համակարգի նպատակային նշանակությունը շարունակում է պրակտիկայում անիրագործելի մնալ՝ բացասաբար ազդելով ազատությունից զրկված անձանց իրավունքների պաշտպանության վրա:

2014-2015թթ. ընթացքում պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատման համակարգի գործունեության մասին առավել ցայտուն վկայում են Աղյուսակ 2-ում ներկայացված թվերը:

**Աղյուսակ 2. Վիճակագրական տվյալներ. 2014-2015թթ.-ին ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներից պատժից պայմանական վաղաժամկետ ազատված անձանց թվաքանակն՝ ըստ ՔԿՀ-ների**

| | 2014թ. | 2015թ. |
|---|---|---|
| «Նուբարաշեն» ՔԿՀ | 3 | 3 |
| «Երևան-Կենտրոն» ՔԿՀ | 0 | 1 |

| | | |
|---|---|---|
| «Արթիկ» ՔԿՀ | 18 | 12 |
| «Վանաձոր» ՔԿՀ | 5 | 2 |
| «Վարդաշեն» ՔԿՀ | 12 | 8 |
| «Գորիս» ՔԿՀ | 9 | 2 |
| «Աբովյան» ՔԿՀ | 7 | 4 |
| «Էրեբունի» ՔԿՀ | 3 | - |
| «Սևան» ՔԿՀ | 58 | 63 |
| «Կոշ» ՔԿՀ | 55 | 46 |
| «Դատ. հիվ.» ՔԿՀ | 10 | 4 |
| «Հրազդան» ՔԿՀ | 4 | 5 |
| «Արմավիր» ՔԿՀ | 0 | 3 |
| **Ընդամենը** | 184 | 153 |

Խմբի կողմից արձանագրված խնդիրների կապակցությամբ մշակվել են հետևյալ առաջարկությունները.

- Վերացնել «չգրված օրենքներով սահմանված արգելված հոդվածների» ցանկը, որոնց պարագայում պայմանական վաղաժամկետ ազատում չի կիրառվում:
- Նախատեսել գնահատման իրատեսական և հստակ չափանիշներ և կայացվող որոշումները հիմնավորել կոնկրետ չափանիշներով:
- Կրթական, մշակութային և սպորտային միջոցառումներին մասնակցելու չափանիշն ու դրա հիման վրա տրամադրվող միավորները գնահատել՝ հաշվի առնելով ՔԿՀ կողմից նմանատիպ միջոցառումներին մասնակցության համար ստեղծված հնարավորությունների:
- Աշխատանքային զբաղվածության չափանիշը ևս գնահատել ըստ ՔԿՀ կողմից առաջարկվող աշխատանքային հաստիքների առկայության ու մատչելիության:
- Անհատական ուղղման պլանի կատարումը գնահատել հոգեբանների պարբերական աշխատանքների արդյունքների հաշվի առնելով:
- Այն դեպքերում, երբ հանցագործությամբ պատճառված վնասը չի մարվել, ոչ թե մեխանիկորեն մերժել վաղաժամկետ ազատման հարցը, այլ օբյեկտիվորեն դիտարկել և գնահատել դատապարտյալի՝ ազատվելուց հետո վնասը հատուցելու համար միջոցներ հայթայթելու պատրաստակամությունը՝ չանտեսելով տուժողի շահերի պաշտպանության համաչափությունը:

- Տույժերի առկայության դեպքում հաշվի առնել դրանց տեսակն ու ազդեցությունը անձի ուղղման ու ռիսկայնության վրա: Օրինակ, հեռախոս պահելու պատճառով ստացած տույժն, ըստ էության, չի կարող խոսել դատապարտյալի բարձր ռիսկայնության մասին:
- Վարչակազմի կողմից ներկայացվող բնութագիրը/եզրակացությունը պետք է հիմնված լինի կոնկրետ չափանիշների վրա:
- Նախատեսել որոշման կայացման երկաստիճան համակարգ, որտեղ քննարկվող գործի վերաբերյալ հիմնական դերակատարումը կունենան ՔԿՀ վարչակազմը և դատարանը:

Նշված առաջարկություններն այսքանով չեն սահմանափակվում, և պայմանական վաղաժամկետ ազատ արձակման ինստիտուտի վերափոխման և նոր հայեցակարգի դեպքում Խումբը պատրաստ է քննարկել և ներկայացնել նոր առաջարկներ:

## Արգելված իրերի հայտնաբերման արդյունքում կիրառված միջոցների և կոռուպցիոն ռիսկերի գնահատում

Դիտորդական խմբի անդամները քրեակատարողական հիմնարկներ կատարած բազմաթիվ այցելությունների ընթացքում հանդիպումներ են ունեցել տարբեր արարքներ կատարելու համար պատժախցերում հայտնված դատապարտյալների հետ՝ պարզելու պատժախուց տեղափոխելու հիմքերը: Խմբի անդամների ունեցած հանդիպումներից պարզ է դարձել, որ դատապարտված և կալանավորված անձանց նկատմամբ կիրառված տույժերի գերակշռող մասը կիրառվում է արգելված իր՝ **<u>բջջային հեռախոս պահելու համար</u>**:

Լրացուցիչ ուսումնասիրությունները ցույց են տվել, որ արգելված իր (բջջային հեռախոս) պահելու համար դատապարտված և կալանավորված անձիք պատժվում են նկատողության, խիստ նկատողության կամ մինչև 15 օր տևողությամբ պատժախուց տեղափոխվելու միջոցով, սակայն ծառայողական քննություններ չեն իրականացվում դատապարտյալների մոտ հայտնված արգելված իրերի ՔԿՀ մուտք գործելու հանգամանքները պարզելու նպատակով: Մինչդեռ, ՔԿՀ արգելված իր բերելու համար նախատեսված է վարչական պատասխանատվություն 100.000-500.000 ՀՀ դրամի չափով:

2015թ. հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում ներքին կանոնակարգով սահմանված պատիժը կրելու կարգի և պայմանների խախտման համար 2835 անձ ենթարկվել է կարգապահական տույժերի, որից նկատողություն՝ 1056, խիստ նկատողություն՝ 593, պատժախուց՝ 1186:

Նույն ժամանակահատվածում ՔԿՀ-ներում պահվող անձանց մոտ հայտնաբերվել է 2458 բջջային հեռախոս[34]: 2015թ. ընթացքում կալանավորված անձանց և դատապարտյալների մոտ հայտնաբերված արգելված իրերի փաստի առթիվ ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչությունում անցկացվել է **<u>թվով 10 ծառայողական քննություն</u>**, որից 3-ի արդյունքներով ՔԿՀ 6 ծառայողի նկատմամբ կիրառվել են կարգապահական տույժեր[35]: ՔԿՀ-ների լիազոր անձանց կողմից 2015թ. ընթացքում բջջային հեռախոսներ հայտնաբերելու փաստի առթիվ հարուցվել է 21 ծառայողական քննություն, որից 11-ի արդյունքներով 19 քրեակատարողական ծառայող ենթարկվել է կարգապահական տույժերի:

2015թ. ընթացքում ՔԿՀ-ներում պահվող 2835 անձանց նկատմամբ կիրառված տույժերից ոչ մի որոշում չի բողոքարկվել: Ըստ ազատազրկված անձանց՝ դա պայմանավորված է ՀՀ-ում իրականացվող արդարադատության նկատմամբ վստահության բացակայությամբ: Բացի այդ, Խմբի հարցումներից պարզ դարձավ, որ ՔԿՀ աշխատակիցները կարգապահական տույժ նշանակելու մասին որոշումների օրինակները

[34] 25.01.2016թ. ՔԿՎ ԱԱ բաժնի պետ, արդարադատության գնդապետ Վ.Եղյազարյանի կողմից կազմված տեղեկանքը:

[35] 26.01.2016թ. ՔԿՎ ԱԱ բաժնի պետ արդարադատության գնդապետ Վ. Եղյազարյանի կողմից կազմված տեղեկանքը:

չեն տրամադրում տույժի ենթարկված անձանց, ինչպես նաև չի բացատրվում տվյալ որոշումների բողոքարկման կարգը:

ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում արգելված իրերի ներթափանցման փաստերի կապակցությամբ, ընդհանուր առմամբ, կատարվել է 31 ծառայողական քննություն[36], որը կազմում է 2458 բջջային հեռախոսի հայտնաբերման դեպքերի 3%-ը: Այսինքն՝ արգելված իր համարվող բջջային հեռախոսների՝ ՔԿՀ ներթափանցման ուղիները պարզելու համար 2015թ. քննություն է կատարվել արձանագրված դեպքերի ընդամենը 3%-ով:

ՀՀ վարչական իրավախախտումների մասին օրենքի 186-րդ հոդվածը վարչական պատասխանատվություն է նախատեսում ուղղիչ հիմնարկում, կալանավորվածներին պահելու վայրում կամ ձերբակալվածներին պահելու վայրում պահվող անձին արգելված առարկա հանձնելու կամ ցանկացած ձևով հանձնելու փորձ կատարելու համար, որի համար նախատեսված է տուգանք սահմանված նվազագույն աշխատավարձի **<u>հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի</u>** չափով: Այն դեպքում, երբ արարքը կատարվել է **<u>պետական ծառայողի</u>** կողմից՝ նախատեսված է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի **<u>երկուհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով</u>**:

Քրեակատարողական ծառայության մասին ՀՀ օրենսգրքով սահմանված են ՀՀ արդարադատության նախարարի, ՀՀ քրեակատարողական վարչության պետի քրեակատարողական հիմնարկի ղեկավարի լիազորությունները, ըստ որի՝ ՀՀ արդարադատության նախարարը[37], ՔԿՎ պետը[38] և ՔԿՀ ղեկավարը[39] օժտված են ծառայողական քննություններ նշանակելու լիազորությամբ:

Վերը նկարագրված փաստական և վկայակոչված իրավական նորմերը հիմք են տալիս պնդելու, որ թե՛ Արդարադատության նախարարությունը, թե՛ ՔԿՎ-ն, թե՛ ՔԿՀ ղեկավարներն արգելված իր համարվող բջջային հեռախոսները ՔԿՀ մտցնելու ուղղությամբ դրսևորել են անգործություն, որը հիմք է տալիս ենթադրելու կոռուպցիոն մեծ ռիսկերի գոյության հավանականության մասին՝ նրանց անմիջական մասնակցությամբ:

Դիտորդական խումբը իր 2013թ. ուսումնասիրությունների արդյունքում բավարար տեղեկություններ էր հավաքել այն մասին, որ, մասնավորապես, «Նուբարաշեն» ՔԿՀ-ում բջջային հեռախոս մտցնելու գինը կազմել է 5000-10.000 ՀՀ դրամ, որը վճարվում է ՔԿՀ աշխատակիցներին: Առանձին գումար է հարկավոր վճարել նաև բջջային հեռախոսը ՔԿՀ-ում պահելու համար, որը տրվում է հարկի հերթապահին: Գումարի չափը ամսական կազմում է 5000-10.000 ՀՀ դրամ: SIM քարտի արժեքը ՔԿՀ-ում միջինը 3000 ՀՀ դրամ է: Խուզարկության դեպքում կալանավորված կամ դատապարտված անձի մոտ հեռախոս հայտնաբերելու և առգրավելու դեպքում նույնպես գումար է տրվում: Եթե դա

[36] 27.01.2016թ. ՀՀ ԱՆ ՔԿՎ ներքին անվտանգության բաժնի պետ՝ Ա. Մնացականյանի կողմից կազմված տեղեկանքը:

[37] «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենք, 25-րդ հոդվածի 5-րդ մաս:

[38] «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենք, 26-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետ:

[39] «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենք, 28-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետ:

հայտնաբերվել է օպեր-լիազորի կողմից, ապա դա վերադարձնելն արժե միջինը 10.000 ՀՀ դրամ[40]:

Սույն ուսումնասիրության շրջանակներում պարզ դարձավ, որ «Նուբարաշեն» ՔԿՀ-ն մյուս հիմնարկների հետ համեմատ հեռախոս հայտնաբերելու գործում 1-ին տեղում է:

2015թ. ընթացքում քրեակատարողական հիմնարկներում հայտնաբերված բջջային հեռախոսների թիվն՝ ըստ ՀՀ ԱՆ ՔԿՎ կողմից տրամադրած տեղեկատվության՝ «Նուբարաշեն» ՔԿՀ- 1001, «Վարդաշեն» ՔԿՀ- 97, «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ- 97, «Աբովյան» ՔԿՀ- 2, «Արթիկ» ՔԿՀ- 278, «Վանաձոր» ՔԿՀ- 217, «Կոշ» ՔԿՀ- 139, «Գորիս» ՔԿՀ- 30, «Արմավիր» ՔԿՀ- 232, «Սևան» ՔԿՀ- 113, «Հրազդան» ՔԿՀ- 251:

«Նուբարաշեն» ՔԿՀ-ում 1001 անձանց մոտ հայտնաբերվել է առնվազն 1001 բջջային հեռախոս: Ըստ Դիտորդական խմբի 2013թ. զեկույցի՝ յուրաքանչյուր հեռախոս ՔԿՀ մտցնելն արժե 5.000-10.000 ՀՀ դրամ: Այսինքն, ըստ սովորական հաշվարկի, 1001-ը բազմապատկած 10.000-ով ստացվում է 10.010.000 ՀՀ դրամ: Չանդրադառնալով պահման և այլ անօրինականությունների համար վճարվող գումարներին՝ կարող ենք արձանագրել, որ «Նուբարաշեն» ՔԿՀ-ում հայտնաբերված 1001 բջջային հեռախոսների համար դատապարտյալները և կալանավորված անձիք ՔԿՀ աշխատակիցներին վճարել են առնվազն 10.010.000 ՀՀ դրամ:

Դիտորդական խումբը տվյալ խնդրին անդրադարձել է նաև 2013թ. զեկույցում: Հատկանշական է այն հանգամանքը, որ «Նուբարաշեն» ՔԿՀ-ից բջջային հեռախոսների հայտնաբերման թիվը աճել է 3.5 անգամ. 2014թ. ընթացքում, ըստ պաշտոնական տվյալների, նույն ՔԿՀ-ում հայտնաբերվել էր ընդամենը 271 բջջային հեռախոս, իսկ 2015թ. ընթացքում հայտնաբերվել է 1001 հատ:

[40] Տե՛ս՝ ՀՀ ԱՆ ՔԿՀ և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող դիտորդական խմբի 2013թ. գործունեության տարեկան հաշվետվություն, էջ 25-26:

# Հավելված 1. ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԱՌԿԱ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԻՍԿԵՐԻ ՎԵՐԱՀԱՆՈՒՄ

Փորձագետի կողմից առաջարկվել ու կիրառվել են մի շարք նոր մոտեցումներ, որոնք կարծում ենք, որ որոշակիորեն բարելավել են կատարված վերլուծության որակը և ծածկվող հարցերի շրջանակը: Վերոհիշյալ մոտեցումների հետ կապված իրավիճակը բնութագրելու և վերլուծելու համար կազմվել և ՀՀ արդարադատության նախարարին է ուղարկվել 24.02.2015թ. N 15-09 գրությունը:

**ՔԿՀ աշխատակիցների աշխատավարձային քաղաքականությունը**

Սույն ենթաուղղության շրջանակներում փորձել ենք ուսումնասիրել.

ա) ՔԿՀ-ի աշխատողների անվանական միջին ամսական աշխատավարձային տարբերություններն ըստ պաշտոնների և ըստ ՔԿՀ-ի:

բ) համադրություններ պետական համակարգում աշխատողների միջին ամսական աշխատավարձի հետ:

*ՔԿՀ-ի աշխատողների միջին ամսական անվանական աշխատավարձային տարբերություններն՝ ըստ պաշտոնների և ըստ ՔԿՀ-ի:*

Աղյուսակ 1. ՔԿՀ-ի հաստիքացուցակը և աշխատողների միջին ամսական անվանական աշխատավարձային տարբերություններն՝ ըստ պաշտոնների և ըստ հիմնարկների, 2014թ.

| | Պաշտոն ՔԿՀ-ում | Նուբ. | Վան. | Վարդ. | Գորիս | Սևան | Կոշ | Արթիկ | ԴՀ | Աբով. | Երևան | Արմ. | Հրազդ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Պետ | 445122 | 420650 | 409407 | 445122 | 420650 | 451822 | 453122 | 432566 | 445122 | 432556 | 432556 | 442556 |
| 2 | Պետի տեղակալ | 406761 | 413154 | 368465 | 392872 | 404722 | 416107 | 421154 | 410410 | 402131 | 415028 | 422302 | 408604 |
| 3 | պատ. հերթապահ | 409572 | 390225 | 398162 | 395682 | 362761 | 416107 | 409139 | 398328 | 412218 | 403785 | 400974 | 397049 |
| 4 | բ/պետ | 369178 | 326731 | 312438 | 321020 | 332384 | 340936 | 333196 | 344565 | 335439 | 324747 | 340863 | 334460 |
| 5 | բ/պետի տեղակալ | 322598 | 311850 | 334007 | | 328054 | 329022 | 324150 | 316150 | | | 307551 | 321850 |
| 6 | տեղամասի պետ | | | | 316149 | | | | | | | | |
| 7 | բ/մունքի պետ | 317882 | 316149 | 316149 | | | | 324150 | 378727 | | | 307551 | |
| 8 | խ/ ղեկավար | | 291677 | 287709 | 283741 | 283741 | 298377 | 299678 | 306390 | 296967 | 299355 | 299614 | 293478 |
| 9 | գլխ. մասնագետ | 291559 | 280764 | 285130 | 296572 | 303228 | 285225 | 295888 | 298160 | 277598 | 275142 | 273643 | 289866 |
| 10 | առաջ. մասնագետ | 196123 | 188161 | 195708 | 189632 | 195090 | 202387 | 197574 | 194402 | 192524 | 200632 | 192533 | 199510 |
| 11 | I կ/մասնագետ | 189878 | 187007 | 188098 | 189028 | 186471 | 201053 | 197983 | 194748 | 194141 | | 178578 | 188578 |
| 12 | II կ/մասնագետ | 186517 | 185500 | 187741 | 170462 | 185460 | 202155 | 190466 | 186820 | 189784 | 175036 | 181134 | 176645 |
| 13 | III կ/մասնագետ | 170927 | 167340 | 178867 | 171252 | 169165 | 189848 | 180043 | 178416 | 181002 | 173489 | 171006 | 166875 |
| 14 | կրտ. մասնագետ | 161987 | 161415 | 168505 | 159460 | 159045 | 171405 | 174649 | 177817 | 167119 | 169674 | 150884 | 162950 |

Ինչպես ցույց է տալիս Աղյուսակ 1-ում ներկայացված տվյալների համեմատությունը, ՔԿՀ պաշտոնների համար վճարվող աշխատավարձերի տարբերությունները որևէ նշանակալի ռիսկեր չեն վերհանել, և, ընդհանուր առմամբ, համապատասխանում են տարիֆիկացման ընդունված մոտեցումներին:

*Համադրություններ պետական համակարգում աշխատողների միջին ամսական աշխատավարձի հետ*

Միջին ամսական անվանական աշխատավարձը քրեակատարողական ծառայողների համար կազմում է ա) առավելագույնը՝ 402.000 դրամ, միջինը՝ 280.000 դրամ, նվազագույնը՝ 175.000 դրամ:

Հարկ է նշել, որ ՔԿ ծառայողների միջին ամսական անվանական աշխատավարձի՝ պետական հատվածի համանման ցուցանիշի համեմատության պարագայում «ոչ մրցակցային մոտեցումներ», որոնք կարող են նպաստել կոռուպցիոն ռիսկերի դրսևորմանը, չեն արձանագրվել: Ավելին, նույնիսկ միջին ամսական անվանական նվազագույն աշխատավարձի մակարդակը գերազանցում է ՀՀ-ում պետական հատվածի համանման ցուցանիշը մոտ 20%-ով:

Ինչպես ցույց են տալիս ստացված տվյալները, աշխատավարձային ներկա քաղաքականությունը և ՔԿՀ աշխատավարձային մեծությունները որևէ գործոնային կապվածություն չունեն տվյալ ՔԿՀ-ում պահվող ազատազրկվածների թվաքանակի հետ, ինչը կարող է ***առաջացնել մոտիվացիոն բնույթի խնդիրներ*** (Աղյուսակ 2): Խնդիրն ավելի ցայտուն է, երբ մենք համադրում ենք, օրինակ՝ «Նուբարաշեն» կամ «Կոշ» ՔԿՀ-ում մեկ աշխատողին բաժին ընկած ազատազրկվածների թվաքանակը «Գորիս» կամ «Երևան-Կենտրոն» ՔԿՀ հետ:

***Նշված պնդումն ավելի է ամրապնդվում, երբ համադրում ենք թափուր հաստիքների քանակը: Մասնավորապես, ինչպես տեսնում ենք, այն ՔԿՀ-ում, որտեղ մեկ ծառայողի ծանրաբեռնվածությունը ավելի բարձր է, ավելի շատ են թափուր աշխատատեղերը:***

Աղյուսակ 2. ՔԿՀ ծառայողների ծանրաբեռնվածության գնահատումը, 2014թ.

| Ցուցանիշ | Նուբ. | Վան. | Վարդ. | Գոր. | Սևան | Կոշ | Արթիկ | ԴՀ | Աբ. | Եր. | Հր. | Էր. | Ընդ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ՔԿՀ-ում փաստացի աշխատողների թիվը | 265 | 179 | 153 | 108 | 183 | 183 | 203 | 221 | 164 | 41 | 120 | - | 1820 |
| Ազատազրկվածների թիվը | 1055 | 216 | 248 | 54 | 519 | 730 | 402 | 182 | 196 | 36 | 242 | | 3880 |
| Մեկ աշխատողին բաժին ընկնող ազատազրկվածների թիվը | 4.0 | 1.2 | 1.6 | 0.5 | 2.8 | 4.0 | 2.0 | 0.8 | 1.2 | 0.9 | 2.0 | | |
| Թափուր հաստիքների քանակը | 21 | 18 | 5 | 5 | 18 | 6 | 12 | 22 | 4 | 3 | 15 | | 129 |

## Առաջարկություն

Մեր կարծիքով, նպատակահարմար է փոփոխել աշխատավարձային քաղաքականության գործող պրակտիկան, մասնավորապես, ՔԿՀ աշխատավարձի մեծությունը կարելի է որոշակիորեն պայմանավորել, օրինակ,տվյալ ՔԿՀ-ում ազատազրկվածների թվաքանակով:

### Բռնագանձված իրերի մասով վիճակագրական տվյալների ուսումնասիրություն

Սույն ենթաուղղության շրջանակներում փորձել ենք ուսումնասիրել.

ա) հայտնաբերված և առգրավված իրերի մասով վիճակագրությունը,

բ) կարգապահական ցուցանիշները բնութագրող վիճակագրությունը և գնահատել կարգապահության մասով ՔԿՀ ռիսկայնությունը,

գ) ՔԿՀ-ի բեռնվածությունը և ՀՀ ֆինանսների նախարարության հրամանով սահմանված պահանջների հետ համադրության մեջ:

*Հայտնաբերված և առգրավված իրերի մասով վիճակագրություն*

Աղյուսակ 3. Հայտնաբերված և առգրավված իրերի դինամիկան ՔԿՀ-ում, 2014թ.

| Ցուցանիշ | Նուբ. | Վան. | Վարդ. | Գոր. | Սևան | Կոշ | Արթիկ | ԴՀ | Աբ. | Եր. | Հր. | Ընդ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ՔԿՀ-ում փաստացի աշխատողների թիվը | 265 | 179 | 153 | 108 | 183 | 183 | 203 | 221 | 164 | 41 | 120 | 1820 |
| Խուզարկությամբ հայտնաբերված և առգրավված բջջայինների թիվը | 950 | 351 | 106 | 36 | 165 | 134 | 192 | 85 | 3 | 3 | 434 | 2459 |
| Խուզարկությամբ հայտնաբերված և առգրավված կտրող-ծակող գործիքների թիվը | 2718 | 50 | 22 | 11 | 548 | 213 | 112 | 113 | 2 | 3 | 53 | 3845 |
| Մեկ ազատազրկվածից առգրավված իրերի թիվը | 3.5 | 1.9 | 0.5 | 0.9 | 1.4 | 0.5 | 0.8 | 1.1 | 0.0 | 0.2 | 2.0 | |
| Մեկ աշխատակցին բաժին ընկնող առգրավված իրերի թիվը | 13.8 | 2.2 | 0.8 | 0.4 | 3.9 | 1.9 | 1.5 | 0.9 | 0.0 | 0.1 | 4.1 | |
| Մեկ աշխատողին բաժին ընկնող ազատազրկվածների թիվը | 4.0 | 1.2 | 1.6 | 0.5 | 2.8 | 4.0 | 2.0 | 0.8 | 1.2 | 0.9 | 2.0 | |

Ըստ ՀՀ ԱՆ ՔԿՎ պաշտոնական կայքի՝[41] քրեակատարողական հիմնարկների համապատասխան ստորաբաժանումների ծառայողների կողմից իրացված օպերատիվ գործողությունների արդյունքում, ինչպես նաև դատապարտյալներին և կալանավորված անձանց բերված հանձնուքների զննությամբ 2014թ. 9 ամիսների ընթացքում հայտնաբերվել և առգրավվել է, ընդհանուր առմամբ, 66.72982 գրամ թմրանյութ և 634 լ ոգելից խմիչք (տես Աղյուսակ 4):

Աղյուսակ 4. Թմրանյութերի և ոգելից խմիչքների առգրավման վիճակագրությունը 2014թ. հունվար-սեպտեմբերին

| **Թմրանյութի տեսակը** | **Չափաքանակը** | **Ոգելից խմիչքի տեսակը** | **Չափաքանակը (լ)** |
|---|---|---|---|
| ափիոն | 3.73 գ | Ինքնաշեն օղի | 615.33 |
| մարիխուանա | 57.022գ | սպիրտ | 6.75 |
| բուպրենորֆին | 1.13346գ | կոնյակ | 10.4 |
| մեթադոն | 2.025գ | | |
| հաշիշ | 2.64գ | | |
| տետրահիդրոկանաբինոլ | 2.284գ | | |

## Առաջարկություն

Ցանկալի կլինի թմրանյութերի, ոգելից խմիչքների և մեթադոնի բաշխման վիճակագրությունը ներկայացնել ըստ ՔԿՀ-ի:

*Կարգապահական ցուցանիշները բնութագրող վիճակագրությունը (ՔԿՀ ռիսկայնությունը)*

Վիճակագրական տվյալների ուսումնասիրությունը վեր է հանում առգրավումների բավական բարձր ցուցանիշ, ինչը հակասական զգացումներ է առաջացնում. մի կողմից դրական է, որ խուզարկության արդյունքում առգրավվել է շուրջ 6300 ապօրինի իր (մեկ ազատազրկվածի հաշվով՝ շուրջ 1.6 իր), մյուս կողմից ներկայացված տվյալներով հնարավոր չէ խորքային եզրահանգումներ անել, քանի որ վիճակագրությունը հստակ չի մատնանշում, թե առգրավված իրերի որ մասն է

[41] www.ced.am

առգրավվել ՔԿՀ-ում բանտախցերի խուզարկության արդյունքում և որ մասն է առգրավվել նախնական զննման արդյունքում, ինչը կարող էր լրացուցիչ եզրահանգումների տեղիք տալ և ավելի ճիշտ պատկերացումներ տալ վերահսկողական ընթացակարգերի մասին:

***Հարկ է նշել, որ առգրավման ենթակա իրերի ավելի մեծ քանակ է նկատվում այն ՔԿՀ-ում, որտեղ առկա է ազատազրկվածների ավելի մեծ խտություն: Բացի այդ, նկատում ենք, որ նման ՔԿՀ-ում բարձր են նաև ինքնավնասումների թիվը:***

Աղյուսակ 5. ՔԿՀ-ում կարգապահությունը բնութագրող ցուցանիշները, 2014թ.

| Ցուցանիշ | Նուբ. | Վան. | Վարդ. | Գոր. | Սևան | Կոշ | Արթիկ | ԴՀ | Աբ. | Եր. | Հր. |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ՔԿՀ-ում փաստացի աշխատողների թիվը | 265 | 179 | 153 | 108 | 183 | 183 | 203 | 221 | 164 | 41 | 120 |
| Ազատազրկվածների թիվը | 1055 | 216 | 248 | 54 | 519 | 730 | 402 | 182 | 196 | 36 | 242 |
| Խուզարկությամբ հայտնաբերված և առգրավված բջջային հեռախոսների թիվը | 950 | 351 | 106 | 36 | 165 | 134 | 192 | 85 | 3 | 3 | 434 |
| Խուզարկությամբ հայտնաբերված և առգրավված կտրող-ծակող գործիքների թիվը | 2718 | 50 | 22 | 11 | 548 | 213 | 112 | 113 | 2 | 3 | 53 |
| Ընդամենը առգրավված իրեր | 3668 | 401 | 128 | 47 | 713 | 347 | 304 | 198 | 5 | 6 | 487 |
| Մեկ աշխատակցին բաժին ընկնող առգրավված իրերի թիվը | 13.8 | 2.2 | 0.8 | 0.4 | 3.9 | 1.9 | 1.5 | 0.9 | 0.0 | 0.1 | 4.1 |
| Մեկ ազատազրկվածից առգրավված իրերի թիվը | 3.5 | 1.9 | 0.5 | 0.9 | 1.4 | 0.5 | 0.8 | 1.1 | 0.0 | 0.2 | 2.0 |
| ՔԿՀ աշխատակիցների ստացած տույժերը | 16 | 12 | 4 | 14 | 8 | 1 | 17 | 9 | 5 | 0 | 5 |
| ՔԿՀ աշխատակիցների ազատումները | 26 | 20 | 3 | 12 | 13 | 5 | 19 | 12 | 9 | 2 | 11 |
| Տույժ ստացածների տեսակարար կշիռը աշխատակիցների նկատմամբ, %-ով | 6 | 6.7 | 2.6 | 13 | 4.4 | 0.5 | 8.4 | 4.1 | 3.0 |  | 4.2 |
| Ազատվածների տեսակարար կշիռը աշխատակիցների նկատմամբ, %-ով | 9.8 | 11.2 | 2.0 | 11.1 | 7.1 | 2.7 | 9.4 | 5.4 | 5.5 | 4.9 | 9.2 |
| Ընդամենը ՔԿՀ աշխատակիցների նկատմամբ կիրառվող պատժամիջոցները | 42 | 32 | 7 | 26 | 21 | 6 | 36 | 21 | 14 | 24.9 | 16 |
| Մեկ աշխատողին բաժին ընկնող պատժամիջոցների տեսակարար կշիռը | 15.8 | 17.9 | 4.6 | 24.1 | 11.5 | 3.3 | 17.7 | 9.5 | 8.5 | 4.9 | 13.3 |
| Ինքնավնասումների թիվը | 64 | 45 | 2 | 1 | 5 | 4 | 89 | 12 | 7 | 0 | 33 |
| Ինքնավնասումների տեսակարար կշիռը ազատազրկվածների նկատմամբ, %-ով | 6.1 | 20.8 | 0.8 | 1.9 | 1.0 | 0.5 | 22.1 | 6.6 | 3.6 | 0 | 13.6 |

Բացի այդ, մեր կողմից փորձ է կատարվել ուսումնասիրել և համադրել ՔԿՀ աշխատակիցների նկատմամբ կիրառվող տույժերի դինամիկան և ինքնավնասումների ցուցանիշը:
Ինչպես տեսնում ենք, այն ՔԿՀ-ում, որտեղ ինքնավնասումների թիվը մեծ է, մեծ է նաև տվյալ ՔԿՀ-ում տույժերի թիվը:
***Հարկ է նշել, որ ինքնավնասումների բարձր մակարդակը վկայում է դատապարտյալների հետ կատարվող սոցիալ-հոգեբանական աշխատանքների ցածր մակարդակի ու վերահսկողական բնույթի թերությունների մասին:*** Նշվածի համատեքստում, աշխատանքների առավել ցածր արդյունավետություն է նկատվում «Վանաձոր», «Արթիկ» և «Հրազդան» ՔԿՀ-ներում: **Միաժամանակ, ավելի քան տարօրինակ է, որ ոչ մի հոգեբանի նկատմամբ որևէ կարգապահական պատիժ չի իրականացվել:**

**Առաջարկություն**

-Կոռուպցիոն ռիսկերի առումով հարկ է նշել, որ հնարավոր է հեռախոսների բազմակի շրջանառություն, ուստի ցանկալի է հասկանալ՝ ինչ է տեղի ունենում առգրավված հեռախոսների հետ և ինչպես են կանխվում նման ռիսկերը:

Ընդհանրապես, կարելի է քննարկել բջջային հեռախոսների կիրառությունը ՔԿՀ-ում թույլատրելու հնարավորությունը, ինչը կնվազեցնի ՔԿՀ ծառայողների կողմից կոռուպցիոն գործարքներում ներգրավվելու հնարավորությունը:
-Բարելավել վիճակագրական տվյալների ձևաչափերը, հայցված տվյալները դարձնել հանրամատչելի և պարբերական թարմացումներ կատարել:

*ՔԿՀ-ի բեռնվածության ուսումնասիրություն և ԱՆ հրամանով ՔԿՀ-ում սահմանված առավելագույն թվաքանակի համադրություն*

Հարկ է նշել, որ վիճակագրություն չի վարվում ՔԿՀ-ում շահագործման ենթակա տարածքների մակերեսի մասով: Ըստ տրամադրված տեղեկության՝ ՀՀ ԱՆ ՔԿՀ-ների ընդհանուր բնակելի մակերեսը կազմում է մոտ 16.000 քմ: Նույն տեղեկանքի համաձայն՝ 2014թ. ազատազրկվածների միջին թվաքանակը կազմել է 3900 մարդ: Ըստ այդմ, ստացվում է, որ յուրաքանչյուր ազատազրկվածին բաժին է ընկնում մոտ 4.1 քմ բնակելի մակերես, ինչը միջինացված մոտեցման դեպքում ֆորմալ առումով բավարարում է օրենքով սահմանված նվազագույն չափանիշները: ***Այնուհանդերձ, նշված տեղեկությունը աչքի է ընկնում թվերի կլորությամբ, ինչը նվազեցնում է դրա արժանահավատությունը, բացի այդ, հասկանալի չէ, թե ինչու է կիրառվում «մոտ» տերմինը:***
Հարկ է նշել, որ ՀՀ ԱՆ N30-Ն հրամանով (28 փետրվարի, 2012թ.) սահմանվել է ՔԿՀ-ում պահվող ազատազրկվածների առավելագույն թիվն՝ ըստ տեսակների:
Ինչպես ցույց են տալիս մոնիտորինգի արդյունքները, որոշ դեպքերում սահմանված նվազագույն սահմանաչափերը չեն պահպանվում, մասնավորապես, ասվածն ամբողջությամբ վերաբերում է «Արթիկ», «Կոշ», «Նուբարաշեն» և «Հրազդան» ՔԿՀ-ներին:

Աղյուսակ 6. ՔԿՀ-ում սահմանված նվազագույն սահմանաչափերի պահպանումը

| ՔԿՀ անվանումը | Առավելագույն պահվողների թվաքանակը | Պահվողների թվաքանակն, ըստ տրամադրված տեղեկության | Օրենքի դրույթների կատարման ընթացքը |
|---|---|---|---|
| «Գորիս» | 215 | 54 | Պահպանվում է |
| «Արթիկ» | 373 | 402 | Չի պահպանվում |
| «Սևան» | 548 | 519 | Պահպանվում է |
| «Կոշ» | 640 | 730 | Չի պահպանվում |
| «Աբովյան» | 257 | 196 | Պահպանվում է |
| «Նուբարաշեն» | 820 | 1055 | Չի պահպանվում |
| «Վարդաշեն» | 339 | 248 | Պահպանվում է |
| «Վանաձոր» | 245 | 216 | Պահպանվում է |
| «ԴՀ» | 464 | 182 | Պահպանվում է |
| «Երևան-Կենտրոն» | 60 | 36 | Պահպանվում է |
| «Հրազդան» | 215 | 242 | Չի պահպանվում |
| «Արմավիր» | 400 | | |
| Ընդամենը | | 3880 | |

Ավելին, ՀՀ ԱՆ N 30-Ն հրամանում սահմանաչափերը ամրագրված են ըստ տեսակների (փակ, կիսափակ, կիսաբաց, բաց և կալանավորվածներին պահելու վայր), սակայն նման վիճակագրություն ներկայացված չլինելու պատճառով չի բացառվում հրամանի պահանջների չկատարման ավելի մեծ թվաքանակ:

### Հսկողության մակարդակը բնութագրող ցուցանիշներ.Կարգապահական տույժերը

2014թ. ընթացքում ՀՀ ԱՆ ՔԿՀ-ից ազատվել է 146 ծառայող, իսկ կարգապահական տույժեր են ստացել 98-ը: ***Հարկ է նշել, որ չնայած տարատեսակ հարցումները վկայում են այն մասին, որ ՔԿՀ-ում առկա են կոռուպցիոն դրսևորումներ, որում առանձնահատուկ դերակատարում ունեն նաև ՔԿՀ աշխատակիցները, սակայն, ինչպես վկայում են ստացված տվյալները, կաշառակերության համար որևէ ՔԿՀ աշխատակից չի պատժվել:***

ՔԿՀ ղեկավարության կողմից վերահսկողության գործիք են հանդիսանում տույժերը և ազատումները: Հարկ է նշել, որ ընդհանուր թվաքանակի նկատմամբ տույժերի և ազատումների բարձր տեսակարար կշիռն այն ՔԿՀ-ում, որտեղ առկա է ինքնավնասումների մեծ տեսակարար կշիռ, վկայում է ՔԿՀ ղեկավարության և անձնակազմի միջև հակակշիռների մեխանիզմների առկայության մասին, իսկ դրա բացակայությունը՝ կանոնակարգային բնույթի հիմնախնդիրների առկայության մասին:

Գրեթե բոլոր ՔԿՀ-ում նկատվում է ուղիղ համեմատական կապ ինքնավնասումների և տույժերի թվաքանակի միջև: «Գորիս» և «Վարդաշեն» ՔԿՀ-ներում նկատվում են որոշակի կանոնակարգային բնույթի հիմնախնդիրներ:

### Վաղաժամկետ ազատումները

2014թ. պատժից պայմանական վաղաժամկետ ազատվել է 184 դատապարտյալ, նախորդ տարվա 289-ի փոխարեն: Հարկ է նշել, որ վաղաժամկետ ազատվածների մեծ կենտրոնացում է նկատվում «Սևանում», «Կոշում», «Գորիսում» և «Արթիկում»:

Աղյուսակ 7. Վաղաժամկետ ազատվածների բաշխումն՝ ըստ ՔԿՀ-ի

| Ցուցանիշ | Նուբ. | Վան. | Վարդ. | Գոր. | Սևան | Կոշ | Արթիկ | ԴՀ | Աբ. | Եր. | Հր. | Ընդ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ազատազրկվածների թիվը | 1055 | 216 | 248 | 54 | 519 | 730 | 402 | 182 | 196 | 36 | 242 | 3880 |
| Պատժից պայմանական վաղաժամկետ ազատվածները ընդհանուր ազատվածների մեջ, %-ով | 3 (1.6%) | 5 (2.7%) | 12 (6.5%) | 9 (4.9%) | 58 (31.5%) | 55 (29.9%) | 18 (9.8%) | 10 (5.4%) | 7 (3.8%) | | 4 (2.2%) | 184 |
| Պատժից պայմանական վաղաժամկետ ազատվածները տվյալ ՔԿՀ դատապարտյալների նկատմամբ, %-ով | 0.3% | 2.3% | 4.8% | 16.7% | 11.2% | 7.5% | 4.5% | 5.5% | 3.6% | | 1.7% | |

***Այնուհանդերձ, մեր կարծիքով, պատժից պայմանական վաղաժամկետ ազատվածների մասով վիճակագրությունը էական բարելավման կարիք ունի, մասնավորապես, հաշվառում չի իրականացվում՝ ըստ հոդվածների և դատարանի կողմից սահմանված պատժաչափերի, ինչը հնարավորություն կտար ավելի խորքային եզրակացություններ անել:***

Հաջորդ խնդիրը վերաբերում է վաղաժամկետ ազատվածների հարցերը քննարկող հանձնաժողովի գործունեությանը, մասնավորապես, դրա անդամների

անկախությունը, ինչպես նաև՝ կազմավորման հիմքում ռոտացիոն մեխանիզմների բացակայությանը:

**Առաջարկություն**

-Միջոցառումներ ձեռնարկել շահերի բախման բացառման առումով, մասնավորապես բացառել ուժային կառույցների մասնակցությունը մասնագիտական հանձնաժողովի գործունեությանը:

-Հնարավորինս թափանցիկ ու հստակ դարձնել դատապարտյալների ռիսկայնության գնահատման համար կիրառվող չափանիշները:

Վաղաժամկետ ազատվածների մասով ՀՀ ԱՆ կողմից հոդվածների տեղեկություններ չեն տրամադրվել, ինչը հնարավորություն կընձեռեր դիտարկել հնարավոր խտրականությունները:

**Ազատազրկվածների կողմից իրականացվող աշխատանքներ և դրանց դիմաց վճարումներ**

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 88 հոդվածի համաձայն՝ ուղղիչ հիմնարկի պետի որոշմամբ, դատապարտյալն իր ցանկությամբ/համաձայնությամբ, առանց վարձատրության կարող է ներգրավվել ուղղիչ հիմնարկի կամ դրան հարող տարածքների բարեկարգման աշխատանքներում: Դատապարտյալը չվարձատրվող աշխատանքներին ներգրավվում է հերթականությամբ՝ ոչ հանգստյան ժամերին, օրական երկու ժամից ոչ ավելի ժամանակով:
Ըստ տրամադրված տեղեկությունների՝ 2014թ. ընթացքում ՀՀ ԱՆ ՔԿՀ-ում իրենց համաձայնությամբ չվարձատրվող աշխատանքներում ներգրավված է եղել 99 դատապարտյալ: Տե՛ս Աղյուսակ 8.

Աղյուսակ 8. Ներգրավվումը չվարձատրվող աշխատանքներում

| ՔԿՀ անվանումը | Չվարձատրվող աշխատանքներում ներգրավված դատապարտյալների թիվը |
|---|---|
| «Վարդաշեն» | 9 |
| «ԴՀ» | 1 |
| «Աբովյան» | 15 |
| «Սևան» | 26 |
| «Հրազդան» | 6 |
| «Կոշ» | 25 |
| «Արթիկ» | 3 |
| «Վանաձոր» | 14 |
| **Ընդամենը** | **99** |

**Հարկ է նշել, որ վերոհիշյալ հոդվածի դրույթների մոնիտորինգի հնարավորություն առկա չէ, քանի որ ըստ ՀՀ ԱՆ ՔԿՀ մարմինների կողմից տրամադրված տեղեկության՝ ժամաքանակի հաշվարկ չի իրականացվում:**

ՀՀ ԱՆ ՔԿՀ-ի կողմից ազատազրկվածների դեպոզիտային շարժի վերաբերյալ տրամադրած տեղեկանքը ոչ լիարժեք տեղեկություններ է պարունակում և հնարավորություն չի ընձեռում աշխատավարձի վճարումների վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմել, մասնավորապես, աշխատավարձի

մեծությունը ամրակցված չէ դատապարտյալի աշխատած ժամերի մեծության հետ (կարծում ենք, ինչպես նաև նախորդ դեպքերում, նման հաշվառում չի իրականացվում):

**Առաջարկություն**

***-Բարելավել վիճակագրական տեղեկությունները, մասնավորապես ամրագրել աշխատած աշխատաժամանակի (չվարձատրվող և վարձատրվող) հաշվարկի մասով հաշվետվողականության թափանցիկ մեխանիզմներ:***

**-Ինչպես ցույց է տալիս ՔԿՀ-ում դատապարտյալների դրամական միջոցների շարժի մասին վիճակագրությունը, ՔԿՀ-ում տեղի է ունենում միջոցների էական արտահոսք, այսինքն՝ դատապարտյալները, բացի իրենց աշխատավարձից, ծախսում են նաև հավելյալ սեփական միջոցներ: Ինչպես ցույց են տալիս մոնիտորինգի արդյունքները, ազատազրկվածները այդ գումարները հիմնականում ծախսում են ՔԿՀ-ին «ամրակցված» կրպակներից գնումներ կատարելու նպատակով: Կարծում ենք, նպատակահարմար է քննարկել այդ կրպակներից էլ. տարբերակով գնումներ/պատվերներ ամրագրելու հնարավորությունը:**

**Սննդի հետ կապված հիմնահարցերի ուսումնասիրություն**

Հարկ է նշել, որ ՔԿՀ-ում ճաշացանկը կազմվում է ՀՀ կառավարության 2003թ. ապրիլի 10-ի թիվ 413 որոշմամբ սահմանված չափաբաժիններով:[42]
Ճաշացուցակը կազմվում է յուրաքանչյուր շաբաթվա համար՝ ելնելով տվյալ պահին պահեստում առկա սննդամթերքների տեսակներից:
Հիմք ընդունելով ՀՀ ԱՆ ՔԿՎ ցուցումները՝ պատրաստվում է երկու ճաշատեսակ:[43]
Ըստ սահմանված ցուցումների՝ առաջին ճաշատեսակի քաշը պետք է կազմի ոչ պակաս, քան 700 գրամ, իսկ երկրորդ ճաշատեսակինը՝ 200-250 գրամ:
Ըստ տարբեր ՔԿՀ-ի կողմից տարբեր ժամկետների համար տրամադրված ճաշացանկերի դիտարկման՝ նախաճաշի և ընթրիքի ժամանակ հիմնականում տրվում է նույն ճաշատեսակը:[44]
Հարկ է նշել, որ հիվանդներին, հղի կանանց և անչափահասներին հավելյալ տրվում է կարագ և ձու: **Այնուհանդերձ, չափաքանակների մեր ուսումնասիրությունը, օրինակ «Դատապարտյալների հիվանդանոցում» սննդի վրա ներկայացված ծախսերի մասով, վերը նշված դրույթի իրագործման մասին որևէ հստակ հիմքեր չի ստեղծել[45]:**

[42] http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=73558
[43] 2006 թվականի մայիսի 17-ի N40/5-3122: Առաջին ճաշատեսակին առաջադրվող հիմնական պահանջն այն է, որ այն պետք է պարտադիր ապուր լինի: Երկրորդ ճաշատեսակը հիմնականում պետք է լինի տարբեր տեսակի շիլա:
[44] Տե՛ս Խմբի ներկայացրած ճաշացանկի փաստաթղթերը:
[45] Ավելի մանրամասն, տե՛ս Աղյուսակ 16 և 17:

Ինչպես ցույց են տալիս տվյալները՝ ՀՀ կառավարության 413-Ն որոշմամբ սահմանված չափաքանակները, որոշ դեպքերում խախտվում են, օրինակ՝ ոսկրոտ մսի մասով[46]:

**Հարցաթերթիկի տվյալների ուսումնասիրություն**

Մեր կողմից սննդի հետ կապված հիմնահարցերի ուսումնասիրության նպատակով կազմվել է հարցաթերթիկ, որի արդյունքների վերլուծությանը կանդրադառնանք ստորև:
Այդպես, Դիտորդական խմբի կողմից ներկայացվել է շոգեխաշված տավարի մսի պիտակ, որի ուսումնասիրությունը փորձագետի մոտ որոշակի հարցադրումներ առաջացրեց:
Նախ, պիտակը վկայում էր, որ շոգեխաշված միսն արտադրվել է ք.Երևան, Արցախի 57 հասցեում գրանցված Ա/Ձ Հ.Հովսեփյանի կողմից, ինչը մեր կողմից մտավախություններ առաջացրեց, մասնավորապես տվյալ հասցեում համապատասխան սարքավորումների առկայության մասով: Ավելին, www.e-register.am կայքի միջոցով համապատասխան տուրքի վճարումից հետո տվյալների ավելի ամբողջական ուսումնասիրությունը ցույց տվեց, որ **այս ընկերությունը 2012թ.-ից դադարեցրել է իր գործունեությունը:**
Այս ամենը խոսում է կոռուպցիոն ռիսկերի առկայության և պատկան մարմինների կողմից վերահսկողության իսպառ բացակայության մասին:




46 ՀՀ կառավարության որոշմամբ նախատեսված է դատապարտյալներին հատկացնել օրական 90 գրամ միս կամ 180 գրամ ոսկրոտ միս:

Մյուս՝ հալած յուղի պիտակը մատնանշում է որոշ խնդիրներ, որոնք կապված են միջնորդավորված գնումների հետ: Օրինակ՝ հալած յուղը ներմուծում է Դանինի ընկերությունը, սակայն այս ընկերությունը չի մասնակցում ՔԿՀ-ի գնման գործընթացներին, ինչն, այլ հավասար պայմաններում, պետք է հանգեցներ գնի բարձրացմանը, սակայն, ինչպես ցույց են տվել մեր ուսումնասիրությունները, ***հալած յուղի գները շուկայականից էականորեն ցածր են, ինչը խորացնում է քանակների և որակների հետ կապված հնարավոր ռիսկերի ի հայտ գալու հավանականությունը[47]:***

***Նշվածը վկայում է գնման գործընթացի կոռուպցիոն ռիսկերի բարձր մակարդակի մասին, ինչին գումարվում է այն, որ որոշ դեպքերում հնարավոր չէ հստակ ստուգել կնքված և մատակարարված չափաքանակների համապատասխանությունը: Այսինքն, կոռուպցիոն համաձայնության գալով, մասնակիցները կարող են ներկայացնել շուկայում գոյություն չունեցող ցածր գին, որից հետո, հաղթող դառնալով, գնի մասով կորուստը կփոխհատուցեն ավելի քիչ քանակությամբ մատակարարումներով:***

Ինչպես ցույց է տալիս մեր կողմից կազմված հարցաթերթիկի հիման վրա ստացված տվյալների ուսումնասիրությունը, սննդամթերքի մատակարարման և պաշարների կառավարման գործընթացներն ամբողջովին կանոնակարգված չեն, ինչը հաճախակի հանգեցնում է ծախսերի արդյունավետության նվազմանը: Մասնավորապես, մատակարարումների գրաֆիկի մասով առկա են էական խնդիրներ, ինչի հետևանքով, օրինակ, մատակարարման սահմանաչափերից ավելի շատ պաշարներ են կուտակվում[48], ինչը չի նպաստում դրամական միջոցների արժևորման[49] մոտեցման կիրառմանը:

Հարկ է մեջբերել Խմբի անդամներից մեկի դիտարկումը՝ «սննդամթերքի պահպանության պայմանները չեն համապատասխանում սահմանված ստանդարտներին, մասնավորապես չկա խոնավաչափ»: Խոնավության ու այլ հարակից պայմանների բացակայությունն ազդում է նաև պահպանության ենթակա սննդամթերքների փչացման և խոտանման ծավալների վրա: Նշված խնդիրների համատեքստում ուշագրավ է հետևյալ դիտարկումը. ուղարկվել է 300 կգ պանիր, օրական ծախսը կազմում է 4.5 կգ, բավարար է 67 օրվա համար, սակայն համապատասխան պահպանման պայմաններ առկա չեն: Նույն մոտեցումը կիրառվում է կարտոֆիլի և սոխի պարագայում:

***Ինչպես փաստում են Դիտորդական խմբի անդամների հետ հարցազրույցի արդյունքները, կան դեպքեր, երբ սննդամթերքի պիտանելիության ժամկետը երբեմն մակնշված չէ:***

***Ճաշացանկը մեծամասամբ կրկնվում է և ամրակցված չէ պահանջարկի հետ, ինչը նվազեցնում է բյուջետային ծախսերի արդյունավետությունը, մեծացնում է կոռուպցիոն ռիսկերը և խոտանի տեսակարար կշիռը:***

---

47 Համադրվել է ՍԳԻ ցանկում առկա գների հետ:

48 Օրինակ՝ շաքարավազը, կարագը, յուղը հիմնականում մատակարարվում են երկու ամիսը մեկ անգամ, սակայն պաշարների մոնիտորինգի արդյունքում նկատվում են դեպքեր, երբ պահեստում առկա են նշված ապրանքատեսակների երկու ամսից ավելի պաշարներ:

49 Value for money:

*Հարկ է նշել, որ պահեստում պաշարների օգտագործման, դրանց մնացորդի և ավելացման գործընթացներում բացակայում է համապատասխան վավերացման/կնքման ընթացակարգերը:*
*Բացի այդ, բոլոր ՔԿՀ-ում մշտապես առկա է սննդից հրաժարվողների որոշակի մակարդակ, այդ մասով, սակայն, վիճակագրություն չի վարվում, ինչը մեր կարծիքով, ենթակա է շտկման: Ավելին, սննդի պատրաստման ընդհանուր հաշվարկից այն հիվանդների թիվը, ում ընդհանուր սնունդը խորհուրդ չի տրվում/հակացուցված է (օրինակ՝ դիետիկ սննդի կարիք ունեն), դուրս չի բերվում, ինչը նախատեսված է իրավական նորմերով:*
*Հարկ է նշել, որ չսպառված սննդի պաշարների ավելացման և դրանց թափոնացման, ինչպես նաև՝ պաշարների շրջանառության ընթացակարգը փաստաթղթավորված չէ, ինչը, կարծում ենք, պետք է շտկել:*
*Ավելին, կարծում ենք՝ հարկ է թափոնների մասով դիտարկել ավելի ռացիոնալ լուծումներ, քան աղբավայր թափելն է:*

Նշված դիտարկումները ապացուցում են, որ ՔԿՎ կողմից ապրանքների ծավալի մատակարարման և պահպանման գործընթացը բարելավման կարիք ունի:

Առաջարկում ենք սննդից հրաժարվողների հաշվառում իրականացնել, ինչպես նաև՝ դիտարկել պահանջարկի վրա հիմնված ճաշացանկի կազմման հնարավորությունը, մասնավորապես, կարելի է կիրառել քարտային ռեժիմ, ինչը որոշակիորեն կբարձրացնի ծախսերի արդյունավետությունը:
Պաշարների կառավարման ընթացակարգերը չեն բացառում պաշարների օպտիմալ տեղաբաշխում, օրինակ՝ կնքման կամ այլ մակնշման ընթացակարգեր պաշարների առումով չեն կիրառվում:

*Այլ դիտարկումներ և առաջարկություններ*
*Հանձնուքների և ապրանքների մատակարարման մասով իրականացնել տեսահսկումներ, ինչը կնվազեցնի կոռուպցիոն ռիսկերը:*
*Հարկ է նշել, որ այն ՔԿՀ-ում, որտեղ հանձնուքի մակարդակը բարձր է, ցածր է սննդից օգտվողների թվաքանակը, և հակառակը: Նշվածը վկայում է նաև սննդի համեմատաբար ցածր որակի մասին:*

**Բուժսպասարկման հետ կապված հիմնախնդիրներ**

Ըստ տրամադրված տեղեկատվության՝ ՔԿՀ-ները 2014թ. ընթացքում ստացել են 34 մլն 241 հազար 705 դրամի դեղորայք, որից օգտվել է 2600 ազատազրկված անձ: Մեկ ազատազրկված անձին մեկ օգնության դիմած ընկնող ծախսը կազմում է մոտ 13.170 դրամ: Ցավոք, ՔԿՀ-ն չի կարողացել տվյալներ տրամադրել 2013թ. վերաբերյալ, ինչը հնարավորություն չի ընձեռում ուսումնասիրել այս ենթաուղղության դինամիկան և ավելի խորքային եզրահանգումներ կատարել: ՔԿՀ-ում դեղորայքի օգտագործման հաշվառում ըստ ազատազրկվածների

թվաքանակի չի իրականացվում թե՛ բուժսպասարկող անձնակազմի, թե՛ ՔԿՀ կողմից: Այսինքն, չենք կարող ըստ ՔԿՀ-ի ունենալ բժշկական ծառայությունից օգտվողների լիարժեք պատկերը: Այս մասով վիճակագրության թերի լինելը լրացուցիչ կոռուպցիոն ռիսկերի դրսևորման հնարավորություն է ընձեռում:

Աղյուսակ 10. Դեղորայքի ծախսն՝ ըստ ՔԿՀ-ների

| Ցուցանիշ | Նուբ. | Վան. | Վարդ. | Գոր. | Սևան | Կոշ | Արթիկ | ԴՀ | Աբ. | Եր. | Հր. | Ընդ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Դեղորայքի ծախսը, մլն դրամ | 8.0 | 1.3 | 1.1 | 0.1 | 2.7 | 3.0 | 1.9 | 14.6 | 0.7 | 0.2 | 0.4 | 34.2 |
| Ծախսը մեկ ազատազրկվածի հաշվով, դրամ | 7607 | 6259 | 4355 | 2336 | 5309 | 4177 | 4713 | 80121 | 3598 | 6646 | 1787 | 11537 |
| Ազատազրկվածների թիվը | 1055 | 216 | 248 | 54 | 519 | 730 | 402 | 182 | 196 | 36 | 242 | |

Աղյուսակի վերլուծությունը որոշակի մտահոգությունների տեղիք է տալիս, մասնավորապես, եթե չդիտարկենք «Դատապարտյալների հիվանդանոցը», որտեղ ծախսերի համեմատաբար բարձր մակարդակը հասկանալի է, մնացած ՔԿՀ-ների կտրվածքով կատարած վերլուծությունը ցույց է տալիս հակադարձ համեմատական կապ ՔԿՀ-ում ազատազրկվածների թվաքանակի և մեկ ազատազրկվածին բաժին ընկնող դեղորայքի ծախսի ցուցանիշի միջև: ***Այսինքն, կա մի հաստատուն բաղադրիչ, որն անփոփոխ է մնում, անկախ ազատազրկվածների թվաքանակի նվազումից: Մեր կարծիքով, սա նշանակում է, որ ՔԿՀ-ում դեղորայքի ծախսերը խիստ ուռճացված են, ավածը, մասնավորապես, վերաբերում է «Երևան-Կենտրոն» և «Գորիս» ՔԿՀ-ներին:***

**ՔԿՀ գնումները**

Քրեակատարողական հիմնարկների պահպանման համար համապատասխան ծախսերը ներկայացվում է ՀՀ ԱՆ կողմից՝ ըստ ռազմավարական նպատակների և դրանց իրականցման համար անհրաժեշտ գործողությունների պլանի:
ՔԿՀ-ների համար անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնումները կազմակերպվում են ՔԿՎ կողմից, որն իրականացնում է նաև դրանց հետագա բաշխումը՝ բոլոր հիմնարկների համար:[50]

*Բյուջետային պլանավորում*
ՀՀ ԱՆ տրամադրած տեղեկությունը հաստատում է, որ ըստ ՔԿՀ-ների հատկացումներ չեն պլանավորվում, ինչը, կարծում ենք, ապագայում պետք է շտկվի, քանի որ չի համապատասխանում ընդունված չափանիշներին:

[50] ՔԿՎ-ն ներկայացնում է գնման հայտ և նախաձեռնում գնման ընթացակարգ, որի արդյունքում հաղթող ճանաչված ընկերությունն իրականացնում է մատակարարում՝ ըստ ՔԿՀ-ների:

Հարկ է նշել, որ ըստ ԱՆ տվյալների, յուրաքանչյուր ազատազրկվածին մեկ օր պահելու համար բյուջեով նախատեսված գումարը կազմում է 783 դրամ, այդ թվում՝ սննդի միջին գումարը՝607 դրամ, դատապարտյալների հագուստի գումարը՝105 դրամ, անկողնային պարագաների գումարը՝ 46 դրամ, հիգիենիկ պարագաների գումարը՝ 25 դրամ:

**Առաջարկություն**
**Նման մոտեցումը պետք է լինի մեթոդապես հիմնավորված և փոխկապակցված լինի գնաճի և նվազագույն սպառողական զամբյուղի կամ պարենային զամբյուղի ցուցանիշի հետ:**

Բյուջետային հայտերը կազմվում են ՔԿՎ կողմից կազմված նախահաշիվների հիման վրա, որում հաշվի են առնվում մի շարք գործոններ՝տվյալ տարվա գնումների պլանը, ՔԿՀ պահանջագրերը, կալանավորված անձանց և դատապարտյալների թվաքանակը, ինչպես նաև՝ ՀՀ կառավարության 2003թ. ապրիլի 10-ի թիվ 413 որոշմամբ սահմանված չափաբաժինները:
ՀՀ պետական բյուջեից ՔԿՀ-ներին հատկացված գումարի չափը 2014թ. կազմել է շուրջ 9.3 մլրդ դրամ: Ընդ որում, այդ գումարից 1 մլրդ դրամը տրամադրվել է «Արմավիր» ՔԿՀ-ի մասնաշենքի շահագործմանը, իսկ մնացած 8.3 մլրդ դրամը պետք է ուղղվեր ազատազրկված անձանց կարիքների բավարարմանը: Հարկ է նշել, որ պլանավորման գործընթացում թիրախային ցուցանիշ է հանդիսացել 4500 ազատազրկվածը, մինչդեռ 2014թ.-ին փաստացի ազատազրկվածների միջին թիվը կազմել է 3900[51]:
ՔԿՀ-ին հատկացված ընդհանուր 8.3 մլրդ գումարի մոտ 40%-ը[52] (3.3 մլրդ) ուղղվել է գնումների իրականացմանը:
Աղյուսակ 11-ում մեր կողմից ներկայացված է պետական բյուջեով ՀՀ ԱՆ ՔԿՎ-ին ուղղված հատկացումների փաստացի կառուցվածքը:[53]

| Բյուջետային ծախսերի անվանումները | 2014թ. 9 ամիսների ֆինանսավորումը (մլն դրամ) | Փաստացի ծախսը (մլն դրամ) | Փաստացի ծախսի մասնաբաժինը ընդհանուր ծախսերում (%) |
|---|---|---|---|
| Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ | 3945.2 | 3650.2 | 60 |
| Այլ վարձատրություններ | 135.9 | 124.9 | 2 |
| Էներգետիկ ծառայություններ | 465.6 | 403.1 | 7 |
| Կոմունալ ծառայություններ | 40.9 | 33.2 | 1 |
| Կապի ծառայություններ | 21.8 | 17.4 | 0 |
| Ավտոմեքենաների ապահովագրություն | 4.1 | 3.9 | 0 |
| Տարածքների վարձակալում | 0.3 | 0.3 | 0 |
| Ներքին գործուղումներ | 10.6 | 8.8 | 0 |
| Արտասահմանյան գործողումների գծով ծախսեր | 7.1 | 5.4 | 0 |
| Վարչական ծառայություններ | 1.4 | 0.7 | 0 |

[51] Ապագայում պետք է հասկանալ, թե ուր են գնացել տնտեսումները:
[52] Առանց աշխատավարձի և դեղորայքի ծախսերի:
[53] Կառուցված է 9 ամսվա փաստացի տվյալների հիման վրա:

| | | | |
|---|---|---|---|
| Տեղեկատվական ծառայություններ | 4.7 | 0.9 | 0 |
| Մասնագիտական ծառայություններ | 0.9 | 0.7 | 0 |
| Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում | 11.5 | 4.5 | 0 |
| Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում | 6.9 | 6.3 | 0 |
| Գրասենյակային նյութեր և հագուստ | 192.5 | 186.2 | 3 |
| Տրանսպորտային նյութեր | 101.7 | 75.8 | 1 |
| Առողջապահական և լաբորատոր նյութեր | 32.3 | 17.1 | 0 |
| Կենցաղային և հանրային սննդի նյութեր | 778.1 | 585.3 | 10 |
| Այլ նպաստներ բյուջեից | 54.9 | 50.6 | 1 |
| Այլ հարկեր | 8.8 | 6.6 | 0 |
| Այլ ընթացիկ ծախսեր | 1.1 | 0 | 0 |
| Շենքերի և շինությունների կառուցում | 1000 | 939.4 | 15 |
| **Ընդամենը** | **6826.4** | **6121.4** | |
| Որից՝ | | | |
| Բուժսպասարկում | 32.3 | 17.1 | |
| Սննդի ձեռքբերում | 778.1 | 585.3 | |
| Անկողնային պարագաներ | 38.6 | 38.6 | |
| Հիգիենիկ պարագաներ | 30.3 | 30.3 | |
| Ընթացիկ վերանորոգում | 11.5 | 4.5 | |
| Կապիտալ վերանորոգում | 0 | 0 | |
| Բժշկական անձնակազմի վերապատրաստում | 0 | 0 | |

*Առաջարկություն*

***ՀՀ պետական բյուջեով ՀՀ ԱՆ ՔԿՎ-ին ուղղված հատկացումների հաշվառումն ըստ ՔԿՀ-ի չի վարվում, ինչը մեր կարծիքով պետք է շտկվի:***

Ինչպես ցույց են տալիս ՀՀ ԱՆ ՔԿՎ կողմից տրամադրված տեղեկությունները, դատապարտյալների համար անհրաժեշտ ապրանքների (սնունդ, սանիտարահիգիենիկ պարագաներ, հանդերձանք) ծախսերի հանրագումարը կազմում է շուրջ 1 մլրդ 390 մլն. 616 հազ. դրամ:[54] Աղյուսակ 12-ում ներկայացված են 2014թ. հաղթող ճանաչված և պայմանագիր կնքած սուբյեկտների վերաբերյալ տվյալներ: Ինչպես տեսնում ենք,աղյուսակից, 2014թ. ապրանքային գնումների մասով պայմանագիր է կնքվել հետևյալ 11 ընկերությունների հետ՝ ընդհանուր 1 մլրդ 138 մլն 627 հազ. դրամ (կամ դատապարտյալների համար անհրաժեշտ ապրանքների գծով ծախսերի 81.9%) ծավալով:

Աղյուսակ 12. Գնումների գործընթացի հաղթողների մասով ագրեգացված տվյալներ

| Հաղթող ճանաչված մասնակիցը | Վճարված գումարը, մլն դրամ | Մատակարարված ապրանքային ուղղությունների թիվը | Մեկ ապրանքային ուղղության միջին ծախսը, մլն դրամ |
|---|---|---|---|
| Հանեշ Գրուպ ՍՊԸ | 553.9 | 27 | 20.5 |
| Հանս-Ֆուդ ՍՊԸ | 21.8 | 3 | 7.3 |
| «Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամ | 343.7 | 7 | 49.1 |
| Կոտայքկոշ ԲԲԸ | 64.3 | 4 | 16.1 |
| Պահապան ՍՊԸ | 111.9 | 7 | 16 |

[54] ՔԿՎ հատկացված ընդհանուր բյուջեի մոտ 17%-ը:

| | | | |
|---|---|---|---|
| Գդակ ՍՊԸ | 14 | 1 | 14 |
| Տումոե ՍՊԸ | 23.4 | 7 | 3.3 |
| Մազնատես ՍՊԸ | 1.4 | 2 | 0.7 |
| Ավանգարդ ՍՊԸ | 1.0 | 1 | 1.0 |
| Ռեալ Բռաինեսս ՍՊԸ | 2.7 | 1 | 2.7 |
| Արմքոմփվիններ ՍՊԸ | 0.4 | 1 | 0.4 |
| Ընդամենը | 1139 | 61 | 18.7 |
| Մեկ կալանավորվածի գծով տարեկան ապրանքային ծախսը, մլն դրամ | 1.0 | | |
| Մեկ ազատազրկվածի գծով տարեկան ծախսը, մլն դրամ | 0.3 | | |

Ներկայացված տվյալներով՝ ռիսկայնությամբ աչքի է ընկնում Հանեշ Գրուպ ՍՊԸ-ն, որի գնումները կազմում են ընդհանուրի շուրջ 50%-ը:

**Ծախսերի ուսումնասիրություն**

***Ծախսային ուղղությունների, դրանց չափաքանակների համադրությունն անազատության մեջ գտնվողների թվաքանակի հետ որոշ խնդիրներ է ի ցույց դնում, մասնավորապես, հասկանալի չէ, թե ինչու է «Էրեբունի» ՔԿՀ-ում, որը 2014թ. ապրիլից չի շահագործվում, այնտեղ դատապարտյալներ չեն պահվում, ատամի խոզանակի, մեկանգամյա սափրման սարքի, լվացող նյութերի ծախսը մի քանի անգամ գերազանցում այլ ՔԿՀ-ի համանման ծախսերին, որտեղ նույն ուղղություններով ծախսերը, ազատազրկվածների խիստ ավելի բարձր մակարդակի պարագայում, համեմատաբար ավելի քիչ են:***

**Պետական գնումների մակրո միջավայրի ուսումնասիրություն**

Հարկ է նշել, որ մոնիտորինգի ժամանակահատվածում ՇՀ-ի համար դեռևս արդիական են եղել ՀՀ ֆինանսների նախարարության հրամանով սահմանված առավելագույն գները:[55]

Գնումների ընթացակարգերի վերաբերյալ ՀՀ ԱՆ ՔԿՎ ուղարկված հարցման պատասխանի ուսումնասիրությունը վկայում է, որ գնումներում բացակայում է մրցակցության որևէ նշույլ: Նման կարծիքը հիմնավորվում է հետևյալ հանգամանքներով.

1) Չնայած գնումների մասին օրենսդրությամբ (Գնումների մասին ՀՀ օրենք, հոդված 17-ի 2-րդ կետ) բաց ընթացակարգը հանդիսանում է գնման նախընտրելի ձև, սակայն ՔԿՀ-ում 2014թ. նման հիմքով գնումներ ընդհանրապես չեն կատարվել: Ավելին, գնումներն առավելապես

[55] ՀՀ ՖՆ 2013թ. հուլիսի 13-ի N 573-Ա հրաման:

կատարվել են բանակցային ընթացակարգով՝ առանց հայտարարության՝ մեկ անձ, առանց որևէ մրցույթի (տե՛ս Աղյուսակ 13):[56]

Աղյուսակ 13. 2014թ. ընթացքում իրականացված գնումները

| Մրցույթի տեսակները | Ամփոփված և կայացած գնումների թվաքանակը | Գնումների գործընթացի մասնակիցների թիվը | Կնքված պայմանագրի ծավալը, մլրդ դրամ |
|---|---|---|---|
| ԲԸ | 0 | 0 | 0 |
| ՇՀ | 28 | 152 | 109 (35%) |
| ՊԸ | 1 | 1 | 0.2 |
| ՍԸ | 0 | 0 | 0 |
| ՄԵ | 0 | 0 | 0 |
| ԲԸՀ | 0 | 0 | 0 |
| ԲԸԱՀ | 72 | 72 | 205 (65%) |
| Ընդամենը | 101 | 225 | |

2) Գնումների համար հիմնականում հայտ է ներկայացնում միայն մեկ մասնակից:
3) Առկա են միջնորդավորված գնումներ, ավելին «Հանեշ Գրուպ» ընկերությունը գերակշիռ դեպքերում հաղթել է առանց մրցակցության, սակայն այլ պետական մարմինների գնումներին նա նման գնային առավելություններ չի դրսևորել:
4) Առկա են կոռուպցիոն մեխանիզմներ, որոնք կարող են նպաստել «յուրային» մատակարարների նախապատվությանը: Օրինակ՝ կնքված պայմանագրային գները շուկայականից ցածր են, ինչն ավելացնում է քանակային անհամապատասխանության մասով հնարավոր ռիսկերի հավանականությունը: Նշված ռիսկերը ներկա ընթացակարգերով չեն բացառվում:
5) Գնման հաշվետվությունների ներկայացումը հնարավորություն կընձեռեր ուսումնասիրելու, արդյո՞ք իրականացվել է շուկայի ուսումնասիրություն, թե՞ ոչ, ի՞նչ հիմքով են կատարվել մերժումները:

**ՔԿՀ գործունեության թափանցիկության հետ կապված որոշ հիմնահարցեր**

«Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամի[57] գործունեությունը

***Հարկ է նշել, որ «Աջակցություն դատապարտյալին» (ԱԴ) հիմնադրամն ընդգրկված է ՀՀ կառավարության 168-Ն որոշման ցանկի մեջ, ինչը նշանակում է, որ ԱԴ-ից գնումները կարող են կատարվել մեկ անձից ձեռքբերումների հիմքով:[58]***

Հարկ է նշել, որ չնայած ԱԴ հիմնադրամը ստեղծվել և գործում է 2001 թվականից, սակայն կայքը մատչելի ու թափանցիկ չէ. օրինակ, «վիճակագրություն» խորագրում բացակայում է նախորդ տարիների վերաբերյալ որևէ

[56] Հարկ է նշել, որ կնքված պայմանագրերի ծավալի վերաբերյալ տեղեկատվությունը հենված է տեղեկանքի վրա և որոշակիորեն թերի է:

[57] http://www.justice.am/structures/view/structure/27

[58] Տե՛ս 32-րդ կետում ներկայացված ցանկի 31-րդ ուղղությունը - http://www.arlis.am/documentview.aspx?docid=70190:

տեղեկատվություն: Հարկ է նշել, որ մոնիտորինգային խմբի կողմից ՀՀ ԱՆ ՔԿՎ մասով վիճակագրական տվյալների մասին հարցում ուղարկելուց հետո որոշ տվյալներ հայտնվել են կայքումի «Վիճակագրություն» խորագրում, մասնավորապես, դատապարտյալների և կալանավորված անձանց մոտից հայտնաբերված և առգրավված կտրող-ծակող գործիքների մասով:

Հարկ է նշել, որ ԱԴ հիմնադրամի կողմից իրականացված գնումների մասին որևէ տեղեկություն և/կամ պայմանագիր կայքում հասանելի չէ: Ավելին, հարկ է նշել, որ e-gov.am կայքի մեկ անձից ձեռքբերումներ խորագրում 2014թ. դեկտեմբերին տեղադրվեց ԱԴ հիմնադրամի մասնակցությամբ պայմանագիր, որով հիմնադրամը մատակարարելու էր շուրջ 14 մլն դրամի տեղական ոսկրոտ տավարի միս[59], որը, սակայն, հետագայում անհետացավ կայքի տվյալների բազայից:

**Ծախսային ուղղությունների համեմատական վերլուծություն**

Աղյուսակ 13. Հանդերձանքի գնումներ

| Ծախսային ուղղությունը | Չափի միավոր | ՔԿՀ անվանում<br>Մեկ ազատազրկվածի վրա կատարված տարեկան ծախսը, քանակ | Սևան | Կոշ | Արթիկ | Նուբ. | Վան. | Վարդ. | Գոր. | ԴՀ | Աբով. | Երևան | Հրազդ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Տղ. կոստյում | լրակազմ | | 1.3 | 1.3 | 1.2 | 0.1 | 1.4 | 1.2 | 0.6 | 2.7 | 0 | 0.4 | 3.1 |
| Տղ. բանվ. կոստյում | լրակազմ | | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Տղ. վերնաշապիկ | հատ | | 1.6 | 1.3 | 0.9 | 0.2 | 1.2 | 1.0 | 1.7 | 1.6 | 0 | 0.1 | 1.5 |
| Տղ. ներքնազգեստ | լրակազմ | | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Տղ. շապիկ | հատ | | 5.1 | 2.5 | 2.0 | 0.6 | 3.7 | 1.4 | 0 | 4.4 | 0.4 | 0.8 | 4.5 |
| Տղ. վարտիք | հատ | | 5.1 | 2.5 | 2.0 | 0.6 | 3.7 | 1.4 | 0 | 4.4 | 0.4 | 0.8 | 4.5 |
| Անդրավարտիքի գոտի | հատ | | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Տղ. կիսաճտք. կաշվե կոշիկ | զույգ | | 0.9 | 0.7 | 0.6 | 0.0 | 0.6 | 0.6 | 0.6 | 0.7 | 0.1 | 0.2 | 1.0 |
| Տղ. կոշիկ | զույգ | | 1.0 | 1.0 | 0.9 | 0.1 | 0.8 | 0.6 | 0.7 | 1.0 | 0 | 0 | 1.0 |
| Տղ. կիսագուլպա | զույգ | | 7.1 | 3.4 | 1.5 | 0.5 | 5.1 | 0.4 | 0 | 4.9 | 0 | 1.1 | 6.6 |
| Բամբակյա անդրավարտիք | հատ | | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Բամբ. գլխաշոր գործվ. | հատ | | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Կն. բաճկոն աստառապատ | հատ | | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Զգեստ-կոստյում | լրակազմ | | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Զգեստ | հատ | | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Կն. վերնաշապիկ | հատ | | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Բամբ. խալաթ | հատ | | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Կն. շապիկ | հատ | | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |

[59] Ամենայն հավանականությամբ, տավարի միսը գնվել էր Ամանորյա միջոցառումների կապակցությամբ, պայմանագիրը կնքվել էր 2014թ. դեկտեմբերի 15-ին և որպես պայմանագրի կատարման վերջնաժամկետ էր սահմանվել 2014թ. դեկտեմբերի 25-ը:

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Կրծկալ | հատ | | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Կն. վարտիք | հատ | | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Կն. կիսագուլպա | զույգ | | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Բամբակյա գուլպա | զույգ | | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Կն. կիսաձմռ. կաշվե կոշիկ | զույգ | | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Կն. կոշիկ | զույգ | | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0.8 | 0 | 0 |
| Ձմեռ. գլխարկ | հատ | | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Ամառ. գլխարկ | հատ | | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Կիսաբրդյա ձեռնոց | զույգ | | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Բամբ. շարֆ | հատ | | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Բամբ. կիսավերարկու | հատ | | 0.5 | 0.8 | 0.7 | 0 | 0.6 | 0.7 | 0.9 | 1.2 | 0 | 0.2 | 0.8 |
| Հողաթափիկ, մաշիկ | զույգ | | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Խալաթ խոհարարի | հատ | | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0.1 | 0 | 0 | 0 | 0 |

Հանդերձանքի մասով ստորև բերված վերլուծությունը չի իրականացվել, քանի որ ներկա դրությամբ հնարավոր չէ զտել գենդերային տարբերություններով պայմանավորված հանդերձանքի ձեռքբերման ծավալները, ինչպես նաև՝ պարզ չէ տրամադրված տվյալներից զտվա՞ծ են արդյոք ՔԿՀ աշխատակազմին հատկացվող հանդերձանքի ձեռքբերումները:

Աղյուսակ 14.

| Ծախսային ուղղություններ | Չափ | Սևան | | Կոշ | | Արթիկ | | Նուբ. | | Վան. | | Վարդ. | | Գոր. | | ԴՀ | | Աբով. | | Երևան | | Հրազդ. | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 1 ազատ. վրա տարեկան ծախս, դրամ | 1 ազատ. վրա տարեկան ծախս, քանակ | 1 ազատ. վրա տարեկան ծախս, դրամ | 1 ազատ. վրա տարեկան ծախս, քանակ | 1 ազատ. վրա տարեկան ծախս, դրամ | 1 ազատ. վրա տարեկան ծախս, քանակ | 1 ազատ. վրա տարեկան ծախս, դրամ | 1 ազատ. վրա տարեկան ծախս, քանակ | 1 ազատ. վրա տարեկան ծախս, դրամ | 1 ազատ. վրա տարեկան ծախս, քանակ | 1 ազատ. վրա տարեկան ծախս, դրամ | 1 ազատ. վրա տարեկան ծախս, քանակ | 1 ազատ. վրա տարեկան ծախս, դրամ | 1 ազատ. վրա տարեկան ծախս, քանակ | 1 ազատ. վրա տարեկան ծախս, դրամ | 1 ազատ. վրա տարեկան ծախս, քանակ | 1 ազատ. վրա տարեկան ծախս, դրամ | 1 ազատ. վրա տարեկան ծախս, քանակ | 1 ազատ. վրա տարեկան ծախս, դրամ | 1 ազատ. վրա տարեկան ծախս, քանակ | 1 ազատ. վրա տարեկան ծախս, դրամ | 1 ազատ. վրա տարեկան ծախս, քանակ |
| Լվ. փոշի ձեռքով լվանալու | կգ | 194 | 0.5 | 178 | 0.4 | 117 | 0.3 | 205 | 0.5 | 263 | 0.6 | 195 | 0.5 | 412 | 1.0 | 415 | 1.0 | 375 | 0.9 | 408 | 1.0 | 139 | 0.3 |
| Լվ. փոշի ավտոմատ | կգ | 1142 | 1.7 | 784 | 1.2 | 542 | 0.8 | 207 | 0.3 | 851 | 1.3 | 741 | 1.1 | 441 | 0.6 | 1048 | 1.5 | 1060 | 1.6 | 1324 | 1.9 | 1182 | 1.7 |
| Ավել | հատ | 288 | 0.6 | 205 | 0.4 | 248 | 0.5 | 201 | 0.4 | 254 | 0.5 | 221 | 0.4 | 277 | 0.6 | 369 | 0.7 | 330 | 0.7 | 484 | 1.0 | 319 | 0.6 |
| Օճառ ձեռքի, 100 գրամ | հատ | 751 | 12.9 | 703 | 12.1 | 667 | 11.5 | 575 | 9.9 | 738 | 12.7 | 669 | 11.5 | 1020 | 17.6 | 880 | 15.2 | 707 | 12.2 | 902 | 15.6 | 707 | 12.2 |
| Օճառ տնտեսական, 100 գրամ | հատ | 1378 | 25 | 1300 | 23.6 | 1245 | 22.6 | 1077 | 19.6 | 1362 | 24.8 | 1264 | 23 | 1844 | 33.5 | 1602 | 29.1 | 1347 | 24.5 | 1619 | 29.4 | 1327 | 24.1 |
| Զուգ. թուղթ | կգ | 1056 | 12.1 | 995 | 11.4 | 974 | 11.2 | 882 | 10.1 | 1027 | 11.8 | 947 | 10.9 | 1450 | 16.7 | 1219 | 14 | 1043 | 12 | 1088 | 12.5 | 989 | 11.4 |
| Քլորակիր | կգ | 279 | 0.3 | 198 | 0.2 | 160 | 0.2 | 137 | 0.2 | 223 | 0.3 | 130 | 0.2 | 0 | 0 | 442 | 0.5 | 410 | 0.5 | 0 | 0 | 199 | 0.2 |
| Ատամի մածուկ | հատ | 1601 | 11.9 | 1409 | 10.4 | 1352 | 10.0 | 1132 | 8.4 | 1478 | 10.9 | 1323 | 9.8 | 1950 | 14.4 | 1810 | 13.4 | 1550 | 11.5 | 1946 | 14.4 | 1434 | 10.6 |
| Ատամի խոզանակ | հատ | 110 | 0.7 | 162 | 1.0 | 229 | 1.4 | 37 | 0.2 | 130 | 0.8 | 173 | 1.1 | 56 | 0.4 | 192 | 1.2 | 87 | 0.6 | 361 | 2.2 | 120 | 0.8 |
| Սափրման սարք | հատ | 3054 | 43.6 | 2901 | 41.4 | 2699 | 38.6 | 2700 | 38.6 | 3014 | 43.1 | 2681 | 38.3 | 4926 | 70.4 | 3346 | 47.8 | 3179 | 45.4 | 3889 | 55.6 | 2198 | 31.4 |
| Հիգ. միջադիր | հատ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 3469 | 102 | 0 | 0 | 0 | 0 |
| Լվ. նյութեր | հատ | 231 | 0.4 | 227 | 0.4 | 206 | 0.4 | 201 | 0.4 | 222 | 0.4 | 198 | 0.4 | 370 | 0.7 | 253 | 0.5 | 245 | 0.5 | 250 | 0.5 | 169 | 0.3 |
| Ծածկոց | հատ | 4902 | 0.8 | 2614 | 0.4 | 1898 | 0.3 | 3315 | 0.5 | 2944 | 0.5 | 1540 | 0.2 | 0 | 0 | 2099 | 0.3 | 1949 | 0.3 | 8833 | 1.4 | 2628 | 0.4 |
| Ներքնակ | հատ | 5934 | 0.8 | 3452 | 0.5 | 2612 | 0.4 | 3716 | 0.5 | 3889 | 0.6 | 3669 | 0.5 | 0 | 0 | 5000 | 0.7 | 3214 | 0.5 | 9722 | 1.4 | 4917 | 0.7 |
| Բարձ | հատ | 1717 | 0.8 | 1055 | 0.5 | 711 | 0.3 | 1251 | 0.6 | 1426 | 0.6 | 1153 | 2.2 | 0 | 0 | 1330 | 0.6 | 1291 | 0.6 | 3056 | 1.4 | 1545 | 0.7 |
| Սավան | հատ | 4848 | 3.3 | 4359 | 2.9 | 3498 | 2.4 | 4209 | 2.8 | 4454 | 3.0 | 3282 | 1.4 | 0 | 0 | 4879 | 3.3 | 4153 | 2.8 | 6167 | 4.2 | 4281 | 2.9 |
| Բարձի երես | հատ | 925 | 1.5 | 863 | 1.4 | 672 | 1.1 | 921 | 1.5 | 833 | 1.4 | 847 | 1.6 | 0 | 0 | 824 | 1.4 | 827 | 1.4 | 1000 | 1.7 | 868 | 1.4 |
| Երեսսրբիչ | հատ | 1638 | 3.3 | 1301 | 2.6 | 1057 | 2.1 | 1232 | 2.5 | 1389 | 2.8 | 806 | 0 | 0 | 0 | 1648 | 3.3 | 1276 | 2.6 | 694 | 1.4 | 1653 | 3.3 |

Աղյուսակ 15.

| Ծախսային ուղղությունը | Չափի միավորը | Մեկ ազատազրկվածի հաշվով ամենաբարձր նյութածախս իրականացնող ՔԿՀ | Մեկ ազատազրկվածի հաշվով ամենացածր նյութածախս իրականացնող ՔԿՀ | Միավոր նյութական ծախսումների խզվածությունը ծայրակետերի միջև, % |
|---|---|---|---|---|
| Լվ. փոշի ձեռքով | կգ | ԴՀ | Արթիկ | 72 |
| Լվ. փոշի ավտոմատ | կգ | Երևան | Նուբարաշեն | 84 |
| Ավել | հատ | Սևան | Նուբարաշեն | 30 |
| Օճառ ձեռքի, 100 գրամ | հատ | Գորիս | Նուբարաշեն | 44 |
| Օճառ տնտեսական, 100 գրամ | հատ | Գորիս | Նուբարաշեն | 42 |
| Զուգ. թուղթ | կգ | Գորիս | Նուբարաշեն | 39 |
| Քլորակիր | կգ | ԴՀ | Վարդաշեն | 70.6 |
| Ատամի մածուկ | հատ | Գորիս | Նուբարաշեն | 42 |
| Ատամի խոզանակ | հատ | Երևան | Նուբարաշեն | 90 |
| Սափրման սարք | հատ | Գորիս | Հրազդան | 55.4 |
| Լվ. նյութեր | հատ | Գորիս | Հրազդան | 54.3 |
| Ծածկոց | հատ | Երևան | Վարդաշեն | 82.6 |
| Ներքնակ | հատ | Երևան | Արթիկ | 73 |
| Բարձ | հատ | Երևան | Արթիկ | 76.7 |
| Սավան | հատ | Երևան | Վարդաշեն | 46.8 |
| Բարձի երես | հատ | Երևան | Արթիկ | 32.8 |
| Երեսսրբիչ | հատ | Հրազդան | Վարդաշեն | 51.2 |

Նշված աղյուսակի տվյալների վերլուծությունը վկայում է այն մասին, որ լվացքի փոշու, քլորակիրի, ատամի խոզանակի, մեկանգամյա սափրման սարքի, ծածկոցի, ներքնակի, բարձի, սավանի և երեսսրբիչի մասով առկա է էական խզվածություն:

Աղյուսակ 16.

| Ծախսային ուղղությունը | Չափ | Սևան | Կոշ | Արթիկ | Նուբ. | Վան. | Վարդ. | Գոր. | ԴՀ | Աբով. | Երևան | Հրազդ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 1 ազատ. ամսական ծախս, քանակ | 1 ազատ. ամսական ծախս, քանակ | 1 ազատ. ամսական ծախս, քանակ | 1 ազատ. ամսական ծախս, քանակ | 1 ազատ. ամսական ծախս, քանակ | 1 ազատ. ամսական ծախս, քանակ | 1 ազատ. ամսական ծախս, քանակ | 1 ազատ. ամսական ծախս, քանակ | 1 ազատ. ամսական ծախս, քանակ | 1 ազատ. ամսական ծախս, քանակ | 1 ազատ. ամսական ծախս, քանակ |
| Հաց | կգ | 21.3 | 19.8 | 18.4 | 18.4 | 20.8 | 6.1 | 28.2 | 23.7 | 20.9 | 23.2 | 18.8 |
| Ձավարեղեն | կգ | 4.2 | 4.0 | 3.6 | 3.3 | 4.0 | 1.5 | 5.5 | 4.5 | 4.2 | 4.4 | 3.8 |
| Մակարոնեղեն | կգ | 1.0 | 0.9 | 1.1 | 0.9 | 1.0 | 0.3 | 1.4 | 1.2 | 1.0 | 1.2 | 0.9 |
| Մսի պահածո | կգ | 2.2 | 2.0 | 1.8 | 1.9 | 2.2 | 2.6 | 2.9 | 2.5 | 0.2 | 0.3 | 0.1 |
| Տավ. միս, ոսկորով | կգ | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.3 | 0.2 | 0.1 | 2.1 | 2.4 | 1.8 |
| Խոզի միս | կգ | 0.2 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.4 | 0.2 | 0.3 | 0.2 | 0.2 | 0.3 |
| Ձուկ, ձկան պահածո | կգ | 0.5 | 0.5 | 0.5 | 0.4 | 0.6 | 0.4 | 0.7 | 0.6 | 0.4 | 0.4 | 0.4 |
| Կաթ, խտ. կաթ | կգ | 0.4 | 0.4 | 0.4 | 0.4 | 0.4 | 0.3 | 0.6 | 1.0 | 0.5 | 0.8 | 0.5 |
| Կենդ. յուղ, մարգարին | կգ | 1.6 | 1.5 | 1.4 | 1.3 | 1.6 | 1.2 | 1.6 | 1.8 | 1.4 | 1.6 | 1.3 |
| Շաքար, շաքարավազ | Կգ | 1.4 | 1.4 | 1.3 | 1.2 | 1.4 | 0.4 | 1.9 | 1.4 | 1.3 | 1.4 | 1.2 |
| Կերակրի աղ | Կգ | 0.8 | 0.6 | 0.6 | 0.6 | 0.8 | 0.1 | 0.9 | 0.8 | 0.7 | 0.7 | 0.6 |
| Թեյ (թեյաբույսեր/ | Կգ | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 |
| Տոմատի մածուկ | Կգ | 0.2 | 0.2 | 0.1 | 0.1 | 0.2 | 0.1 | 0.2 | 0.2 | 0.2 | 0.2 | 0.1 |
| Դափնու տերև | Կգ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Կարտոֆիլ | Կգ | 14.1 | 17.1 | 18.6 | 12.1 | 20.0 | 3.9 | 25.5 | 23.9 | 17.5 | 19.6 | 15.9 |
| Այլ բանջարեղեն | Կգ | 7.3 | 6.7 | 6.3 | 6.1 | 7.1 | 0.9 | 9.8 | 8.9 | 9.4 | 8.1 | 5.4 |
| Հյութեր | Լիտր | 1.6 | 1.4 | 1.4 | 1.4 | 1.6 | 0.4 | 2.2 | 1.8 | 1.7 | 2.0 | 1.4 |
| Պանիր | Կգ | 0.2 | 0.2 | 0.2 | 0.2 | 0.2 | 0.3 | 0.3 | 0.2 | 0.2 | 0.3 | 0.2 |
| Խնձոր | Կգ | 0.3 | 0.3 | 0.2 | 0.2 | 0.3 | 0.1 | 0.4 | 0.3 | 0.3 | 0.4 | 0.3 |
| Բուս. յուղ | Լիտր | 0.1 | 0.1 | 0.1 | 0 | 0.1 | 0 | 0 | 0.7 | 0.1 | 0 | 0 |
| Կարագ | Կգ | 0.1 | 0.1 | 0.1 | 0 | 0.1 | 0.1 | 0 | 1.1 | 0.1 | 0 | 0.1 |
| Ձու | Հատ | 2.0 | 1.5 | 2.0 | 0.5 | 0.1 | 0.1 | 0.8 | 26.2 | 1.9 | 0 | 1.0 |

Աղյուսակ 17. Քանակային ծախսը մեկ ազատազրկվածի հաշվով[60]

| Ծախսային ուղղությունը | Չափի միավորը | Մեկ ազատազրկվածի հաշվով ամենաշատ ծախսող ՔԿՀ | Մեկ ազատազրկվածի հաշվով քանակային առումով ամենաքիչ ծախսող ՔԿՀ | Միավոր ծախսումների խզվածությունը ծայրակետերի միջև |
|---|---|---|---|---|
| Հաց | կգ | Գորիս | Արթիկ | 9.8 |
| Ձավարեղեն | կգ | Գորիս | Նուբարաշեն | 2.2 |
| Մակարոնեղեն | կգ | Գորիս | Հրազդան | 0.5 |
| Մսի պահածո | կգ | Գորիս | Հրազդան | 2.8 |
| Տավ. միս ոսկորով | կգ | Երևան | Արթիկ | 2.3 |
| Խոզի միս | կգ | ԴՀ | Արթիկ | 0.2 |
| Ձուկ, ձկան պահածո | կգ | Գորիս | Հրազդան | 0.3 |
| Կաթ, խտ. կաթ | կգ | ԴՀ | Նուբարաշեն | 0.6 |
| Կենդ. յուղ, մարգարին | կգ | ԴՀ | Հրազդան | 0.5 |
| Շաքար, շաքարավազ | կգ | Գորիս | Հրազդան | 0.7 |
| Կերակրի աղ | կգ | Գորիս | Նուբարաշեն | 0.3 |
| Թեյ | կգ | Գորիս | Հրազդան | 0.03 |
| Տոմատի մածուկ | կգ | Գորիս | Նուբարաշեն | 0.1 |
| Կարտոֆիլ | կգ | Գորիս | Նուբարաշեն | 13.4 |
| Այլ բանջարեղեն | կգ | Գորիս | Հրազդան | 4.4 |
| Հյութեր | լիտր | Գորիս | Արթիկ | 0.8 |
| Պանիր | կգ | Գորիս | Նուբարաշեն | 0.1 |
| Խնձոր | կգ | Երևան | Նուբարաշեն | 0.2 |
| Ձու | կգ | ԴՀ | Վանաձոր | 26.1 |

Նշված աղյուսակի հիման վրա կարելի է եզրակացնել, որ հացի, ձավարեղենի, մսի պահածոյի, ոսկորով տավարի մսի, կարտոֆիլի, այլ բանջարեղենի և ձվի մասով ՔԿՀ-ի ծախսերի մակարդակների միջև առկա է զգալի խզվածություն:
Նույնիսկ այն պայմաններում, երբ տրամադրված տեղեկությունները փոփոխվել են և ներկայացվել են միասնական գներով, ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ տվյալների վերլուծության արդյունքում հանգում ենք հետևյալ եզրահանգմանը.

***Այն ծախսային ուղղությունները, որոնք գումարային առումով համեմատաբար բարձր են, դրսևորում են ավելի բարձր ծախսային միտումներ, հատկապես փոքր ՔԿՀ-ում, օրինակ՝ «Երևան-Կենտրոն», «Գորիս», «ԴՀ»,[61] ինչը խոսում է այս մասով կոռուպցիոն ռիսկերի մասին:***
***Առկա են բավական բարձր կոռուպցիոն ռիսկեր, ընդհուպ մինչև փոխկապակցված ընկերությունների մասնակցություն ՔԿՀ-ի մատակարարումներին:***
***Ներկա ընթացակարգերը ստեղծում են լրջագույն կոռուպցիոն ռիսկեր:***
***Պարզ չէ, օրինակ, հանդերձանքի որ մասն է օգտագործվում ՔԿՀ ծառայողների կողմից:***
***Գնումների հետ կապված տեղեկությունների ուսումնասիրությունը փաստում է, որ համակարգում ցածր է վերահսկողությունը, իսկ առկա ընթացակարգերը էական բարելավման կարիք ունեն: Խիստ ցածր է մասնակցությունը գնումների գործընթացին, ինչը տարօրինակ է, քանի որ միայն ՇՀ-ի շրջանակներում <u>http://gnumner.am/am/category/380/24.html</u> կայքում, որպես սննդամթերքի մատակարար, գրանցված է 233 իրավաբանական անձ, այսինքն, գնման ուղղությունը մրցակցային է, սակայն մրցակցություն չի նկատվում:***

---

[60] Առանց «Վարդաշենի»:
[61] Օրինակ՝ «ԴՀ»-ի սավանների ավելի մեծ ծախսումները հասկանալի են, սակայն այլ ՔԿՀ-ներում, որոշ դեպքերում, որևէ հիմնավորման/բացատրության չես կարող հանգել՝ բացի կոռուպցիոն ռիսկերից:

## Հավելված 2. Բուժսպասարկում

### Հիմնավորում

ՀՀ քրեակատարողական հիմնարկներում ամեն օրվա դրությամբ գտնվում է միջինը մոտ 4000 մարդ: Ազատազրկումը հաճախ զուգորդվում է ծանր հիվանդություն ձեռք բերելու ռիսկով կամ եղած հիվանդությունից լիարժեք ապաքինվելու հնարավորության կորստով: Ազատազրկման վայրում մեծ է ՄԻԱՎ,, տուբերկուլյոզ, թմրամիջոցներից կախվածություն կամ հոգեկան առողջության խնդիր ձեռք բերելու հավանականությունը: Ազատազրկված անձանց առողջության պահպանմանն ուղղված միջոցառումները դրական են ոչ միայն տվյալ անձի, այլ նաև՝ ամբողջ հասարակության համար, քանի որ նրանք վերադառնալու են հասարակություն, և նրանց պատշաճ բուժումը կնվազեցնի առողջապահության ծանրաբեռնվածությունը:[62]

Մի շարք միջազգային նորմեր սահմանում են ազատազրկված անձանց տրամադրվելիք բժշկական ծառայությունների որակը: Կարևորագույններից է Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագիրը (ՄԱԿ, 1966), որի 12-րդ հոդվածը սահմանում է յուրաքանչյուրի «ֆիզիկական և մտավոր առողջության առավել բարձր հասանելի մակարդակ» ունենալու իրավունքը:

ՄԱԿ-ի Բանտարկյալների հետ վարվեցողության հիմնական սկզբունքները[63] (1990) սահմանում են, թե ինչպես է որոշվում ազատազրկված անձանց համար առողջության առավել բարձր հասանելի մակարդակը: Մասնավորապես, փաստաթղթում նշվում է, որ առողջապահական և բժշկական ծառայությունները պետք է հասանելի լինեն ազատազրկված անձանց համար՝ առանց իրենց իրավական կարգավիճակի հետ կապված խտրականության: Այլ կերպ ասած, այն փաստը, որ մարդիկ բանտում են, չի նշանակում, որ նրանց առողջության իրավունքը որևէ կերպ սահմանափակվում է:

Ձերբակալված, կալանավորված և ազատազրկման վայրերում պատիժը կրող անձանց առողջության պահմանման և բժշկական օգնություն ստանալու

---

[62] Տե՛ս http://www.euro.who.int/en/health-topics/health-determinants/prisons-and-health/prisons-and-health

[63] Basic Principles for the Treatment of Prisoners, A/RES/45/111 (1990) http://www.un.org/documents/ga/res/45/a45r111.htm

իրավունքն ամրագրված է ՀՀ օրենսդրությամբ, մասնավորապես, «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածը նշում է, որ ազատազրկված անձինք իրավունք ունեն ստանալ բժշկական օգնություն և սպասարկում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Բացի այդ, առողջության պահպանման, ներառյալ բավարար սնունդ և բժշկական օգնություն ստանալու իրավունքն ամրագրված է ՀՀ Քրեակատարողական օրենսգրքում (հոդված 12, կետ 4) և «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքում (հոդված 13, կետ 4): Վերոնշյալ օրենսգրքի և օրենքի, համապատասխանաբար՝ 83 ու 21 հոդվածների պահանջների համաձայն՝ Կառավարությունը սահմանել է ազատազրկված անձանց բուժսանիտարական և բուժկանխարգելիչ օգնությունը կազմակերպելու, առողջապահական մարմինների բուժական հիմնարկներից օգտվելու և այդ նպատակով դրանց բժշկական անձնակազմին ներգրավելու կարգ[64]:

***Այսպիսով, ՔԿՀ-ներում բժշկական և առողջապահական ծառայությունների հասանելիության և որակի մասին խոսելիս անհրաժեշտ է հարցը դիտարկել ելնելով այն սկզբունքից, որ դրանց հասանելիությունը և որակը չպետք է տարբերվեն ազատության մեջ գտնվող և ազատազրկված անձանց համար:***

**Խնդիրներ**

Վերջին տարիներին Դիտորդական խումբը բազմիցս անդրադարձել է ՔԿՀ-ներում առկա՝ առողջապահության և բժշկական ոլորտներին վերաբերվող խնդիրներին (տե՛ս Խմբի 2009-2010, 2011-2012 և 2013 թվականների տարեկան զեկույցները): Խնդիրները վերաբերում են պատշաճ բժշկական օգնության և սպասարկման գրեթե բոլոր բաղադրիչներին, ներառյալ՝ մասնագետներով հագեցվածությանը, մասնագետների որակավորումը, գործիքային և դեղորայքային ապահովումը, լաբորատոր հետազոտությունների համար անհրաժեշտ նյութերի անբավարար քանակությունը, առողջապահական մարմինների, բուժհիմնարկների հետ համագործակցության մշակված ընթացակարգի թերությունները, բժշկական սպասարկման ծառայության կախվածությունը վարչակազմի ղեկավարից:

Հարկ է նշել, որ նախորդ զեկույցներում տեղ գտած խնդիրներն արձանագրվել են Դիտորդական խմբի 2014թ. գործունեության արդյունքում:

**Մեթոդաբանությունը**

---

[64] ՀՀ կառավարության N 825-Ն որոշում, 26.05.2006թ.:

Խումբը 2014 թվականի տարեկան զեկույցի առողջության պահպանմանը և բժշկական սպասարկմանը վերաբերող բաժինը պատրաստվել է կարգավորող փաստաթղթերի ուսումնասիրության, ՀՀ արդարադատության նախարարությանն ուղղված հարցումների պատասխանների, Դիտորդական խմբի անդամների դիտարկումների, փաստաթղթերի ուսումնասիրության և կալանավորված ու դատապարտված անձանց շրջանում իրականացված հարցման արդյունքների հիման վրա:

**Բժշկական անձնակազմի առկայությունը և մասնագիտական պատրաստվածությունը**

Քրեակատարողական հիմնարկներում բժշկական սպասարկում իրականացնող անձնակազմի համալրումը տարիներ շարունակ մնում է խնդրահարույց, ինչի մասին Դիտորդական խումբը նշել է վերջին տարիների զեկույցներում: Չլուծված է մնում նաև մասնագետների վերապատրաստման և որակավորման բարձրացման խնդիրը: Խմբի կողմից իրականացված ուսումնասիրության ընթացքում բուժաշխատողները բազմիցս նշել են վերապատրաստման, գիտելիքների և հմտությունների զարգացման հնարավորության անհրաժեշտության մասին:

Կարելի է ակնկալել, որ շրջանառության մեջ դրված և առաջին ընթերցումն անցած՝ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքում առաջարկվող փոփոխությունների փաթեթը, որը նախատեսում շարունակական մասնագիտական զարգացման համակարգի ներդրում, որոշակիորեն կլուծի մասնագիտական պատրաստվածության խնդիրը ինչպես առողջապահական ոլորտում, այնպես էլ՝ ՔԿՀ-ներում:

**Բժշկական օգնության հասանելիություն**

Հարցումն իրականացվել է 117 կալանավորված ու դատապարտված անձանց շրջանում: Նրանցից միայն 3-ն են նշել, որ ազատազրկման մեջ գտնվելու ընթացքում բժշկական օգնության դիմելու կարիք չեն ունեցել, ինչը վկայում է քրեակատարողական համակարգում բուժսպասարկման կարևորության մասին:

Հարցմանը մասնակցած 117 ազատազրկված անձանցից 51-ը նշել է իր մոտ քրոնիկական որևէ հիվանդության առկայություն, նրանցից 17-ը նշել է երկու հիվանդություն, իսկ 9-ը նշել է երեք հիվանդության համակցություն:

*Ազատազրկված անձանց մոտ առկա հիվանդությունների քանակը*




Այն հարցին, թե ինչպես են գնահատում բժշկական սպասարկման որակը ՔԿՀ-ում, հարցմանը մասնակցած ազատազրկված անձանցից միայն 14%-ն են պատասխանել են «վատ» և «շատ վատ»: Գերակշռող մասը բժշկական սպասարկման որակը գնահատել է «միջին» կամ «լավ»: Նախորդ տարիներին իրականացված նմանատիպ գնահատման ժամանակ ևս մեծամասնությունը բժշկական ծառայության որակը գնահատել է «միջին»:

*Բժշկական սպասարկման որակի գնահատումն՝ըստ ազատազրկված անձանց*




ՀՀ օրենսդրությունը երաշխավորում է կալանավորված անձանց և դատապարտյալների համար բժշկական օգնություն հասանելիությունը ՔԿՀ-ում գտնվելու ընթացքում՝ ցանկացած պահի և առանց խոչընդոտների: Որպես հասանելիության քանակական ցուցանիշ, ընտրվել է բուժօգնության դիմելու և

բժիշկի կամ այլ բուժաշխատողի այցի միջև ընկած ժամանակահատվածը: Այն հարցին, թե վերջին անգամ, ե՞րբ եք զանգատ ներկայացրել ՔԿՀ-ի աշխատակցին, և որքա՞ն ժամանակ անց է հրավիրվել բժիշկ կամ այլ բուժաշխատող, հարցվածների գերակշռող մեծամասնությունը նշել է, որ սպասել է 1 ժամից ավելի քիչ, որը կարելի է համարել բավարար ցուցանիշ:

*Բուժօգնության դիմելու և բուժաշխատողի այցի միջև ընկած ժամանակահատվածը*




Մտահոգիչ է այն, որ հարցվողների 14%-ը նշել է, թե իր զանգատների հիման վրա բուժաշխատող ընդհանրապես չի հրավիրվել: Ցավոք, հարցման ձևաչափը հնարավորություն չի տվել պարզելու, թե ինչո՞ւ բուժաշխատող չի հրավիրվել, ինչպես նաև որևէ օրինաչափություն չկա այս կամ այն ՔԿՀ-ի հետ կապված: Խնդիրը պահանջում է պատճառների լրացուցիչ ուսումնասիրություն:

Առողջապահական և բժշկական ծառայությունների հասանելիության աստիճանի որոշման համար, որպես չափանիշ, կիրառվել է նաև բժշկական զննությունների պարբերականությունը: «Ի՞նչ պարբերականությամբ եք անցնում բժշկական զննություն» հարցին տրված պատասխանների համաձայն՝ հարցվողների մեծամասնությունը բժշկական զննություն անցնում է տարեկան առնվազն 2 անգամ, ինչը կարող է համարվել բավարար և համեմատելի է ազատության մեջ գտնվող քաղաքացիների համար առաջնային բժշկական ծառայության հասանելիության հետ:

*Բժշկական զննություն անցնելու պարբերականությունը*




Սակայն, բժշկական զննության լիարժեքությունը մնում է խնդրահարույց: Որոշ բժշկական հիմնարկների բժշկական սպասարկում իրականացնող անձնակազմը ամբողջությամբ համալրված չէ, իսկ «Վանաձոր» ՔԿՀ-ում բժիշկի հաստիքը թափուր է արդեն ավելի, քան 2 տարի, բայց տվյալ հիմնարկում հարցումների ժամանակ բոլորը նշել են, որ 6 ամիսը մեկ անգամ անցնում են բժշկական զննություն: Նման պատկերը կարող է կապված լինել այն հանգամանքի հետ, որ կալանավորված և դատապարտված անձիք տարեկան 2 անգամ անցնում են տուբերկուլյոզի վերաբերյալ հետազոտություն «ֆլյուորոգրաֆիկ» եղանակով:

Նախորդ զեկույցներում Դիտորդական խմբի կողմից բարձրաձայնված՝ բժշկական սպասարկման ծառայության աշխատակիցների անկախության խնդիրը մնում է արդիական: Բժիշկը հիմնարկի պետին պետք է ներկայացնի կալանավորված անձին կամ դատապարտյալին բուժական ուղղիչ հիմնարկ կամ առողջապահական մարմինների բուժական հիմնարկ փոխադրելու, կալանավորված անձանց կամ դատապարտյալներին բժշկական օգնություն ցուցաբերելու նպատակով դրանց բժշկական անձնակազմին ներգրավելու, բժշկական կոնսիլիում, խորհրդատվություն կամ բժշկական հանձնաժողովի կողմից քննարկում անցկացնելու անհրաժեշտության վերաբերյալ տեղեկատվություն և ստանա նրա համաձայնությունը, ինչի պատճառով արձանագրվում են բժշկական օգնություն ցուցաբերելու ուշացումների և, նույնիսկ, մերժման դեպքեր: Դա կապված է նրա հետ, որ վերջնական որոշումը պատկանում է հիմնարկի պետին: Անկախության սահմանափակումը վերաբերում է նաև մարմնական վնասվածքներն արձանագրելուն և ազատազրկված անձին պատժախուցից տեղափոխելու վերաբերյալ բժշկական եզրակացություն տրամադրելուն:

**Բժշկական նշանակության սարքավորումներ, պարագաներ և ծախսանյութեր**

Դիտարկման ենթարկված բոլոր ՔԿՀ-ներում առկա են սարքավորումներով և ծախսվող նյութերով ապահովվածության խնդիրներ: Հիմնարկները չունեն կամ չեն ցանկացել ներկայացնել բժշկական նշանակության սարքավորումների ցանկ: Դիտորդական խմբի անդամները սարքավորումների ցանկը կազմել են՝ հիմնվելով բժշկական սպասարկման բաժնի աշխատակցի խոսքերի վրա: Նույնը վերաբերում է ծախսվող նյութերին: Ոչ բոլոր հիմնարկներն են վարում դեղորայքի հաշվառում կամ վարում են, բայց թերի: Պատշաճ հաշվառման բացակայությունը ոչ միայն չի համապատասխանում ՀՀ կառավարության 26.05.2006թ. N 825-Ն որոշման պահանջներին, այլ նաև անհնարին է դարձնում պահանջարկի պլանավորումը, որի հետևանքով ազատազրկված անձանց բժշկական զննումը և դեղորայքային ապահովումը կատարվում է ոչ լիարժեք: Ամենացայտուն օրինակը, որի հետ կապված իրավիճակը կրկնվում է տարեցտարի, գլյուկոմետրերի «ստրիպերի» բացակայությունն է կամ սակավությունը:

Որոշ սարքավորումներ հին են, և հիմնարկները կարիք ունեն նորը ձեռք բերելու: Օրինակ, «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ի էլեկտրասրտագրման սարքը 1967թ. արտադրության է, իսկ ախտահանիչ սարքը («սուխոժառ» վառարան)՝ 1970թ.-ի:

**Դեղամիջոցներով ապահովվածությունը**

«Դեղերի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական դեղերի ցանկում ընդգրկված դեղամիջոցների առկայությունը և մատչելիությունը երաշխավորված է: Ելնելով նրանից, որ ազատազրկված անձանց համար մասնավոր քաղաքացիական դեղատներից օգտվելու հնարավորությունը խիստ սահմանափակ է կամ նույնիսկ անհնարին, դեղամիջոցների ապահովման պարտականությունն ընկած է ՀՀ ԱՆ ՔԿՎ վրա:

Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ կալանավորված անձանց և դատապարտյալների 1/3 է ամբողջովին ստանում իրեն անհրաժեշտ դեղորայքը: Մեծ մասը ստանում է մասամբ կամ ընդհանրապես չի ստանում և ստիպված է լինում դիմել հարազատների և ընկերների օգնությանը:

*Հարց. Արդյո՞ք ՔԿՀ բժշկական սպասարկման ստորաբաժանումը տրամադրում է Ձեզ անհրաժեշտ դեղորայքը*

Ընդհանուր ընտրանքի մեջ




Քրոնիկ հիվանդություն նշած հարցվողների մեջ




Առանձնակի ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ հարցվողներից 10-ը (8.5%) նշել են, որ ստիպված են եղել վճարել ՔԿՀ-ում ստացած դեղամիջոցների դիմաց:

Կարելի է ենթադրել, որ ՔԿՀ-ներում գտնվող անձանց դեղամիջոցներով ապահովվելու խնդիրը կապված է դեղամիջոցների պահանջարկի ձևավորման, դեղամիջոցների մատակարարման պլանավորման թերություններով, որի մասին վկայում է նաև այն, որ տարբեր ՔԿՀ-ների կողմից 1 տարվա ընթացքում ստացված դեղորայքի արժեքն, ըստ մեկ անձի, տարբերվում է ընդհուպ մինչև 4 անգամ: Ստորև ներկայացված աղյուսակի թվերը հաշվարկված են հետևյալ կերպ. 2014 թվականի ընթացքում տվյալ ՔԿՀ-ի կողմից ստացված դեղորայքի ամբողջ գումարը բաժանվել է 01.01.2014թ. և 01.01.2015թ. դրությամբ տվյալ հիմնարկում գտնվող կալանավորված անձանց և դատապարտյալների միջին թվին[65]:

[65] «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ի տվյալները հաշվի չեն առնված:




Գումարների տարբերության և ՔԿՀ-ի մեծության մեջ չկա որևէ կապ: Օրինակ. «Վանաձոր» և «Հրազդան» ՔԿՀ-ները, որտեղ գտնվող ազատազրկված անձանց թիվը համեմատելի է միմյանց հետ, 2014 թվականի ընթացքում մեկ անձի հաշվով ստացել են համապատասխանաբար 6146 և 1979 դրամի դեղորայք:

**ՄԻԱՎ-ի կանխարգելումը քրեակատարողական հիմնարկներում**

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության բժշկական սպասարկման բաժնի համակարգման ներքո 9 ՔԿՀ-ում 3068 կալանավորված անձ և բանտարկյալ ստացել է ՄԻԱՎ-ի կանխարգելման ծառայությունների նվազագույն փաթեթը (խորհրդատվություն և տեղեկատվական նյութ), տրամադրվել են 27.061 պահպանակ, 19.541 ներարկիչ, 5958 տեղեկատվական-կրթական նյութ: 7 ՔԿՀ-ներում իրականացվող մեթադոնային փոխարինող բուժման ծրագրում ընդգրկված՝ թմրամիջոցների ներերակային օգտագործողների (ԹՆՕ) թիվը դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 131:[66]

«Մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդության կանխարգելման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ կալանավորված անձանց և դատապարտյալներին բուժաշխատողի նախաձեռնությամբ տրամադրվում է ՄԻԱՎ-ի վերաբերյալ խորհրդատվություն և հետազոտություն: Հարցմանը մասնակցած և «արդյո՞ք ձեզ առաջարկել են հետազոտվել ՄԻԱՎ-ի վերաբերյալ» հարցին պատասխանած 110 անձից միայն 66-ն է դրական պատասխանել: Հաշվի առնելով այն, որ ազատազրկված անձիք համարվում են ՄԻԱՎ-ով վարակվելու նկատմամբ խոցելի խումբ և որ ՄԻԱՎ-ի վերաբերյալ խորհրդատվության

[66] 2014 թվականին ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման ազգային ծրագրի շրջանակներում իրականացված միջոցառումների հիմնական արդյունքների վերաբերյալ զեկույց:

նպատակներից մեկը հանդիսանում է հիվանդության և դրա կանխարգելման մասին տեղեկատվության տրամադրումը, միայն 60%-ի դեպքում խորհրդատվություն իրականացնելը չպետք է դիտարկվի բավարար ցուցանիշ:

*Հարց. Արդյո՞ք ձեզ առաջարկել են հետազոտվել ՄԻԱՎ-ի վերաբերյալ*




2014 թվականի ընթացքում 549 ազատազրկված անձ անցել է ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն:

Տարեկան կտրվածքով ՔԿՀ-ներում գտնվում է միջինում 15-20 ՄԻԱՎ վարակակիր կալանավոր և դատապարտյալ: ՄԻԱՎ վարակակիր ազատազրկված անձանց հակառետրովիրուսային բուժումն ու բուժման վերահսկումը իրականացվում է համատեղ՝ ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի և քրեակատարողական ծառայության բժշկական սպասարկման բաժնի մասնագետների կողմից: Դեղամիջոցների տրամադրումը և համապատասխան լաբորատոր հետազոտություններն իրականացվում են «ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի գլոբալ հիմնադրամի» միջոցներով:

**Թմրամիջոցներից կախվածություն և մեթադոնային փոխարինող բուժում**

Անազատության պայմանները, կալանավորված անձանց և դատապարտյալների սոցիալ-հոգեբանական վիճակը նպաստում են ՔԿՀ-ներում թմրամիջոցների ու ափիոնատիպ նյութերի օգտագործմանը: Հարկ է նշել, որ հիմնարկներում հայտնվում են ինչպես արդեն իսկ նման նյութեր օգտագործող անձինք, այնպես էլ նրանք, ովքեր նախկինում չեն օգտագործել, սակայն, հայտնվելով ՔԿՀ-ում, սկզբից փորձում, ապա կախվածության մեջ են ընկնում թմրամիջոցներից: Նույն այդ պայմաններն ու ափիոնատիպ նյութերի ու թմրամիջոցների օգտագործումը

նպաստում են օգտագործողների շրջանում վիրուսային հեպատիտների, տուբերկուլոզի, այլ վարակային հիվանդությունների ու բարդությունների տարածմանն ու խորացմանը, ինչը համակարգային խնդիր է դառնում: Ավելին, թմրամիջոցների օգտագործումը լրջորեն ազդում է նաև կոռուպցիոն ռիսկերի մեծացման վրա, ինչը մեկ այլ համակարգային խնդիր է:

Ազատազրկված անձանց շրջանում իրականացված հարցման ժամանակ 23%-ը նշել է, որ ունի կախվածություն թմրամիջոցներից: Չնայած որ հարցվողների ընտրանքը ներկայացուցչական չէր և ստացված տվյալները չեն կարող ճշտությամբ արտացոլել իրական պատկերը, սակայն, անվիճելի է այն, որ թմրամիջոցների օգտագործումը հանդիսանում է ուշադրության արժանի լուրջ խնդիր:

*Հարց. Ունե՞ք կախվածություն թմրամիջոցներից*




Հարցմանը մասնակցած ազատազրկված անձանցից 16-ը նշել են, որ կալանավայրում գտնվելու ընթացքում ունեցել են զրկանքի համախտանիշ: Նրանցից 12-ը վատ ինքնազգացողության մասին հայտնել է ՔԿՀ-ի աշխատակցին, որից միայն 4-ն են նշում, որ ստացել են պատշաճ բժշկական օգնություն: 5-ը նշում է, որ ստացված օգնությունը չի նպաստել ինքնազգացողության լավացմանը, իսկ 3-ի խոսքերով՝ իրենք որևէ բժշկական օգնություն չեն ստացել: Չնայած նման դեպքերը մեծ թիվ չեն կազմում, խնդիրը, սակայն, պահանջում է լուրջ ուշադրություն, որովհետև, ըստ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի, ազատությունից զրկված անձին զրկանքի վիճակում առանց մասնագիտական օգնության թողնելը կարող է դիտարկվել որպես խոշտանգում կամ դաժան

վերաբերմունք՝ զրկանքի ժամանակ առաջացած հոգեբանական և ֆիզիկական ցավի և տառապանքների պատճառով:[67]

Միջազգային պրակտիկայում ընդունված՝ թմրամիջոցներից կախվածության բուժման արդյունավետ եղանակներից մեկը՝ մեթադոնային փոխարինող բուժումը 2010 թվականից հասանելի դարձավ ՀՀ ՔԿՀ-ներում: 2014թ. ընթացքում քրեակատարողական համակարգում մեթադոնային փոխարինող բուժման հասանելիությունը զգալիորեն աճել է: Այն տրամադրվում է 7 հիմնարկում և դիտարկվող տարվա ընթացքում բուժում ստացողների թիվը աճել է գրեթե 3 անգամ՝ հասնելով 131-ի: Սակայն, Դիտորդական խմբի նախորդ տարվա զեկույցում մատնանշված խնդիրները լուծում չեն ստացել, ինչը, որոշ չափով, կապված է միջոցների սակավության և մեթադոնային փոխարինող բուժման ազգային ուղեցույցի՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) առաջարկներին չհամապատասխանելու հետ:

Առկա խնդիրներից ուշագրավ են հետևյալները.

- Բուժման ծրագրում ընդգրկվելու մասին որոշումը կայացվում է հանձնաժողովի կողմից, որի կազմում բժիշկներից բացի ընդգրկված են ՔԿՀ-ի վարչակազմի ներկայացուցիչներ, ինչ հակասում է ԱՀԿ-ի առաջարկին, ըստ որի՝ մեթադոնային փոխարինող բուժում տրամադրելու որոշումը պետք է կայացվի բժիշկի և հիվանդի կողմից՝ ելնելով բժշկական ցուցումներից:

- Հանձնաժողովի կազմում ոչ բժիշկների առկայությունը և ազգային ուղեցույցի անկատարությունը բերում են նրան, որ դիմումը կարող է մերժվել սխալ հիմնավորմամբ կամ առանց որևէ հիմնավորման:

- Բուժման ծրագրի մեջ ընդգրկվելու համար դիմում ներկայացնելու և փաստացի բուժում ստանալու միջև ժամանակահատվածը կարող է տևել մինչև 4 շաբաթ, ինչը նշանակում է, որ անձը կա՛մ պետք է տառապի զրկանքից, կա՛մ դիմի անօրինական քայլերի ՔԿՀ-ում թմրամիջոց հայթայթելու համար:

- Չնայած ՔԿՀ-ներում մեթադոնային փոխարինող բուժում ստացողների թվի կտրուկ աճին, այն դեռ հասանելի չէ կարիք ունեցողների մեծամասնության

---

[67] Concluding observations (2015) CCPR/C/RUS/CO/7 (էջ 6) http://tbinternet.ohchr.org/_layouts/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CCPR/C/RUS/CO/7&Lang=En

համար: Ըստ ԱՀԿ փորձագիտական առաքելության գնահատականի՝ 300 ազատազրկված անձ կարիք ունեն մեթադոնային փոխարինող բուժման:

- Մեթադոնային բուժման ընթացքում կարևորվում է նաև հոգեբանի և սոցիալական աշխատողի կողմից հիվանդի հետ իրականացվող պարբերական աշխատանքները, մինչդեռ քրեակատարողական հիմնարկներում նման աշխատանքները փաստացիորեն բացակայում են:
- Մեթադոնային փոխարինող բուժումը չի դիտարկվում որպես թմրամիջոցներից կախվածության ինքնուրույն և արդյունավետ բուժման եղանակ: Այն դիտարկվում է որպես ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հակազդման ծրագրի բաղադրիչ՝ վնասի նվազեցման համատեքստում, և, որպես հետևանք, անտեսվում են բուժման այս եղանակի այնպիսի արդյունքներն, ինչպիսիք են անձի սոցիալ-հոգեբանական վիճակի կայունացումը, ֆիզիկական առողջության բարելավումը, բժշկի հսկողության ներքո դեղաչափի կարգավորումը, գերդոզավորումների կանխարգելումը:

Թմրամիջոցների ապօրինի շրջանառության կրճատումը, որին նպաստում է մեթադոնային փոխարինող բուժման ծրագրի ընդլայնումը, առավել արդիական է քրեակատարողական համակարգում, որտեղ թմրամիջոցների շրջանառությունն անմիջականորեն կապված է կոռուպցիոն դրսևորումների հետ:

Առաջարկություններ

- ՔԿՀ-ներում բժիշկների անկախությունն ապահովելու համար բուժծառայությունն ընդգրկել ՀՀ առողջապահության նախարարության համակարգում:
- Յուրաքանչյուր ՔԿՀ-ի բժշկական սպասարկման բաժնի կամ բաժանմունքի կամ խմբի ղեկավարին ընձեռել հնարավորություն ինքնուրույն որոշելու կալանավորված անձի և դատապարտյալի՝ այլ բժշկական հիմնարկ տեղափոխելու հարցը՝ կախված բժշկական անհրաժեշտությունից:
- ՔԿՀ-ներում պատշաճ կերպով իրականացնել բժշկական սարքավորումների գույքագրումը, բժշկական նշանակության ծախսանյութերի և դեղորայքի սպառման հաշվառումը:
- Քայլեր ձեռնարկել և միջոցներ հատկացնել գույքագրման արդյունքում հայտնաբերված պահանջների բավարարման համար:
- Ուսումնասիրել դեղորայքի և ծախսանյութերի պահանջարկի պլանավորման և ՔԿՀ-ների մեջ բաշխման հետ կապված խնդիրները և մշակել դրանց լուծման ուղիներ:
- Միջոցներ ձեռնարկել ապահովելու, որպեսզի հիմնարկի վարչակազմը պատշաճ արձագանքի ազատազրկված անձանց կողմից իրենց առողջական վիճակի մասին բարձրաձայնված բողոքներին:
- Բացառել թմրամիջոցներից զրկանքի մեջ գտնվող ազատազրկված անձին առանց պատշաճ բժշկական օգնության թողնելու դեպքերը:
- Բժշկական օգնության կարիքի գնահատման իրավասությունը հանձնել միմիայն բուժաշխատողներին:
- Մեթադոնային փոխարինող բուժման ծրագրում ընդգրկվելու գործընթացը կազմակերպել ԱՀԿ առաջարկներին[68] և մեթադոնային փոխարինող բուժման ազգային ուղեցույցին համապատասխան:
- Մեթադոնային փոխարինող բուժման համար դիմելու և բուժումը սկսելու ժամանակահատվածի տևողությունը համապատասխանեցնել ԱՀԿ առաջարկներին:

[68] Guidelines for the psychosocially assisted pharmacological treatment of opioid dependence, WHO, 2009

- Բժիշկների վերապատրաստման ծրագրերին լիարժեք մասնակցություն ապահովելու համար ՔԿՀ-ների բժիշկներին ինտեգրել ՀՀ առողջապահության նախարարության վերապատրաստման ծրագրերում::
- Պարբերաբար կազմակերպել տարբեր բժիշկ մասնագետների այցելություններ ՔԿՀ-ներ, ինչպես նաև՝ պայմանագրեր կնքել այլ քաղաքացիական բուժհաստատությունների հետ:

# Մեկնաբանություններ. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի 2014-2015 թվականների գործունեության տարեկան հաշվետվության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության մեկնաբանություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0010 Երևան, Վազգեն Սարգսյան 3/8, հեռ. 594013
էլ. փոստ suren.krmoyan@justice.com

N 04/16.2/10899-16
«29» 08 2016 թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ԽՄԲԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ ԱՐԱՅԻԿ ԶԱԼՅԱՆԻՆ**

**Հարգելի պարոն Զալյան**

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի նախագահի՝2016 թվականի մայիսի 19-ին ՀՀ արդարադատության նախարարություն հասցեագրված թիվ 16-29 գրության կապակցությամբ հայտնում ենք, որ հաշվետվությունում ներկայացված առաջարկությունները քննարկվել են ՀՀ արդարադատության նախարարությունում:

Ներկայացված առաջարկությունների հետ կապված տեղեկացնում ենք, որ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների ընդհանուր բնակելի մակերեսը բավարար է ՀՀ քրեակատարողական օրենսդրությամբ սահմանված յուրաքանչյուր դատապարտյալի համար 4 քմ բնակելի տարածք ապահովելու համար: ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում գերբնակեցման հետ կապված խնդիրների առաջացումը հիմնականում կապված է կալանավորված անձանց և դատապարտյալների միմյանցից առանձին պահելու օրենսդրությամբ նախատեսված իրավակարգավորումների հետ: Հարկ է նշել, որ գերբեռնվածության խնդիրը ՀՀ քրեակատարողական հիմնարկներում առկա է եղել բացառապես «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում: Սակայն նշված խնդիրը աստիճանաբար լուծվում է, հետևյալ կերպ՝

ՀՀ արդարադատության նախարարության «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի բոլոր մասնաշենքերի ամբողջական շահագործումից հետո՝ 2015 թվականի դեկտեմբերի 15-ից մինչ օրս, ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն»

քրեակատարողական հիմնարկից ՀՀ արդարադատության նախարարության «Արմավիր» քրեակատարողական հիմնարկ են տեղափոխվել անազատության մեջ պահվող շուրջ 200 անձինք: Այս գործընթացը կշարունակվի մինչև ՀՀ արդարադատության նախարարության «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի ամբողջական լրակազմի համալրումը, որը նախատեսված է իրականացնել մինչև 2016 թվականի ավարտը:

2016 թվականի փետրվար 16-ին փոփոխություններ են կատարվել ՀՀ արդարադատության նախարարի 2012 թվականի փետրվարի 28-ի թիվ 30-Ն հրամանում, որի արդյունքում ՀՀ արդարադատության նախարարության «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում ավելացվել է կալանավորված անձանց պահելու վայրի լրակազմը ևս 160-ով՝ հասցնելով 200-ի, իսկ ՀՀ արդարադատության նախարարության «Հրազդան» քրեակատարողական առաջին անգամ նախատեսվել է կալանավորված անձանց պահելու վայր՝ 80 լրակազմով, որի արդյունքում 2016 թվականի մարտի 1-ից շարունակաբար ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկից ՀՀ արդարադատության նախարարության «Հրազդան» քրեակատարողական հիմնարկ են տեղափոխվել շուրջ 40 կալանավորված անձինք:

ՀՀ արդարադատության նախարարությունը ներկայումս իրականացնում է համապատասխան աշխատանքներ գերբնակեցված քրեակատարողական հիմնարկներում առկա խնդիրները լուծելու ուղղությամբ:

Պատժի կրման պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտի բարելավման հետ կապված հայտնում ենք, որ ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվել և ներկայումս քննարկման փուլում են գտնվում «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերը: Նախագծերի նպատակն է կատարելագործել պատժից պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտը: Մասնավորապես՝ նախագծերով նախատեսվում են՝

1) սահմանել հստակ և իրական չափանիշներ (օրինակ՝ կարգապահական տույժի, դատապարտյալի կողմից նոր հանցագործություն կատարելու վտանգի բացակայությունը, տուժողին պատճառված վնասի հարթումը և այլն), որոնք պետք է հաշվի առնվեն դատապարտյալին պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու հարցի լուծման ընթացքում,

2) դատապարտյալին վերապահել մի շարք իրավունքներ, որոնք ուղղված են իրեն վերաբերող որոշման կայացմանը՝ վարչական և անկախ հանձնաժողովներում ներկա գտնվելուն, ինչպես նաև համապատասխան կառուցակարգերի միջոցով իր «պաշտպանությունն» իրականացնելուն,

3) դատապարտյալին վերապահել հանձնաժողովների կողմից կայացված որոշումների դատական կարգով բողոքարկման հնարավորություն:

Ինչ վերաբերում է պատժից պայմանական վաղաժամկետ ազատման հիմնական սկզբունքներին, մասնավորապես՝ դատապարտյալների՝ պատժից պայմանական վաղաժամկետ ազատվելու ենթակա լինելու համար պատժի կրման նվազագույն ժամկետներին, քննարկվող ինստիտուտի՝ բոլորի, այդ թվում՝ ցմահ ազատազրկման դատապարտյալների նկատմամբ կիրառմանը, ապա հարկ եմ համարում նշել, որ այդ հարցերը ներկայումս կարգավորված են ՀՀ քրեական և քրեակատարողական օրենսգրքերով: Բացի այդ՝ համապատասխան իրավական կարգավորումներ են նախատեսված նաև պատժից պայմանական վաղաժամկետ ազատման վերաբերյալ որոշում կայացնող մարմնի կողմից դատապարտյալին պայմանական վաղաժամկետ ազատելը մերժելու կամ դրա քննարկումը հետաձգելու դեպքում հստակ և ողջամիտ ժամկետում հարցը վերանայելու համար (ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 114-րդ, 115-րդ, $115^{1}$-րդ և 116-րդ հոդվածներ):

Անդրադառնալով անկախ հանձնաժողովների կազմի և դրանց որոշումների բովանդակությանը, ինչպես նաև ենթահանձնաժողովների աշխատանքի չկանոնակարգված լինելու վերաբերյալ հարցերին՝ հարկ եմ համարում տեղեկացնել, որ հիշյալ խնդիրների կանոնակարգման ուղղությամբ ներկայումս ՀՀ արդարադատության նախարարությունում իրականացվում են ուսումնասիրություններ և քննարկումներ՝ առավել համապարփակ իրավական կարգավորման կառուցակարգ ապահովելու համար:

Դատապարտյալների և կալանավորված անձանց բնակության պայմանների բարելավման կապակցությամբ հայտնում ենք, որ ՀՀ արդարադատության նախարարության կողմից շարունակական աշխատանքներ են իրականացվում քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց բնակության պայմանների բարելավման նպատակով: Հաշվետվությունում նշվում է, քրեակատարողական հիմնարկներում խցերի մի մասը գտնվում են գերազանց կամ բարվոք վիճակում իսկ մյուս մասը ոչ բարվոք վիճակում են: Այս դիտարկման հետ կապված հայտնում ենք, որ քրեակատարողական հիմնարկներում գերազանց կամ բարվոք վիճակում գտնվող խցերի գերակշիռ մասը (կացարանները) վերանորոգվել են դատապարտյալների միջոցներով: ՀՀ օրենսդրության պահանջների համապատասխան (ՀՀ կառավարության 2006թ. թիվ 1543-Ն որոշում) դատապարտյալներն ու կալանավորված անձինք իրավունք ունեն օրենսդրությամբ չարգելված ցանկացած միջոցներով բարեկարգել կամ կահավորել իրենց բնակելի խցերն ու կացարանները (դրանք հիմնականում արտահայտվում են կենցաղային իրեր, տեխնիկայի և կահույքի միջոցով բնակելի խցերը կահավորելով):

Միաժամանակ ՀՀ քրեակատարողական ծառայության կողմից շարունակաբար իրականացվում են ծավալուն շինարարական և բարեկարգման աշխատանքները,

որոնք ուղղված են կալանավորված անձանց և դատապարտյալների բնակության պայմանների բարելավմանը: Մասնավորապես.

1. Քրեակատարողական հիմնարկներում ակտիվորեն իրականացվում են սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային գործողությունների բարելավմանն ուղղված աշխատանքներ՝ քրեակատարողական հիմնարկների խոհանոցների, բուժմասերի և կացարանների ախտահանման նպատակով: Առաջին անգամ 2015 թվականին բոլոր քրեակատարողական հիմնարկների ճաշարաններում, խոհանոցներում և բուժմասերում իրականացվել են դեզինֆեկցիոն աշխատանքներ (միջատների դեմ), որպիսիք նախկինում երբևէ չեն իրականացվել: Հիշյալ աշխատանքները կրում են շարունակական բնույթ, ինչի արդյունքում էականորեն բարելավվել է անազատության մեջ պահվող անձանց բնակության պայմանները:

2. 2015 թվականի ընթացքում իրականացվել են բազմաթիվ և բազմաբնույթ շինարարական աշխատանքներ բոլոր քրեակատարողական հիմնարկների բնակելի տեղամասերում, կարճատև և երկարատև տեսակցությունների սենյակներում, բուժմասերում, ճաշարաններում, սանհանգույցներում և կարևորություն ներկայացնող այլ տեղամասերում, այդ թվում՝

✓ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում ամբողջովին վերանորոգվել է խոհանոցը, մասնակի վերանորոգվել են սանհանգույցները, արտաքին կոյուղու ցանցը:

✓ Մեկնարկել է Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի միջև կնքված պայմանագրերի շրջանակներում էներգախնայողության ծրագիրը, որի արդյունքում լուծվելու են կալանավորված անձանց և դատապարտյալների բնակելի տեղամասերի լուսավորության, սենյակների ջեռուցման, տանիքների ջրամեկուսացման, ինչպես նաև պատշաճ սանիտարահիգիենիկ պայմանների ապահովման հարցերը: «Հրազդան» քրեակատարողական հիմնարկում էներգախնայողության ծրագրով նախատեսված աշխատանքներն արդեն իսկ ավարտվել են:

✓ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկում վերանորոգվել են բնակելի գոտու թերապևտիկ բաժանմունքի ընդհանուր օգտագործման խոհանոցը և հիվանդասենյակը, վիրաբուժական բաժանմունքի վիրահատարանը, թոքախտաբանական բաժանմունքի մի շարք հիվանդասենյակներ:

✓ «Հրազդան» քրեակատարողական հիմնարկում կապիտալ վերանորոգվել է արտաքին ջրամատակարարման ցանցը:

✓ Վերանորոգման աշխատանքներ են իրականացվել և իրականացվում «Կոշ» և «Սևան» քրեակատարողական հիմնարկների խոհանոցներում:

✓ «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկում հիմնովին վերանորոգվել են երկու ջեռուցման կաթսաների մարտկոցները: Ընթացիկ նորոգման աշխատանքներ են իրականացվել բնակելի գոտու կացարաններում: Հարդարման աշխատանքներ են իրականացվել երկարատև տեսակցության սենյակներում: Վերանորոգվել է ճաշարանի մասնաշենքի տանիքը:

✓ «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկում հարդարման աշխատանքներ են իրականացվել հանրակացարաններում և ընթացքի մեջ է սանհանգույցների վերանորոգման աշխատանքները:

Քրեակատարողական հիմնարկներում սննդի և անձնական հիգիենայի պարագաների հասանելիության և որակի հետ կապված Խմբի կողմից առաջարկվում է՝ վերանայել ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց տրամադրվող սննդի օրական միջին չափաբաժինները, հանդերձանքի քանակը և դրանց շահագործման ժամկետները, անկողնային ու հիգիենիկ պարագաների քանակը և դրանց շահագործման ժամկետները սահմանող՝ ՀՀ կառավարության N 1182-Ն որոշումը: Վերանայման առաջարկության հետ կապված հայտնում ենք, որ ներկայումս ՀՀ արդարադատության նախարարության կողմից պատրաստվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության N1182-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ:Միաժամանակ հայտնում ենք, որ քրեակատարողական հիմնարկներում սննդի էներգետիկ արժեքի պահպանման հետ կապված հարցերը կարգավորվում է ՀՀ արդարադատության նախարարի 2015 թվականի հունիսի 9-ի թիվ 251-Ն հրամանով հաստատված «Ձև 1»-ում՝ մասնավորապես նախատեսված է առանձին սյունակ՝ նախատեսված կալորիականության հաշվարկի համար և ՀՀ քրեակատարողական հիմնարկներում կատարվում են համապատասխան աշխատանքներ սահմանված սննդի էներգետիկ արժեքի պահպանման համար: Ինչ վերաբերում է առողջական խնդիրներ ունեցող դատապարտյալներին կամ կրոնական և այլ առանձնահատկություններին համապատասխան դիետիկ սնունդ տրամադրելուն, ապա այդ կապակցությամբ հայտնում ենք, որ հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» օրենքը, «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1515 որոշմամբ հաստատված «Քրեակատարողական համակարգի պահպանում» ծրագիրը՝ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ սահմանված կարգով, հաստատված չափաբաժիններին համապատասխան իրականացվում է քրեակատարողական ծառայության անհրաժեշտ գնումները, ընդ որում ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք են բերվում ՀՀ պետական բյուջեից կատարվող ֆինանսավորման, դրանց նպատակային նշանակության, սահմանված չափաբաժիններին և տեխնիկական բնութագրերին համապատասխան:

Դատապարտյալներին դիետիկ սնունդով ապահովելու հետ կապված հայտնում ենք, որ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում սահմանվում է դիսպանսեր հսկողություն տարբեր հիվանդություններով տառապող

կալանավորված անձանց և դատապարտյալների նկատմամբ: Ներկայումս քրեակատարողական հիմնարկներում մոտավորապես 1400 անձ վերցված է հաշվառման տարբեր բնույթի հիվանդություններով, որոնց համար անհրաժեշտ է ապահովել դիետիկ սնունդ: Յուրաքանչյուր դիսպանսեր հսկողության վերցված կալանավորված անձի և դատապարտյալի համար բժշկագիտության բնագավառում սահմանված են թվով 15 դիետիկ սեղաններ: Բացի այդ, բավականին դժվար է պլանավորել և համապատասխան սնունդ ձեռք բերել որոշակի խումբ դիետիկ սնունդ ընդունող կալանավորված անձանց և դատապարտյալների համար, քանի որ չկան համապատասխան մեխանիզմներ պլանավորելու, թե դիետիկ սնունդ ընդունող քանի՞ դատապարտյալ պատիժ կկրի յուրաքանչյուր տարի քրեակատարողական հիմնարկներում կամ քանի՞ անձ կկալանավորվի, կկրե՞ն վերջիններս դատարանների կողմից նշանակված պատժաչափն ամբողջությամբ, թե՞ ազատ կարձակվեն օրենսդրությամբ սահմանված հիմքերով և այլն: Հարկ է նշել նաև, որ բոլոր հիվանդ դատապարտյալներին, հղի կանանց, կերակրող մայրերին և անչափահասներին տրամադրվում է սննդի հավելյալ չափաբաժիններ:

Հայտնում ենք, որ քրեակատարողական հիմնարկներում սննդի որակի ապահովման համար պատիժ կրող անձանց շրջանում անցկացվում են ուսումնական ծրագրեր, այդ թվում նաև խոհարարության: Ներկայումս քրեակատարողական հիմնարկներում սննդի պատրաստման գործընթացի մեջ ներգրավված են ոչ միայն դատապարտյալներ, այլ նաև վարձու աշխատակիցներ (խոհարարներ), իսկ դատապարտյալների մեծ մասը, որոնք չունեն խոհարարի մասնագիտություն, անցել են համապատասխան դասընթացներ և ստացել են վկայականներ:

Միաժամանակ պետք է նշենք, որ կալանավորված անձանց և դատապարտյալներին մի մասը օգտվում է հանձնուքների միջոցով ստացված սննդից և չեն օգտվում քրեակատարողական հիմնարկների սննդից: Սննդամթերքի պահեստավորման պայմանների բարելավմանը հետ կապված պետք է նշել, որ բարձրացված խնդիրը գտնվում է քրեակատարողական ծառայության ղեկավարության ամենօրյա հսկողության տակ և շահագրգիռ կազմակերպությունների հետ քննարկվում են խնդրի լուծման հնարավոր տարբերակներ (մասնավորապես՝ մասնագիտացված ընկերությունների միջոցով սննդամթերքի պահեստներ կառուցելու տարբերակը):

Հաշվետվությունում բարձրացված դատապարտյալների վերաինտեգրման խնդիրների հետ կապված հայտնում ենք, որ ՀՀ քրեակատարողական հիմնարկներում իրականացվում են շարունակական աշխատանքներ ազատազրկման դատապարտվածների վերաինտեգրման նպատակով: Ազատազրկման դատապարտվածների վերաինտեգրմանն ուղղված միջոցառումներից է դատապարտյալի դիմումի հիման վրա պատժից ազատվելու հետո աշխատանք փնտրելու մասին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Հայաստանի Հանրապետության զբաղվածության ծառայություն» գործակալության դատապարտյալի ընտրած բնակության վայրի՝ զբաղվածության տարածքային

կենտրոնին և աշխատանքի տեղավորման ծառայություններ մատուցող ոչ պետական կազմակերպություններին տեղեկացնելը՝ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնող բաժնի կողմից՝ տվյալներ հայտնելով նրա սեռի, տարիքի, աշխատունակության, կրթության և մասնագիտության վերաբերյալ:

Բացի այդ, ազատազրկման ձևով պատիժ կրող անձանց վերասոցիալականացմանն աջակցելու անհրաժեշտությամբ պայմանավորված 2015 թվականի ընթացքում՝

- ✓ Դատապարտյալների շրջանում ֆիզկուլտուրայի ու սպորտի զարգացման, առողջ ապրելակերպի դրսևորման, ինչպես նաև զբաղվածության, անձնական, մշակութային, կրթական զարգացման պատշաճ պայմանների ապահովման համար «Իրավախախտում կատարած անչափահասների հատուկ ստեղծագործական կենտրոն» ՊՈԱԿ-ի, ՀՀ ազգային կինոկենտրոնի, «Տագանկա» համույթի և այլ կազմակերպությունների հետ համագործակցությամբ կազմակերպվել են բազմաթիվ միջոցառումներ: Կալանավորված անձանց և դատապարտյալների հոգևոր պահանջմունքների բավարարման նպատակով Հայ Առաքելական եկեղեցու կողմից պարբերաբար կատարվել են այցելություններ, մկրտություններ, պատարագներ, տոնական օրերին՝ տոնակատարություններ:
- ✓ Քրեակատարողական հիմնարկներում կահավորվել են համապատասխան վայրեր, որտեղ դատապարտյալները կարող են զբաղվել սպորտով:
- ✓ Պարբերաբար կազմակերպվել են ներհիմնարկային սպորտային միջոցառումներ՝ վոլեյբոլ, ֆուտբոլ, շախմատ, դոմինո, շաշկի, բիլիարդ և այլն:
- ✓ Կալանավորված անձանց և դատապարտյալների համար քրեակատարողական հիմնարկներում և կալանավորված անձանց պահելու վայրերում պարբերաբար կազմակերպվել են մշակութային միջոցառումներ՝ համերգ, թատերական ներկայացում, կինոդիտում և այլն:
- ✓ «Իրավախախտում կատարած անչափահասների հատուկ ստեղծագործական կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ համագործակցության արդյունքում կազմակերպվել է «Ծնողական հմտություններ» թեմայով ուսուցողական դասընթացներ, որի արդյունքում «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի թվով 47 դատապարտյալներ ստացել են համապատասխան գիտելիքներ և հմտություններ ինչպես նաև դասընթացի վերջում տրամադրվել են վկայականներ:
- ✓ Կրթության և գիտության նախարարության հետ համագործակցության արդյունքում թիվ 2 արհեստագործական ուսումնարանում արհեստագործական կրթության կուրսեր են անցել «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի թվով 22 դատապարտյալներ, որոնց բոլորին տրվել են համապատասխան վկայականներ:
- ✓ «Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամի հետ համագործակցության արդյունքում թվով 96 դատապարտյալներ անցել են խոհարարական, համակարգչային, փականագործական և այլ մասնագիտացումներով հատուկ

ուսուցման կուրսեր, որի արդյունքում բոլոր դատապարտյալներին տրվել են համապատասխան վկայականներ:

- ✓ «Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամի հետ համագործակցության արդյունքում «Սևան» քրեակատարողական հիմնարկի թվով 25 դատապարտյալներ անցել են մեքենաշինության, գազի սարքավորումների տեղադրման, ինչպես նաև համակարգչային դասընթացների հատուկ կուրսեր և ստացել համապատասխան վկայականներ:

Ինչ վերաբերում է «Հանցագործ կանոններ և/կամ նորմեր խախտած և/կամ այդ կանոններով չառաջնորդվող, որոշակի հանցագործություններ կատարած, թմրամիջոցներից կախվածություն ունեցող և մեթադոնային փոխարինող բուժում ստացող ու նույնասեռական անձանց» վերաբերող խնդիրներին, ապա հարկ է նշել, որ անազատության մեջ պահվող անձանց շրջանում առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ ձևավորելու հրամայականները մշտապես գտնվում են քրեակատարողական ծառայության ղեկավարության ամենօրյա ուշադրության կենտրոնում: Բոլոր այն դեպքերում, երբ ի հայտ են գալիս քրեակատարողական հիմնարկների ներքին կանոնակարգի պահանջները դիտավորությամբ խախտողներ, դատապարտյալների շրջանում հիերարխիկ դիրքեր ստեղծելու փորձ կատարողներ, քրեակատարողական ծառայության կողմից վերջիններիս նկատմամբ կիրառվում են օրենսդրությամբ սահմանված պատասխանատվության միջոցներ: Բացի այդ ՀՀ առողջապահության նախարարության ստորաբաժանումների, ինչպես նաև հասարակական և բարեգործական (այդ թվում՝ «Բժիշկներ առանց սահմանների») կազմակերպությունների հետ՝ մշտապես համագործակցության արդյունքում իրականացվում են մեթադոնային փոխարինող բուժման միջոցառումներ, որոնց արդյունքում բարելավվել է թմրամոլության դեմ պայքարի գործընթացը:

Արգելված իրերի հայտնաբերման արդյունքում կիրառված միջոցների և կոռուպցիոն ռիսկերի գնահատման հետ կապված հայտնում ենք, որ քրեակատարողական ծառայության կողմից 2015 թվականի ընթացքում հայտնաբերված 2458 բջջային հեռախոսների դեպքերի միայն 3%-ով է իրականացվել ծառայողական քննություններ, որոնց դեպքում առկա է եղել օրենսդրությամբ ամրագրված ծառայողական քննություն հարուցելու հիմքեր: Ինչ վերաբերում է արգելված իրերով, մասնավորապես՝ բջջային հեռախոսներ հայտնաբերելու դեպքերով ծառայողական քննություններ չհարուցելու հիմնավորմանը, ապա հարկ է նշել, որ արգելված իր հանդիսացող ցանկացած առարկայի հայտնաբերման, ինչպես նաև ներքին կանոնակարգի խախտման յուրաքանչյուր դեպքում քրեակատարողական ծառայողի կողմից հիմնարկի պետի անունով ներկայացվում է զեկուցագիր, ում հանձնարարությամբ պարտադիր իրականացվում են համապատասխան ուսումնասիրություններ, մասնավորապես՝ վերցվում են բացատրություններ, անհրաժեշտության դեպքում՝ որևէ փաստի հիմնավորման կամ պարզաբանման վերաբերյալ տեղեկանքներ: Բոլոր այն դեպքերում, երբ իրականացված

ուսումնասիրության արդյունքում ի հայտ են գալիս իրավախախտմանը քրեակատարողական ծառայողի առնչության թեկուզև որոշակի կասկածներ, ապա ՀՀ արդարադատության նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի թիվ ՔՀ-46-Ն հրամանի դրույթներին համապատասխան նշանակվում և անց է կացվում ծառայողական քննություն:

Հարկ է նշել, որ քրեակատարողական հիմնարկներում արգելված իր հանդիսացող բջջային հեռախոսները հայտնաբերվում են ոչ միայն խցերում և կացարաններում իրականացված խուզարկությունների, այլև՝ քրեակատարողական հիմնարկներ ներթափանցման փորձի կանխարգելման արդյունքում, մասնավորապես՝ հանձնուքների, ինչպես նաև կալանավորված անձանց և դատապարտյալներին տեսակցության եկած հարազատների, պաշտպանների, փաստաբանների կողմից նրանց փոխանցելու միջոցով: Մասնավորապես, որպես օրինակ կարելի նշել, որ մեկ ներթափանցման փորձի կանխարգելման դեպքով հայտնաբերել մի քանի տասնյակ բջջային հեռախոսներ (օրինակ՝ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնակում 2015 թվականի նոյեմբերի 8-ին սառնարանի մեջ թվով 62, 2015 թվականի հունիսի 18-ին հանձնուքի մեջ թվով 17, «Արթիկ» քրեակատարողական հիմնակում 06.11.2015թ. տեսակցության եկած անձի մոտից թվով 16, «Արմավիր» քրեակատարողական հիմնակում 2015 թվականի հունիսի 1-ին սառնարանի մեջ թվով 7, 2015 թվականի մայիսի 8-ին սառնարանի մեջ թվով 27 բջջային հեռախոսներ և այլն): Բացի այդ 2015 թվականի ընթացքում կանխվել է արգելված իրերի ներթափանցման 130 դեպք:

Կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցառումների իրականացման հետ կապված պետք է նշենք, որ քրեակատարողական ծառայողների համար բավարար սոցիալական երաշխիքների ստեղծումը համարվում է կարևորագույն պայման քրեակատարողական ծառայողների կողմից իր լիազորությունների պատշաճ իրականացման համար: Քրեակատարողական ծառայողների աշխատավարձերի բարձրացման հետ կապված պետք է նշենք, որ 2015 թվականին իրականացվել են լուրջ միջոցառումներ՝ կապված կրտսեր խմբի շուրջ 100 ծառայողների հաստիքային միավորները սպայական հաստիքային միավորներով վերակազմակերպելու հետ, որի արդյունքում աշխատավարձի դրական տարբերությունը զգալիորեն ավելացել է: Այս գործընթացը կրում է շարունակական բնույթ և քրեակատարողական ծառայության բյուջետային հնարավորությունների սահմաններում հիշյալ նախաձեռնությունները կշարունակվեն նաև ապագայում:

ՀՀ քրեակատարողական ծառայությունում 2014-2015 թվականների ընթացքում կատարվել են կոռուպցիայի կանխարգելման հետևյալ միջոցառումներ՝

1. Ծառայողական գործունեության նկատմամբ պատշաճ հսկողությունն ապահովելու նպատակով քրեակատարողական ծառայության պետի հրամանով սահմանվել է քաղաքացիների ընդունելության կարգ: Միայն 2015 թվականի ընթացքում կազմակերպվել է 53 քաղաքացու ընդունելություն, որոնց բարձրացված խնդիրներին և հարցերին տրվել են համապատասխան լուծումներ:

2. Հանրության լայն շրջանակների հետ քրեակատարողական ծառայության անմիջական շփումն ու քրեակատարողական ծառայության գործունեության թափանցիկությունն ապահովելու նպատակով 2014 թվականի հոկտեմբերի 14-ից գործարկվել է ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության պաշտոնական կայք-էջը (www.ced.am), որն արդեն իսկ ապահովվել է շուրջ 36.000 մշտական օգտատերեր և շուրջ 190.000 այցելու:

3. Կալանավորված անձանց և դատապարտյալներին տրվող հանձնուքների, վերջիններիս հետ տեսակցությունների (կարճատև և երկարատև), իրավունքների և օրենսդրական սահմանափակումների, ինչպես նաև իրազեկվածություն պահանջող այլ ոլորտների վերաբերյալ իրավական կանոնակարգումների մասին հանրությանն իրազեկելու նպատակով՝ գործարկվել է քրեակատարողական ծառայության տեղեկատվական ձայնային պորտալը:

4. 2014 թվականի հոկտեմբերից քրեակատարողական ծառայությունում գործարկվել է արագ արձագանքման «Թեժ գիծ» ծառայությունը, որի նպատակն է արագ և օպերատիվ կերպով արձագանքել ոչ իրավաչափ վարչարարության կապակցությամբ ահազանգերին: 2015 թվականի ընթացքում ստացվել է 588 զանգ:

5. Նկատի ունենալով այն հանգամանքը, որ քրեակատարողական ծառայությունում ծառայողական քննությունները վերջին 1 տարվա ընթացքում աճել են քրեակատարողական ծառայության ներքին անվտանգության բաժնի հաստիքակազմը ավելացել է շուրջ 3 անգամ:

6. Քրեակատարողական ծառայության պետի 2015 թվականի թիվ 143-Լ հրամանով սահմանվել են քրեակատարողական վարչության կենտրոնական մարմնի կառուցվածքային ստորաբաժանումներ և քրեակատարողական հիմնարկներ ստուգայցեր կատարելու կարգն ու պայմանները (2015 թվականի ընթացքում իրականացվել են թվով 13 ստուգայցեր, որոնց արդյունքում իրականացված ծառայողական քննությամբ 5 ծառայողներ ենթարկվել են կարգապահական պատասխանատվության):

7. Քրեակատարողական հիմնարկների վարչակազմերի կողմից քաղաքացիների դիմումների նկատմամբ կամայական մոտեցումները բացառելու նպատակով՝ 2015 թվականի սեպտեմբերի 29-ի թիվ Ե40/7-4042 հանձնարարականով կանոնակարգվել են ծանրոցները, հանձնուքները և փաթեթներն ընդունելու վերաբերյալ դիմումները, օրենսդրությամբ սահմանված արգելքների դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով պատշաճ փաստաթղթավորելու իրավահարաբերությունները:

8. Քրեակատարողական վարչության պետի 2015 թվականի հունիսի 8-ի թիվ 144-Լ հրամանով կանոնակարգվել է ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում կալանավորված անձանց և

դատապարտյալների մոտ հայտնաբերված դրամի, թանկարժեք և այլ իրերի առգրավման և վերադարձման գործընթացը:

9. Քրեակատարողական ծառայության նախաձեռնությամբ 2015թ. հոկտեմբերի 22-ին լրացում է կատարվել ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշման մեջ, որը նպատակ է հետապնդում դյուրացնել կալանավորված անձանց և դատապարտյալների հարազատների կողմից վերջիններիս ծանրոցներ, հանձնուքներ և փաթեթներ բերելու գործընթացը՝ կազմակերպելով այն առցանց պատվերի եղանակով: Սկսած 2016 թվականի հունվարի 26-ից, կալանավորված անձանց և դատապարտյալների հարազատները կարող են առանց քրեակատարողական հիմնարկներ այցելելու՝ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության պաշտոնական ինտերնետային կայք-էջի (www.ced.am) միջոցով կալանավորված անձանց և դատապարտյալների ծանրոցներ, հանձնուքներ և փաթեթներ փոխանցվել նաև առցանց եղանակով: Առցանց պատվեր կատարելու գործընթացն իրականացվելու է «Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամի միջոցով: Առցանց պատվերը ստանալուց հետո ստուգվում է կալանավորված անձի կամ դատապարտյալի առկայությունը տվյալ քրեակատարողական հիմնարկում, պարզվում է կալանավորված անձի կամ դատապարտյալի դիրքորոշումը՝ պատվեր կատարող անձից ծանրոցներ, հանձնուքներ և փաթեթներ ընդունելու մասին: Քրեակատարողական օրենսդրությամբ ամրագրված իրավական արգելքների բացակայության դեպքում, առցանց պատվերի հիման վրա ձեռք բերված ապրանքները 1 աշխատանքային օրվա ընթացքում փոխանցվում են կալանավորված անձին կամ դատապարտյալին: Առցանց խանութի ծառայությունները դեռևս ներդրված են միայն ՀՀ արդարադատության նախարարության «Արմավիր» և «Արթիկ» քրեակատարողական հիմնարկներում:

ՀՀ արդարադատության նախարարությունը Եվրոպայի Խորհրդի հետ համատեղ իրականացնում է «Ամրապնդել առողջապահությունը և մարդու իրավունքների պաշտպանությունը Հայաստանի Հանրապետության քրեակատարողական հիմնարկներում» ծրագիրը, որի հիմնական նպատակներից է բարելավել ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում առողջապահության ոլորտի հետ կապված օրենսդրական և ենթաօրենսդրական դաշտը՝ ստեղծելով դատապարտյալների և կալանավորված անձանց առողջապահական իրավունքների իրացման նոր երաշխիքներ: Վերոգրյալ ծրագրի շրջանակներում՝ փորձագետների կողմից արդեն մշակվել է «Քրեակատարողական հիմնարկներում բժշկական ծառայությունների արդիականացման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը, որը դրվել է շրջանառության մեջ: Շահագրգիռ մարմինների կողմից ներկայացված դիտողությունները և առաջարկությունները գտնվում են ամփոփման փուլում:

«Ամրապնդել առողջապահությունը և մարդու իրավունքների պաշտպանությունը Հայաստանի Հանրապետության քրեակատարողական հիմնարկներում» ծրագրի շրջանակներում նախատեսվում է նաև 11 քրեակատարողական հիմնարկների բուժմասերի համար ձեռք բերել առաջնային բժշկական օգնության տրամադրման համար անհրաժեշտ ժամանակից պարագաներ և սարքավորումներ: Նշված միջոցառումը իրականացնելու նպատակով փորձագետների կողմից կազմակերպվել է այցելություն ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներ՝ բժշկական սարքավորումների ներկա վիճակին ծանոթանալու համար: Փորձագետների կողմից իրականացվել է առկա բժշկական պարագաների և սարքավորումների գնահատում, որի հիման վրա մշակվել է քրեակատարողական հիմնարկներին անհրաժեշտ բժշկական պարագաների և սարքավորումների տեսակների և քանակակազմի ցանկը: Նշված ցանկը համաձայնեցվել է ՀՀ արդարադատության նախարարության և Եվրոպայի խորհրդի երևանյան գրասենյակի հետ: Միաժամանակ, փորձագետի կողմից մշակվել է ցանկում ներառված սարքավորումների տեխնիկական նկարագրերը, որոնք ներկայացվել են ՀՀ արդարադատության նախարարության համաձայնեցմանը: Տեխնիկական նկարագրերի վերջնական լրամշակումից հետո վերոգրյալ ցանկը կներկայացվի Եվրոպայի խորհուրդ գնումների գործընթացը կազմակերպելու համար:

Միաժամանակ, նախատեսվում է ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների անձնակազմի համար կազմակերպել եվրոպական չափանիշներին համապատասխան վերապատրաստման դասընթացներ՝ առողջապահության, մարդու իրավունքների և բժշկական էթիկայի թեմաներով: Վերոնշյալ ծրագրի շրջանակներում արդեն իսկ մշակվել է «Բժշկական էթիկա և մարդու իրավունքներ» և «Առողջության խթանման և կանխարգելման միջոցառումներ» խորագրերով դասընթացները, որոնց հիման վրա կիրականացվի քրեակատարողական ծառայության շուրջ 800 աշխատակիցների վերապատրաստման դասընթացները, ինչպես նաև իրականացվել են քրեակատարողական ծառայողների վերապատրաստման ծրագրեր

Միաժամանակ հայտնում ենք, որ բժշկական սպասարկման բնագավառի պատասխանատու ծառայողների կողմից պարբերաբար իրականացվում են ուսումնասիրություններ և վերլուծություններ՝ ըստ անհրաժեշտության և պահանջարկի գնման ենթակա դեղորայքի քանակակազմն ու անվանացանկը փոփոխելու ուղղությամբ: Արդյունքում՝ քրեակատարողական ծառայությունը 2012 թվականին ձեռք է բերել 595 անվանում դեղորայք և բժշկական պարագաներ, 2013 թվականին՝ 643, 2014 թվականին՝ 293, իսկ 2015 թվականին 310 անվանում դեղորայք և բժշկական պարագաներ: Բացի այդ, 2015 թվականին տնտեսված շուրջ 16 մլն դրամի դրամական միջոցների հաշվին ձեռք են բերվել պահանջվող լրացուցիչ 41 անվանում դեղորայք և 48 անվանում բժշկական պարագաներ և սարքավորումներ: 2015 թվականի ընթացքում

ամբուլատոր ընդունելության համար դիմել է 85408 անձ, ինչը շուրջ 9.000-ով ավելի է 2014 թվականի նույն ժամանակահատվածից:

2015 թվականի ընթացքում՝

- ✓ «Արմավիր» և «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկների համար ձեռք են բերվել սոնոգրաֆիկ սարքեր:
- ✓ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկում վերանորոգվել են վարչական մասնաշենքի միջանցքը և մի շարք աշխատասենյակներ, բնակելի գոտու թերապևտիկ բաժանմունքի ընդհանուր օգտագործման խոհանոցը և հիվանդասենյակը, վիրաբուժական բաժանմունքի վիրահատարանը, թոքախտաբանական բաժանմունքի մի շարք հիվանդասենյակներ:
- ✓ «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկում ամբողջությամբ հիմնանորոգվել է ստոմատոլոգիատական կաբինետը և վերազինվել ժամանակակից ստոմատոլոգիական սարքավորումներով:
- ✓ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկում նախատեսվում է ստեղծել վերակենդանացման և ինտենսիվ թերապիայի բաժանմունք:
- ✓ Քրեակատարողական հիմնարկներում անազատության մեջ պահվող անձանց տրամադրվող բժշկական սպասարկման ծառայությունները պատշաճ կազմակերպելու և ծառայությունների որակը բարձրացնելու նպատակով ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությունը համագործակցել է ՀՀ առողջապահության նախարարության, հասարակական-բարեգործական հիմնադրամների և կազմակերպությունների հետ՝ քրեակատարողական հիմնարկների բժշկական սպասարկման ոլորտին անհրաժեշտ սարքեր ու դեղամիջոցներ ձեռք բերելու նպատակով, որը կրում է շարունակական բնույթ:
- ✓ ՀՀ արդարադատության նախարարության, ՀՀ առողջապահության նախարարության և «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» ՊՈԱԿ-ի միջև 2015 թվականի հունվարին կնքվել է համագործակցության հուշագիր:
- ✓ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պահվող կալանավորված անձանց և դատապարտյալների շրջանում տուբերկուլոզ հիվանդության կանխարգելման և հնարավոր վարակակիրների վաղօրոք հայտնաբերման նպատակով ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության պետի կողմից հաստատված ժամանակացույցով, շարժական թվային ֆլյուորոգրաֆիկ սարքով կազմակերպվում են անազատության մեջ գտնվող անձանց տարեկան 2-ական հետազոտություններ:
- ✓ Քրեակատարողական ծառայությունն աշխատանքներ է տանում քրեակատարողական հիմնարկներում պահվող կալանավորված անձանց և

դատապարտյալների ախտորոշման և բուժման գործընթացը հիվանդությունների միջազգային 10-րդ վերանայման դասակարգչի (ՀՄԴ-10) համապատասխան իրականացնելու նպատակով:

Միաժամանակ հայտնում եմ, որ ՀՀ արդարադատության նախարարությունը պատրաստակամ է Դիտորդական խմբի կողմից 2014-2015 թվականների տարեկան հաշվետվությունում բարձրացված խնդիրները դարձնել ուսումնասիրության և քննարկման առարկան և անմիջական քայլեր ձեռնարկել բարձրացված խնդիրների արդյունավետ լուծման համար:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ՍՈՒՐԵՆ ՔՐՄՈՅԱՆ

?????? ???????
Aug 29 2016 10:32 AM

Կատարող՝ Հայկ Կեսոյան
հեռ.՝ 59 40 23

Հեռ.՝ + (37498) 606 393
Էլ. Հասցե՝ prisonarmenia@gmail.com
Կայք՝ http://pmg.am/